

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

2(24). 2000

1945

**ՄԵԾ ՀԱՌԱՆԱԿԻ
ՀԻՄԻՆՀԻՆԳԱՄՅԱԿԸ**

ԱՄՅԻՆԻ 9-Ը ԾՈՒԾԻԻ ԱԶԱՏԱԳՐԱՆ ՕՐԻ Ե

9 МАЯ—ДЕНЬ ОСВОБОЖДЕНИЯ ШУШИ

MAY 9 IS THE LIBERATION DAY OF SHUSHI



**Շուշիի ապատագրումից հետո վերականգնված Ղազանչեցու եկեղեցին
Церковь Казанчецоц, восстановленная после освобождения Шуши**

Ghazanchetsots church, restorated after liberation of Shushi



ՀԱՅԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՍՉՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Լույս է տեսնում 1995 թվականից
տարին չորս անգամ

2(24) · 2000

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Կ Ո Լ Ե Գ Ի Ա

- Հարուբյումյան Մ. Հ.
(նախագահ)
Սարգսյան Ա. Ե.
(զիսափոր խմբագիր)
Արքահամբյան Մ. Ա.
Վղինեան Ռ. Ա.
Գասպարյան Վ. Ս.
Գրիգորյան Մ. Գ.
Զինեկի Ա. Վ.
Խորակյան Վ. Ս.
Կարապետյան Լ. Ս.
Հայրապետյան Վ. Ա.
Հարուբյումյան Ա. Թ.
Մարտիրոսյան Ս. Ս.
Մարտիրոսյան Լ. Ա.
Մելքոնյան Մ. Գ.
Միրզաքելյան Ա. Ռ.
Թալյան Հ. Ս.
Սարգսյան Ա. Գ.
Սարգսյան Մ. Ս.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տեր-Թադևոսյան Ա. Ի.
Քորանջյան Հ. Ս.

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

ՄԵՇ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԻՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ

Հ. Ա. Ավելիսիսյան, 20-րդ դպրի խոշորագույն պատմական իրադարձությունը	7	
Գ. Ա. Հարուբյունյան, Հայկական դիվիզիաները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945 թթ.) ...	16	
Ա. Բ. Հայրապետյան, Խորիրդային գվարդիայի ծնունդը ..	32	
Ա. Կ. Գալստյան, Սիյուռքահայերի մասնակյունությունը երկրորդ աշխարհամարտին	45	
Հ. Գ. Հովհաննիսյան, Հանուն պատմական ճշմարտության	53	
Գ. Մ. Գևարմյան, Հայաստանի մասնակյունությունը ռազմականի թիկունքային ապահովմանը	59	
Ա. Ե. Մարգարյան, ԽՍՀՄ ՌԱՀ-ի հայտքի մասնագետների ներկրությը մեծ հայթանակի մեջ	74	
ՍՊԱՅԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱԾՈՒՄ		
ԿԱՂՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՈՒԹՅՈՒՆ		
Ա. Հ. Հարուբյունյան, Սպայական անձնակազմ. բարյահոգեւանական հիմքերը	82	
Գ. Ն. Կողկարյան, Ոխումնական գործընթացի պահաժաման միասնական համակարգը և նրա կիրառման մի բանի առանձնահատկությունները ՀՀ ՊՆ ռազմական ինստիտուտում	92	
Ա Ա Զ Մ Ա Կ Ա Ն Տ Ա Ր Տ Ա Ր Ա Վ Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն		
Ռ. Հ. Թումանյան, Վ. Մ. Շահնապարյան, Արմուլի խլարքներ	99	
Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն Բ Ա Վ Ա Վ Ա Խ Ե Ն Ն Ո Ր Ո Ւ Յ Ե Ր		102
Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ր Մ Ի Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն		
Վ. Խ. Բաղդասարյան, Համարլի բառարան	104	

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 2 (24). 2000
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

М. А. Арутюнян (председатель); А. Е. Саркисян (главный редактор);
М. А. Абрамян; Р. А. Айдинян; В. А. Айрапетян; А. Т. Арутюнян;
В. С. Гаспарян; М. Г. Григорян; А. В. Зиневич; В. С. Исраелян; А. С. Карапетян;
Г. С. Команджян; А. А. Мартirosов; С. С. Мартirosyan; М. Г. Мелкоян;
Л. Р. Мирзабекян; О. С. Палян; А. Г. Саркисян; М. С. Саркисян;
Н. Г. Тер-Григорянц; А. И. Татевосов.

СОДЕРЖАНИЕ

ПЯТИДЕСЯТИПЯТИЛЕТИЕ ВЕЛИКОЙ ПОБЕДЫ

Г. А. Аветисян. Крупнейшее историческое событие XX века	7 (13)*
К. А. Арутюнян. Армянские дивизии в годы Великой Отечественной войны (1941 – 1945) гг.	16 (28)
А. Б. Айрапетян. Рождение Советской гвардии	32 (42)
С. К. Галстян. Участие армянской диаспоры во Второй мировой войне	45 (50)
Г. Г. Оганесян. Во имя исторической правды	53 (57)
Г. М. Гегамян. Участие Армении в тыловом обеспечении фронта	59 (71)
А. Е. Саркисян. Вклад армян-специалистов ВПК СССР в великую Победу	74 (80)

ОФИЦЕРСКИЙ КОРПУС. ПОДГОТОВКА КАДРОВ

С. Г. Арутюнян. Офицерский корпус. Морально-психологические устои	82
Г. Н. Кошカラян. Единая система планирования учебных процессов и некоторые особенности ее применения в военном институте МО РА	92 (97)

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

Р. Г. Туманян, В. М. Шахназарян. Глушители шума	99 (101)
---	----------

НОВОСТИ В ВОЕННОЙ ОБЛАСТИ 102

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

В. Х. Багдасарян. Словарь номера	104
--	-----

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
MILITARY-SCIENTIFIC QUARTERLY
OF THE MINISTRY OF DEFENSE OF THE REPUBLIC OF ARMENIA
N 2 (24). 2000
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

M. H. Haroutunyan (Chairman), *A. E. Sarkissyan* (Editor-in-Chief),
M. A. Abrahamyan, V. S. Gasparyan, M. G. Grigoryan, V. A. Hairapetyan,
A. T. Haroutunyan, R. A. Idynnyan, V. S. Israelyan, L. S. Karapetyan, H. S. Kotanjyan,
S. S. Martirosyan, L. A. Martirossov, M. G. Melkonyan, A. R. Mirzabekyan,
H. S. Palyan, A. G. Sarkissyan, M. S. Sarkissyan, N. G. Ter-Grigoryants,
A. I. Ter-Tadevossov, A. V. Zinevich.

CONTENTS

THE FIFTY-FIFTH ANNIVERSARY OF GREAT VICTORY

<i>H. A. Avetisyan.</i> The greatest historical event of XX century7 (14)*
<i>K. A. Haroutunyan.</i> Armenian divisions in the years of Great Patriotic War (1941 – 1945)	16 (30)
<i>A. B. Hairapetyan.</i> Birth of the Soviet Guards	32 (43)
<i>S. K. Galstyan.</i> Participation of the Armenian diaspora in the World War II	45 (51)
<i>H. G. Hovhannisyan.</i> In the name of historical truth	53 (58)
<i>G. M. Geghamyan.</i> The participation of Armenia in logistical support of front	59 (72)
<i>A. E. Sarkissyan.</i> The contribution of the Armenian experts of Military-Industrial Complex of the USSR in great victory	74 (81)

OFFICERS CORPS. TRAINING OF THE STAFF

<i>S. H. Haroutunyan.</i> Officers personnel: moral-psychological bases	82
<i>G. N. Koshkaryan.</i> The common system of planning of educational process and some peculiarities of its application in the military institute of Ministry of Defense the RA	92 (98)

MILITARY ENGINEERING

<i>R. H. Tumanyan, V. M. Shahnazaryan.</i> Silencers of noise	99 (101)
---	----------

SOMETHING NEW IN MILITARY FIELD 102

MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

<i>V. Kh. Bagdassaryan.</i> Volume dictionary	104
---	-----

* Numbers in brackets mean page of text in English.

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

Յոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ մեքենագրված երկու ինտերվալով, մինչև 15 էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինի նրա ոռուսերեն անփոփոխ մինչև 2 էջ ծավալով:

Յեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Յեղինակները պատասխանառու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Յեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խճագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, մինչև 15 էջ պետք է վերաբերեն գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Զեռագրերը հետ չեն չեն վերադարձվում:

Յոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ուսումնական հապավումները:

К сведению авторов и читателей

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 15 страниц, напечатанных в два интервала, с приложением резюме на русском языке объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

Рукописи не возвращаются.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

For the information of the authors and readers

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be double spaced and should not exceed 15 pages in length. Provide Russian summaries (2 page maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinion expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures, and photos should be of print quality.

Manuscripts are not returned.

Please explain acronyms.

1945

ՄԵԾ ՀԱՂԱՍԱԿԻ
ՀԻՄԻՆՀԻԳԱՎԱՐ

ПЯТИДЕСЯТИЛЕТИЕ
ВЕЛИКОЙ ПОБЕДЫ

THE FIFTY-FIFTH ANNIVERSARY
OF GREAT VICTORY

20-րդ դարի Խոշորագույն ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Աշխարհը, և առաջին հերթին Ռուսաստանը, 2000 թ. մայիսի 9-ին արժանավորապես նշում է երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 55-ամյակը: Այդ հաղթանակը իրավացիորեն դիտվում է որպես 20-րդ դարի պատմական խոշորագույն իրադարձությունը:

Մոսկվայում տոնական հանդեսներին մասնակցած աշխարհի բազմաթիվ երկրների պատվիրակությունների ղեկավարները միշտ էլ բարձր են գնահատել Խորհրդային Միության դերը ֆաշիզմի շախչախման գործում: Կարմիր հրապարակում և Պոլլոննայա Գորայի շրջակայրում հաղթանակի տոնակատարության արարողությունները, ԱՊՀ գըրեթե բոլոր հանրապետություններից պատերազմի վետերանների մասնակցությունը զինվորական շքերթներին, ռազմական նորագույն տեխնիկայի ցուցադրումը հաստատում են այն ճշմարտությունը, որ ոչ միայն Ռուսաստանը եղել է և մնում է հզոր երկիր, այլև նախկին ԽՍՀՄ հանրապետությունները ևս տերն են ու ժառանգորդը անցյալի սրբանքների, համատեղ լուհարերություններով ձեռքած ռազմական փառքի:

Հայտնի է, որ 1939 թ. սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիայի վորքերը հարձակվեցին Լենինատանի վրա, որով սկիզբ դրվեց երկրորդ համաշխարհային պատերազմին: 1940 թ. ապրիլի 9-ին գերմանական վորքերը մտան Դանիա և Նորվեգիա, մեկ ամիս անց՝ Բելգիա, Հոլանդիա, Լյուքսեմբուրգ: Հունիսի 22-ին հաղթողների կամքին ննթարկվեց Ֆրանսիան, որին պատերազմ էր հայտարարել նաև ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Խոտախան: 1940 թ. օգոստոսի 13-ից գերմանական բանակի օդային ուժերը

ակնեցին զանգվածաբար ուժբակոծել Անգլիայի քաղաքներն ու գյուղերը:

Տարածքային մեծ զավթումներ կատարելով, անօրինակ ավերածություններ գործելով Եվրոպայում և բայցահայտորեն ցույց տալով, թե որն է իր նպատակը, Գերմանիան շրջվեց դեպի ԽՍՀՄ: 1941 թ. հունիսի 22-ին գերմանական վորքերը հարձակվեցին Խորհրդային Միության վրա երեք ռազմավարական ուղղություններով՝ խնդիր դնելով արագընթաց երթով գրավելու Լենինգրադը (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ), կենտրոնում՝ Մոսկվան, հարավում՝ Կիևը, կըտրեկ անցնել Ուկրաինան, դուրս գալ Դոնբաս, մերձգոլգոյան տափաստաններ, Կովկաս և այլն:

ԽՍՀՄ-ի վրա հիտլերյան Գերմանիայի վորքերի ուխտադրուժ հարձակման առաջին խսկ օրվանից երկրորդ համաշխարհային պատերազմի ծանրության կենտրոնը տեղափոխվեց Խորհրդագերմանական ճակատ: Հենց այստեղ էլ որոշվում էր ոչ միայն Խորհրդային, այլև մյուս ժողովուրդների ճակատագիրը: Խորհրդային ժողովրդի պատերազմը հանդիսացավ հիրավի Հայրենական մեծ պատերազմ աշխարհի մեկ վեցերորդ մասը կազմող, 22 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք ըրադենող և շուրջ 195 միլիոն բնակչություն ունեցող երկրի բոլոր ժողովուրդների համար: Միասնական շարքերով, համախմբված հանդիս եկան ոուսն ու ուկրաինացին, հայն ու վրացին, բելոռուսն ու դապախը, իրեան ու ուկրեկը, ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները:

Այսպես երկրորդ համաշխարհային պատերազմի մի նոր փուլ, պատերազմն ընդլայնվեց՝ ընդգրկելով նոր երկրներ ու ժողովուրդներ: Գերեթե ամբողջ աշխարհը տրոհվեց երկու հակամարտ կողմերի:

Երկրորդ աշխարհամարտին ընդիմանուր առմամբ մասնակյեց մոլորակի բնակչության շուրջ 80 տոկոսը, երկու կրողմիջ հանդես եկավ 61 պետություն:

Պատերազմի հենց առաջին օրը՝ հունիսի 22-ին, Անգլիայի վարչապետ ՈՒԻՆՍտոն Չերչիլը ի լուր ամբողջ աշխարհի բացեմբաց հայտարարեց, որ Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակմամբ մկանից պատերազմի շրջադարձային փուլերից մենքը, և որ Մեծ Բրիտանիան ԽՍՀՄ-ին ցույց կտա ամեն տեսակի օգնություն: Ի պաշտպանություն Խորհրդային Միության հանդես եկավ նաև ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը: Հունիսի 12-ին Մուսկայում Խորհրդային Միության և Անգլիայի միջև ստորագրվեց ֆաշիստական Գերմանիայի դեմ պատերազմում համատեղ գործողությունների վերաբերյալ համաձայնագիր: Չերչիլը և Ռուզվելտը ԽՍՀՄ-ին օգնելու իրենց մտադրությունը կրկին հավաստեցին 1941 թ. օգոստոսի Արտանտան խարտիայով, որը հավանության արժանացավ Խորհրդային Միության ներկայացուցիչների մասնակցությամբ սեպտեմբերին Լոնդոնում կայացած միջազգային կոնֆերանսում: Անգլիան, ԱՄՆ-ը, Խորհրդային Միությունը և նրանց շուրջ համախմբված երկրները միավորվեցին՝ Գերմանիայի, Խորհրդային Հայոց աշխարհական պատերազմի մեջ մղյող պատերազմը հաղթական ավարտի հասցնելու համար: Ֆաշիզմի նկատմամբ հաղթանակ տաները ժողովուրդների կողը կամքը և կառավարող շրջանների ձգությունը՝ պահպանելու ժողովրդավարության նվաճումները պայմանագործեցին ապատական ժաշնադրության ստեղծմանը:

Ֆաշիստական վիճուպն ապատական հրամանատարությունը ԽՍՀՄ-ի դեմ նետեց տեխնիկապես լավ զինված, հանդերձավորված, պատերազմում կոփած մի հսկայական բանակ: Հանկարծակի, դա-

վադիր հարձակումը մկրնական շրջանում Գերմանիային ապահովեց ռազմական առավելություն: Դա հանգեցրեց նրան, որ Խորհրդային Միությունը պատերազմի մկրում հայտնվեց խիստ ծանր վիճակում:

Հայրենական մեծ պատերազմի առաջին փուլում (1941 թ. հունիսի 22—1942 թ. նոյեմբերի 18), կասեցնելով Լայճականյին պատերազմը և անյներով հակահարձակման, Կարմիր բանակը ի վերջո ձեռք բերեց կարևոր հաջողություններ՝ հաղթանակ Մոսկվայի մոտ, Լենինգրադի և Ստալինգրադի հերոսական պաշտպանությունը, որոնք պայմաններ ստեղծեցին Հյուսիս-աֆրիկյան, Աւուանտյան և Խաղաղօվկիանոսյան ռազմաբներում հակաֆաշիստական դաշնադրության բանակների գործողությունների համար: Կարմիր բանակի գործողությունները ոչ միայն ձախողեցին գերմանական հարձակողական պահները, այլև պայմաններ ստեղծեցին պատերազմում արմատական բնկման համար:

Հայրենական մեծ պատերազմի երկրորդ փուլը (1942 թ. նոյեմբերի 19—1943 թ. դեկտեմբերի 31) հանդիսացավ պատերազմի ընթացքի արմատական բեկման, Կարմիր բանակի պատմական հաղթանակների և զերմանական բանակի կործանարար պարտությունների փուլ: Դա նշանավորվեց նաև ռազմական արդյունաբերության արտադրանքի կտրուկ աճմամբ, խորհրդային վիճակը ուժերի ռազմական արվեստի վերելքով: Երկրորդ փուլի կարևորագույն իրադարձություններն էին Կարմիր բանակի հաղթանակները Ստալինգրադի, Կուրսկի և Կովկասի ճակատամարտերում: Ստալինգրադի ճակատամարտում գերմանական բանակի շախատավումը շրջադարձային կետ եղավ հիտլերյան Գերմանիայի դեմ պատերազմի ընթացքում: Դա արմատական շրջադարձ մկրնավորեց ոչ միայն Հայրենական մեծ պատերազմում, այլև ամերոց երկրորդ համաշխարհային պատերազմում: Կարմիր բանակի հաղթանակները նոր նպաստավոր պայմաններ ստեղծեցին ԱՄՆ-ի և Անգլիայի

փինված ուժերի համար: Եվրոպայում պակած դիմադրության շարժումն ավելի ընդլայնվեց: ԽՍՀՄ, ԱՄՆ-ի և Անգլիայի դեկավարների Թերանի կոնֆերանսում (1943 թ. նոյեմբերի 28—դեկտեմբերի 1) համաձայնություն կայացավ երկրորդ ճակատի բայցման մասին:

Հայրենական մեծ պատերազմի երրորդ փուլի (1944 թ. հունվարի 1—1945 թ. մայիսի 9) բնորոշ գծերը դարձան Խորհրդային Միության տարածքից գերմանաֆաշիստական զորքերի լրիվ դուրսքումը, Կարմիր բանակի կողմից Արևելյան և Հարավ-արևելյան Եվրոպայի ժողովուրդների պատագրումը ֆաշիստական լծից, հիտլերյան Գերմանիայի վերջնական ջախչախումը: 1944 թվականը նշանավորվեց ամբողջ Ուկրաինայի, Բելոռուսիայի պատագրմամբ, Լենինգրադի շրջափակման լրիվ վերացմամբ, Ղրիմի և այլ շրջանների պատագրմամբ: 1944 թ. գարնանը խորհրդային զորքերն անցան պետական սահմանը: Թենի զգալի ուշացումով՝ բայցից երկրորդ ճակատը: Դաշնակիցների ուժերը 1944 թ. հունիսի 6-ին ափ իջան Հյուսիսային Ֆրանսիայում՝ Նորմանդիայում, ապատագըրվեցին Ֆրանսիան ու Բելգիան:

1945 թ. ձմեռային կամապանիայի ժամանակ Կարմիր բանակի հարձակողական գործողությունները հսկոր թափ ստացան: Ալվան և իրականացվեց ֆաշիզմի լծից Արևելյան և Հարավ-արևելյան Եվրոպայի ժողովուրդների պատագրման մեծ առաքելությունը: Տեղի ունեցած հիտլերյան խմբավորման փլուզում: Ֆաշիստական Գերմանիայի մի շարք կամակատար պետություններ իրենց վենքն ուղղեցին նախկին դաշնակյա դեմ: Պատերազմի երրորդ փուլն ավարտվեց ԽՍՀՄ և նրա դաշնակիցների ինակատար հաղթանակով. 1945 թ. մայիսի 2-ին Բեռլինի անկումով ֆաշիստական Գերմանիան անձնատուր եղավ, և մայիսի 8-ին Կառլսհորստում դաշնակից երկրների ներկայացուցիչները վերմահտի պարագուխների հետ ստորագրեցին Գերմանիայի անվերապահ կապիտույսացման մասին պատմական ակտը: Դրանով պարտվեցին նաև երկրորդ համաշխարհային պատերազմը:

Եղանակական մարտական գործողությունները նվազական ռազմաքննություն, ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Դրանից հետո, հավատարիմ իր դաշնակյային պարտավորություններին, ԽՍՀՄ-ը մասնակցեց երկ-



Բեռլին 1945 թ.

բորդ համաշխարհային պատերազմի նվաթակիչ փուլին և 1945 թ. օգոստոսի 9-ից սեպտեմբերի 2-ը Հեռավոր Արևելքում խորտակիչ հարված հասցրեց Արևելյան Զինաստանում, Հյուսիսային Կորեայում, Հարավային Սահսալինում և Կուրդիստանում կորպուսներում տեղաբաշխված ճապոնական զորքերին, որոնց կորիզը կազմում էր Մանջուրիայում տեղաբաշխված Կվանտունյան մեկ միլիոնանոց բանակը: 1945 թ. սեպտեմբերի 2-ին Տոկիոյի ծովածոցում, ամերիկյան «Միսուրի» գրածավի վրա կնքվեց միջնարհատական ճապոնիայի անվերապահ կապիտույսացման ակտը: Դրանով պարտվեցին նաև երկրորդ համաշխարհային պատերազմը:

Այսպիսով՝ Խորհրդային Միության 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը, լինելով նրա պատմության ամենադժվարին ժամանակաշրջանը, մի-

աժամանակ նրա ժողովուրդների պատմության ամենահերոսական ժամանակաշրջանն էր: Աշխարհի ոչ մի ժողովուրդ չետարել այնպիսի ծանր փորձություններ, ինչպիսիք բաժին ընկան խորհրդացին ժողովրդին: ԽՄՀՄ միայն մարդկացին կորուստները կազմեցին շուրջ 27 միլիոն մարդ, որից 11,5 միլիոնը՝ մարտի դաշտում:

Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակն իր նշանակությամբ և հետևանքներով դարձավ սերունդների ճակատագիրը որոշող կարևորագույն իրադարձություն: Ֆաշիզմի զախչախման գործում վճռական դերը պատկանում է խորհրդային ժողովրդին: Պարտության մատներով կողը, բիրսու ու խարդախ թշնամուն՝ Խորհրդային Սիոնության ժողովուրդները մյուս պատասխանը ժողովուրդների հետ ամբողջ աշխարհը փրկեցին ստրկացումից, հիտլերյան «նոր կարգի» հաստատումից:

Պատերազմը յուրատեսակ խթան հանդիսացավ ԽՄՀՄ ժողովուրդների ուժերը ֆաշիզմի դեմ միավորելու համար: Հիտլերը ցանկանում էր օգտագործել ժողովուրդների ազգային ճգուտմանը, «կնատրունախույս ուժերը»: Պատերազմը, սակայն, ցույց տվեց, որ Հիտլերը սխալվում էր իր հաշիվներում: Ֆաշիստական ամբողջատիրության լծի տակ ընկնելու վտանգը՝ հակամարդկային ցեղային-ուսայական տեսության հիտլերյան քարոզությամբ հանդերձ, հանգեցրեց նրան, որ խորհրդային նրկրի ժողովուրդները միահամուռ ելան ֆաշիզմի դեմ՝ հանուն պատության և անկախության:

Հայրենական մեծ պատերազմը ուժի հանեց նաև հայ ժողովրդին: Զենքի կոչքից ավելի քան 500 հազար մարդ՝ Խորհրդային Հայաստանում և ԽՄՀՄ այլ հանրապետություններում բնակվող հայերի մեկ հինգերորդը: Պատերազմի տարիներին Հայաստանը խորհրդային վիճակած ուժերի կազմում ուներ գրեթե ամբողջին հայերով համալրված վեց դիվիզիա՝ 76-րդ (51-րդ գվարդիական), 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ

պաշտոնապես «հայկական» անվանում ստուցած դիվիզիաները: Խորհրդային Հայաստանում էին ձևավորվել կամ վերահամարվել 61-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային (ոչ ազգային) դիվիզիաները, որոնց անձնակազմի մի զգալի մասը պատերազմի տարշին շրջանում կազմում էին հայերը: Մեծ թվով հայեր ծառայության էին կանչվել կամ կամավոր ռազմաճակատ էին մեկնել Խորհրդային Հայաստանից, Արցախից, Նախիջևանից, Վրաստանից, Աղրբեջանից, Հրուսային Կովկասից, միջինասիական հանրապետություններից, Մուզվայից, Լենինգրադից և այլ քաղաքներից: Միայն Լեռնային Ղարաբաղը Կարմիր բանակին տվեց 42000 զինվոր և հրամանատար:

Հայերը կունել են ամենուրեք՝ բրեստի ամրոցում, Սոսկվայի մատուցյներում, ՈՒկրաինայում ու Ֆելոռուսիայում, Ղրիմում ու Վոլգայի ափերին, Սերձբայթյան հանրապետություններում, Լենինգրադում ու Անդրենուում՝ պաշտպանական և հարձակողական մարտերում: Նրանք արհաբար մարտնչել են ցամաքում, օդում, ծովում, աշխի ընկել պարտիզանական ջոկատներում, դիմադրության շարժման շարքերում:

Մեծ է հայ զորավարների՝ 63 գեներալների, հակամավոր սպաների ավանդը մարտի դաշտում շահած հաղթանակներում: Ռազմաճակատում մարտնչում էին հապարագոր հայ սպաներ, որոնք դեկադարում էին ստորաբաժանումներ, զորամասեր, միավորումներ: Գեներալները մասնակցում էին զորքերի մարտավարական ու ռազմավարական գործողությունների պլանների մշակման ու կնասագործմանը, դեկադարում բրիգադներ ու դիվիզիաներ, կորպուսներ, բանակներ, ռազմաճակատ, օդային և ծովային նավատորմ: Ամբողջ աշխարհին հայտնի են Խորհրդային Սիոնության մարշալ, Խորհրդային Սիոնության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանի, Խորհրդային Սիոնության՝ նավատորմի ծովակալ, Խորհրդային Սիոնության հերոս

Հովհաննես Խսակովի, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուլյակովի (Արմենակ Խան-Փերյանց), զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Սիության հերոս Համազասպ Բաբաջանյանի անունները: Իրենց փառքով ու պատվով են պատճեն Խորհրդային Սիության 108

շքանշանակիր իրածգային դիվիզիան էր, որ մարտերով Կովկասի նախալեռներից Դրիմի, Լեհաստանի վրայով հասավ Գերմանիա և իր փառապանծ մարտական ուղին ավարտեց Բեռլինում: Այդ լեզվանդար դիվիզիայի իրամանատարն էր գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը:



Հաղթանակի գորականդեսը. Մոսկվա, Կարմիր իրավարակ, 1945 թ. հունիսի 24

հայ հերոսներ և Փառքի շքանշանի բոլոր երեք աստիճանի 27 ասպետներ: Անմոռաց են հանուն հայրենիքի զոհված ավելի քան 200 հազար հայորդիների անունները, նրանք զոհվեցին ռազմա- ձակատի տարբեր հատվածներում, հանուն Հայաստանի, հանուն հայրենիքի:

ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության պարգևնատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարտական շքանշաններով ու մեդալներով (խոսքը վերաբերում է միայն «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներին) պարգևատրվել են՝ 66802 հայ, 49106 վրացի, 49106 ադրբեջանցի և այլն: ԽՍՀՄ պին- ված ուժերում գոյություն ունեցած պազային զորամիավորումներից միայն հայկական 89-րդ թամանյան եռակի

Միաժամանակ թիկունքում ռազմա- ձակատի համար արտադրվում էր ավելի քան 300 տեսակի ռազմամթերք ու հան- դերձանք, զենք: Շատ հայ մասնագետներ գլխավորում էին ռազմական գոր- ծարաններ, գիտական լարորատորիա- ներում մշակում էին զենքի նոր տե- սակներ:

Հայերի համազգային խիստությունը և հակաֆաշիստական պայքարում ակտիվ մասնակցությունն ուներ իր հա- տուկ պատճառները: Նրանք չէին մոռա- ցել և չեն մոռանա Օսմանյան Կայսրությունում Կայզերական Գերմանիայի գի- տությամբ և հովանավորությամբ 1915 թվականին առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրարված հա- յերի հրեշտակոր ցեղասպանությունը, որը ոգեշնչում էր և Հիտլերին: Վերջինս գտնում էր, ինչպես և երիտրուրքերը, որ գլխավորը ոչ թե տարածքի նվաճումն է,

այլ տնդարնակների խստա վերապումը, բնաշնչումն ու արտաքտումը: «Վերջին վերջո ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը», հայտարարել է Հիտլերը 1939 թ. օգոստոսի 22-ին՝ ելույթ ունենալով Օբերվայրուրգ քաղաքում, վիճակության ընտրանու առաջ: Հիտլերը, Գյորինգը, Ռուբենբերգը և Ֆաշիզմի մյուս պարագլուխները չեին վատահում հայերին, նրանք գտնում էին, որ Կովկասում հարկավոր է օգտագործել մի կողմից բնիկների՝ հայերի, վրայիների, ադրբենցիների և այլոց, մյուս կողմից՝ ողուսների միջն եղած հակասությունը՝ «ընդ որում հաշվի առնելով հայերի հատուկ անբարյացակամությունը գերմանացիների նկատմամբ»:

Խորհրդային Միության վրա հարձակվելու նախօրյակին՝ 1941 թ. հունիսի 18-ին, Թուրքիան և Գերմանիան կնքեցին բարեկամության և չինարձակման մասին պայմանագիր: Թուրքիային ընդգրկելով ԽՍՀՄ-ի դեմ ռազմավարական պատճենի մեջ՝ Գերմանիան ապահովեց իր զորքի աջ թերը: Թուրքիան թույլ տվեց, որ Մեծ ծով մտնեն գերմանական և իուլական ռազմանավեր: Անդիկովկասին, մասնավորապես Հայաստանին հարող տարածքներում Թուրքիան այդ ժամանակ արդեն ուներ զորքերի զգալի կուտակում: Դրանք հետագայում կազմեցին 26 դիվիզիա: Ստորինսկրադի ըստ պասվող անվումից հետո նրանք հարձակվելու էին Խորհրդային Հայաստանի վրա: Բարեքախտաբար այդ տեղի չունեցավ. ֆաշիստական զորքերին Կարմիր բանակի հասցրած ծանր հարվածները կանխեցին նաև թուրքական զորքերի ներխուժումը Կովկաս և դրանով վերացրին նոր Մեծ եղեռնի վտանգը: Պատե-

րազմի ակվորում Բեռլինում արդեն աշխատացել էր պանթյուրքիստների գործունեությունը: Նրանց կազմակերպած ժողովներին ներկա էին լինում Հիտլերը, Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆոն Պապենը և ոչ անհայտ Նուրի փաշան: Ֆաշիստական Գերմանիայի բացահայտ թուրքամեն և հակահայկական բարարականության դրսերում էր 1943 թ. վեների բնիկների Բեռլինից Ստամբուլ Թալիաթ փաշայի աճյունի մնացորդների տեղափոխումը և Թուրքիայում վերաբարելումը:

Դաշնակիցների բանակում մարտընչում էին ավելի քան 80 հազար հայեր: Չափ հայորդիներ ԱՄ-ի, Ֆրանսիայի, Բուտակայի ազգային հերոսներ դարձան: Սիյուռքահայության ուժերով ստեղծվեցին «Աստունցի Դավիթ», «Գեներալ Բաղրամյան» տանկային շարապյուները: Մեծ էր հայ եկեղեցնու դերը հակաֆաշիստական պայքարում:

Մարտնչելով ֆաշիզմի դեմ՝ հայ ժողովրդի զավակները Կովկասյան ճակատում, Ստորինսկրադում, Կուրսկի առնելում, պատերազմի հեռավոր մարտադաշտերում պաշտպանում էին իրենց հայրենիքը: Անկասկած է, որ մարտի դաշտում նրանց թափած արյան, նրանց կյանքի գնով, նրանց զանգվածային հերոսությամբ էր նաև, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանը զերծ մնաց թուրքական նվաճողների ասպատակություններից:

Ահա թե ինչու ֆաշիզմի դեմ տարած պատմական հայրանակը նաև հայ ժողովրդի հաղթանակն է: Հաղթանակի օրը՝ Մայիսի 9-ը, հաղթանակի օր է նաև հայ ժողովրդի համար:

КРУПНЕЙШЕЕ ИСТОРИЧЕСКОЕ СОБЫТИЕ XX ВЕКА

Г. А. АВЕТИСЯН, академик НАН РА

РЕЗЮМЕ

1 сентября 1939 г. войска фашистской Германии напали на Польшу, тем самым развязав Вторую мировую войну. В конце июля 1940 г. германские войска оккупировали большую часть Франции, а в середине августа того же года начались массированные бомбардировки Великобритании.

22 июня 1941 г. Германия без объявления войны напала на Советский Союз. Наступление велось по трем главным стратегическим направлениям и имело целью: на севере — Ленинград, в центре — Москву, на юге — Киев, с перспективой захвата Донбасса, Поволжья, Кавказа. С началом боевых действий против СССР центр тяжести II мировой войны переместился на советско-германский фронт.

12 июля 1941 г. в Москве был подписан англо-советский договор о ведении совместных действий против фашистской Германии и ее союзников. Великобритания, США, СССР и консолидировавшиеся с ними страны объединились для борьбы против Германии, Италии, Японии и их союзников.

На первом этапе войны (22 июня 1941 г. — 18 ноября 1942 г.) Красной армии удалось сорвать план «молниеносной» войны вермахта и добиться определенных успехов: победа под Москвой, героическая оборона Ленинграда и Сталинграда. Тем самым создавались условия для успешных боевых действий войск антифашистской коалиции в Северной Африке, на Атлантическом и Тихоокеанском ТВД.

Второй этап (19 ноября 1942 г. — 31 декабря 1943 г.) стал этапом коренного перелома во Второй мировой войне: исторические победы советских войск и сокрушительные поражения германо-фашистских войск под Сталинградом, на Курской дуге. Этот этап ознаменовался также резким подъемом в СССР военного производства, ростом оперативного искусства советских войск.

Третий этап (1 января 1944 г. — 9 мая 1945 г.) ознаменовался окончательным разгромом германо-фашистских войск как на восточном фронте, так и на западном (6 июня 1944 г. состоялась долгожданная высадка союзных войск в Нормандии). 8 мая 1945 г. представители союзных сил и командование вермахта подписали акт о безоговорочной капитуляции Германии.

С 9 августа по 2 сентября 1945 г. советские войска нанесли ряд тяжелых поражений войскам милитаристической Японии, в частности разгромили 1-миллионную Квантунскую армию. 2 сентября 1945 г. был подписан акт о безоговорочной капитуляции Японии.

В победу во Второй мировой войне весомый вклад внес и армянский народ. Более 500 тысяч армян сражались в составе советских войск, из них 108 человек стали Героями Советского Союза, а 27 — полными кавалерами ордена Славы. В составе ВС СССР действовали 6 армянских дивизий и 7 дивизий, личный состав которых был в значительной степени укомплектован армянами. Боевыми орденами и медалями «За отвагу» и «За боевые заслуги» были награждены 66802 армянина (грузин и азербайджанцев было награждено по 49106 человек). Большой вклад в победу внесли 63 генерала-армянина и тысячи офицеров-армян, а имена Маршала Советского Союза, дважды Ге-

роя Советского Союза И. Баграмяна, адмирала флота СССР, Героя Советского Союза И. Исакова, маршала авиации С. Худякова (А. Ханферянц), Главного маршала бронетанковых войск, Героя Советского Союза А. Баджаняна известны во всем мире. Многие армяне возглавляли научные лаборатории, промышленные предприятия и даже целые отрасли производства.

Из Армении отправлялись на фронт более 300 видов боеприпасов, оружия, обмундирования, продуктов питания, промышленных изделий.

В рядах союзных армий сражались более 80 тысяч армян, многие из которых стали национальными героями США, Франции, Италии, среди них были и генералы союзных армий.

Активное участие армян в борьбе за общечеловеческие ценности объясняется также и тем обстоятельством, что первый геноцид XX в., совершенный Турцией в отношении армян в 1915 г., был организован с ведома и под покровительством Кайзеровской Германии, а Гитлер 22 августа 1939 г. на совещании в Оберзальцбурге цинично заявил: «В конце концов, кто сегодня помнит о геноциде армян?». В первый период войны Турция на границе с СССР сосредоточила до 26 дивизий, которые должны были вторгнуться в Закавказье и довершить дело, начатое младотурками и кемалистами в период I мировой войны. Однако решающие победы Красной армии над германскими войсками на берегах Волги и в предгорьях Кавказа предотвратили угрозу их вторжения и нового геноцида армян.

Вот почему армянский народ вполне lawfully считает историческую победу во Второй мировой войне и своей победой.

THE GREATEST HISTORICAL EVENT OF XX CENTURY

H. A. AVETISYAN, Academician of the National Academy of Sciences

SUMMARY

September 1, 1939 the troops of fascist Germany attacked Poland, thus unleashing the Second World war. At the end of July 1940 German troops occupied the most part of France, and in the middle of August of that year began mass bombardment of Great Britain.

On June 22 1941 Germany without declaration of war attacked the Soviet Union. The offensive was led on three main strategic directions having the purpose to capture: Leningrad – in the north, Moscow – at the center, Kiev – in the south, with prospect to capture Donbass, Povolzhie and Caucasus. With the beginning of battle actions against the USSR the center of gravity of the World War II moved on the Soviet-German front.

On July 12, 1941 in Moscow the Anglo-Soviet treaty was signed concerning joint actions against fascist Germany and its allies. Great Britain, the USA, the USSR and the countries, consolidated with them, were united for struggle against Germany, Italy, Japan and their allies.

At the first stage of war (June 22, 1941 – November 18, 1942) Red Army succeeded to frustrate the plan of blitzkrieg of Wehrmacht and to achieve certain success: the victory under Moscow, heroic defense of Leningrad and Stalingrad. Thus conditions were created for successful fighting actions of troops of antifascist coalition in northern Africa, in the Atlantic and the Pacific theatre of fighting actions.

The second stage (November 19, 1942 – December 31, 1943) became a stage of radical turning point in the World War II: historical victories of the Soviet troops and shattering defeats of German-fascist forces under Stalingrad, on the Kursk arch. This stage was marked also by sharp rise of the military manufacture in the USSR, growth of operative skill of the Soviet troops.

The third stage (January 1, 1944 – May 9, 1945) was marked by final rout of German-fascist troops both on eastern and western fronts (June 6, 1944 the long-awaited landing of the allied forces in Normandy was held). On May 8, 1945 the representatives of allied forces and the Command of Wehrmacht signed the statement about unconditional capitulation of Germany.

From August 9 till September 2, 1945 Soviet troops inflicted number of heavy losses on the troops of militaristic Japan, in particular defeated counting 1-million of warriors of Quantun army. On September 2, 1945 the statement about unconditional capitulation of Japan was signed.

Armenian people also brought ponderable contribution to the victory in the Second Wold war. More than 500 thousand Armenians battled in the ranks of the Soviet troops, from which 108 men became the Heroes of the Soviet Union, and 27 – Complete Holders of Order of Glory. In the composition of the AF of the USSR 6 Armenian divisions operated and 7 divisions, the personnel of which was substantially completed with Armenians. The combat awards and medals «For Courage» and «For Battle Merits» awarded 66802 Armenians (Georgians and Azerbaijani were awarded up to 49106 men accordingly). Great contribution to the victory was brought by 63 generals and thousands of officers-Armenians, and the names of Marshal of the Soviet Union, twice Hero of the Soviet Union I. Bagramyan, admiral of the fleet of the USSR, Hero of the Soviet Union I. Isakov, Marshal of the Air Forces S. Khudiakov (A. Khanferiants), Main Marshal of tank corps, Hero of the Soviet Union A. Babajanyan are known all over the world. Many Armenians headed scientific laboratories, industrial enterprises and even the whole branches of manufacture.

From Armenia more than 300 kinds of ammunition, weapon, uniforms, products of food, industrial products were sent on front.

In the ranks of allied armies more than 80 thousand Armenians battled, many of which became the national heroes of the USA, France, Italy, among them there were also generals of allied armies.

The active participation of the Armenians in struggle for human values is explained as well by that circumstance, that the first genocide of XX century, perpetrated by Turkey against Armenians in 1915, was organized with knowledge and under protection of Kaiser Germany and Hitler on August 22, 1939 at meeting in Oberzaltsburg cynically declared: «Eventually, who today remembers about the genocide of Armenians?» In the first period of war Turkey on border with the USSR concentrated up to 26 divisions, which should intrude in Transcaucasia and to complete the act, which had been begun by Young Turks and kemalians during World War II. However decisive victories of the Red Army over German troops on the coasts of Volga and in foothills of Caucasus prevented the threat of their intrusion and a new genocide of Armenians.

That is why Armenian people fully considers the historical victory in the World War II as its own victory as well.

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՄՐԻՆԵՐԻՆ (1941—1945 թթ.)

Վ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կարմիր բանակի կազմում գոյություն են ունեցել ապօպային դիվիզիաներ, որոնցում մեկ ազգի ներկայացուցիչները կազմում էին տվյալ վրամիավորման գերակշռող մասը: Այդ դիվիզիաները ձևավորվել են ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. նոյեմբերի 13-ի որոշման հիման վրա և նպատակ ունենին կարծ ժամանակամիջոցում համալրելու Կարմիր բանակը, որի անվերադարձ կորուստները միայն առաջին երեք ամիսների ընթացքում կազմեցին 2067801 մարդ, իսկ սանհիտարական կորուստները՝ 676964, միասին՝ 2744765 մարդ: Այդ կորուստներն ավելի մեծացան մինչև 1941 թ. դեկտեմբերի 31-ը և կազմեցին 4473820 մարդ, որից անհայտ կորածներ ու գերիներ՝ 2335500 մարդ¹: Այդ հմկայական կորուստները ԽՍՀՄ կառավարությանը ստիպեցին ռազմավարակոչային հսկայական աշխատանք կատարել, որի հետևանքով կարծ ժամանակամիջոցում համալրվեցին անձնակազմների կեսից ավելին կորցրած ռազմաճակատները, բանակները, կորպուսներն ու դիվիզիաները: Ստեղծվեցին ռազմավարական պահեստային ուժեր (ռազմաճակատներ, կորպուսներ և դիվիզիաներ), գործող բանակ վրամկոչվեցին միլիոնավոր մարդիկ: Եներկով պատերազմական իրադրությունների քիչող պայմաններից՝ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեն ընդունեց մի շարք կարեգոր որոշումներ, որոնց թվում էր նաև

պազային զորամիավորումների ստեղծման վերաբերյալ 1941 թ. նոյեմբերի 13-ի որոշումը: Հիշեցնենք, որ Նման զորամիավորումներ Կարմիր բանակի կազմում գոյություն են ունեցել 1920-1930-ական թվականներին և վերակազմակիրվել են ԽՍՀՄ ժողովուրիքի և ՀամԱՊ(Բ)Կ Կենտկոմի 1938 թ. մարտի 7-ի «ՔՊԿԲ պազային զորամասերի և զորամիավորումների մասին» որոշմամբ²: Նոր պազային զորամիավորումների ստեղծման մասին որոշումը պատերազմի առաջին շրջանում ժամանակին ընդունված խիստ կարևոր մի ակտ էր, որը թնդարձված էր կյանքի պահանջներով: Կենտրոնի համար ոչ միայն ձեռնուու էր, այլև միանգամայն հարմար էր, որ Անդրկովկասի, Միջին Ասիայի հանրապետություններն ու Ղազախստանը տեղում իրենց կյութական և մարդկային միջոցների հաշվին համալրեն և կազմակորեն նոր զորամիավորումներ, որտեղ գերազանցություններն տվյալ հանրապետության հիմնական ժողովրդի ներկայացուցիչները և հետությամբ, իրենց ազգային խորհուրդի կատարվեն մարտական ուսուցման և քաղաքական պատրաստության աշխատանքները:

Նոր ապօպային պորամիավորումների ստեղծման մասին որոշումն օրենսդրության ամբազմակեցի 1944 թ. փետրվարի 1-ին, եքա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին գումարման 10-րդ նատաշրջանը օրենք ընդունեց ապօպային պորային կազմավորումների մասին³: Ըստ այդ օրենքի լուրաքանչյուրը միութենական

¹ Shu «Гриф секретности снят. Потери Вооруженных Сил ССР в войнах, боевых действиях и военных конфликтах за период с 1918 по 1989 г. Статистическое исследование. М. 1993 с. 152.

² Shu «КПСС о Вооруженных Силах Советского Союза. Документы. 1917–1968». М., 1969, с. 294.

³ Shu «Известия», 2 февраля 1944 г.

հանրապետություն ուներ իր հանրապետական վորային կազմավորումները։ Ազգային վորային կազմավորումների ստեղծումը նախապատրաստվել էր խորհրդային ժողովուրդների մարտական համագործակցությամբ, իսկ ավելի վաղ՝ ինքնիշխան հանրապետությունների ռազմական դաշինքով։ Ինչպես արդեն նշեցինք, մինչև 1938 թ. մարտի 7-ը ԽՍՀՄ միութենական հանրապետություններն ունեն իրենց ազգային վորամագիստրումները, որոնց գոյության փաստով ընդգծում էր տվյալ հանրապետության ինքնիշխանությունը։ Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում այդ վորամագիստրումների վերականգնումը Կարմիր բանակի համակարգում ունեցավ ոչ միայն ռազմական, այլև քաղաքական կարևոր նշանակություն։ Նախ՝ Էլ ավելի ամրապնդվեց Կարմիր բանակը, և կարճ ժամանակամիջոցում նրա շարքերի մեջ ներգրավվեցին մարտական նոր ուժեր։ Եվ հետո՝ ազգային հանրապետությունների կառավարությունները լիակատար իրավունք էին ստանում ոչ միայն սերու կապեր հաստատելու այդ միավորումների հրամանատարությունների հետ, այլև հնարապետություն էին ստանում տնեղբորում ինքնուրույն, օպերատիվ կերպով լուծելու կարևոր շատ հարցեր, որոնք մեծ չափով կնպաստեին ակգային վորամագիստրումների արագ ձևավորմանն ու նրանց մարտունակության ամրապնդմանը, յուրաքանչյուր ազգային վորամագիստրում կուոգրվեր սեփական ժողովրդի մարտական ավանդույթը ների ոգով և ԽՍՀՄ մյուս բոլոր ժողովուրդների ներկայացուցիչների հետ ուս ուսի կմարտնչեր ընդհանուր թշնամու՝ ֆաշիստական պավթիչների դեմ։ Ազգային վորամագիստրումների ստեղծումն ավելի յայտուն կդարձներ յուրաքանչյուր հանրապետության, յուրաքանչյուր ազգի ներդրումը հայրենիքի պաշտպանության գործում և կդառնար յուրաքանչյուր ժողովրդի ազգային հապատությունը, ինչպիսին էր մինչև 1938 թվականը։

1944 թ. մարտի 18-ին Հայկական

ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին գումարման 8-րդ նատաշրջանը ըննեց հայկական վորային միավորումների կազմավորման հարցը։ Նշելով հանրապետության ազգային վորային միավորումների կարևոր նշանակությունը և ակտիվ դերը հայրենիքի պաշտպանության գործում՝ նստաշրջանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած «Միութենական հանրապետությունների վորային կազմավորումներ ստեղծնուր և այդ կազմակցությամբ պաշտպանության վինվորական կոմիսարիատը ընդհանուր միութենականից միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսարիատի վերակաբմելու» օրենքին համապատասխան օրենք ընդունեց, որտեղ ասված է. «1. Կազմեն Հայկական ԽՍՀ միութենական-հանրապետական պաշտպանության ժողովրդական կոմիսարիատ, 2. Հայկական ԽՍՀ սահմանադրությունը լրացնել 15 թ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 15 թ. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ունի իր հանրապետական վորային կազմավորումները»։

Իրենց սահմանադրությունների մեջ նման փոփոխություններ մտցրին նաև մյուս հանրապետությունները։

Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում միայն Անդրկովկասի երեք հանրապետությունները ֆաշիստական պավթիչների դեմ մարտնչելու կամ պատական սահմանները պաշտպանելու նպատակով կազմավորեցին 17 ազգային դիվիզիա։ Դրանք էին՝ հայկական 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ, վլացական 224-րդ, 242-րդ, 296-րդ, 349-րդ, 392-րդ, 394-րդ 406-րդ և 414-րդ, ադրբեյջանական 223-րդ, 396-րդ, 402-րդ և 416-րդ հրաձգային դիվիզիաները։ Եթե դրանց ավելացնենք նաև 1920—1922 թվականներին այդ հանրապետություններում կազմավորված հայկական 76-րդ, վրացական 47-րդ և 63-րդ, ադրբեյջանական 77-րդ լեռնահրաձգային դիվիզիաները,

⁴ Անվետական Հայաստան», 1944 թ. մարտի 19:

որոնք 1941 թ. հուլիս –օգոստոս ամիսներին համարվեցին տվյալ հանրապետությունների մարդկային և նյութական միջոցների հաշվին, ձեռք բերեցին իրենց նախկին ազգային տեսքը և մեկնեցին ռազմաճակատ, ապա սուսպիր է, որ միայն Անդրկողվասում կազմավորվեց 21 ազգային դիվիզիա: Բայց այդ, ներք հանրապետությունների տարածքում կազմավորվեցին կամ համարվեցին երկու տասնյակից ավելի այլ դիվիզիաներ: Այսպես, օրինակ, Հայաստանում կազմավորվեցին կամ համարվեցին՝ 61-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ, Վրաստանում՝ 276-րդ, 351-րդ, 386-րդ, 388-րդ և 417-րդ, Ադրբեյջանում՝ 271-րդ, 317-րդ, 398-րդ, 400-րդ և 404-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմերի կենսից ավելին կազմում էին, համապատասխանաբար, հայերը, վրացիները և ադրբեյջանցիները⁵:

Այժմ առանձին-առանձին ներկայացներ հայկական ազգային դիվիզիաների համառոտ պատմությունը, Հայենական մեծ պատերազմում նրանց անցած մարտական ուղիները:

Կարմիր բանակի առաջին հայկական ազգային դիվիզիան կազմավորվել է Երևանում 1922 թ. սեպտեմբերի 5-ին Սովորանձին կովկասյան բանակի ուսպական խորհրդի հրամանով, վերակազմավորման ենթարկված Հայկական Կարմիր բանակի, ապա Հայկական հավաքական բրիգադի կորամասերի հիմքի վրա: Իր հերթին Հայկական Կարմիր բանակը ձևավորվել էր Հայաստանի առաջին հանրապետության բանակի վերակազմավորմամբ, 1920 թ. դեկտեմբերի 2-ին: Մինչև 1931 թ. նոյեմբերը միավորումը պաշտոնապես կոչվում էր Հայկական հրաձգային, այնուհետև՝ Հայկական լեռնահաճագային դիվիզիա: 1935 թ. դեկտեմբերի 2-ին Հայկական լեռնահեր-

⁵ Տես Ռուսաստանյան Դաշնության պաշտպանության Նախարարության կնտրունական արդիվ (այսուհետու՝ ՌԴ ՊՆԿԸ), ֆ. 56, ց. 12214, գ. 405, թ. 278, ց. 980, թ. 73, ց. 1251, թ. 5, ց. 1133, թ. 6-7, ց. 1246, թ. 25, ց. 743, թ. 48 և այլն:

րաձգային դիվիզիան կոչվեց ԽՍՀՄ պաշտպանության նախարար մարշալ Վ. Ե. Վորոշիլովի անունով, 1936 թ. մայիսի 29-ին պարզեատորվեց Կարմիր դրոշի շքանշանով, նույն ամսին ստացավ 76-րդ համարը⁶:

Հայկական 76-րդ Վ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ լեռնահաճագային դիվիզիան հատկապես մեծ դեր է խաղացեց Կարմիր բանակի համար ազգային վիճակության կադրեր պատրաստելու գործում: Նրա շարքերում իրենց նախական կոփիածցն են ստացել հայրազգի երկու մարշալ, 40-ից ավելի գեներալական, 200-ից ավելի գնդապետներ, միջին և կրտսեր հրամակազմի մի քանի հազար սպաներ: 1938 թ. մարտի 7-ին դիվիզիան, Կարմիր բանակի մյուս ազգային զորամիավորումների նման, վերակազմավորվեց և դարձավ համապորային միավորում՝ պահպանելով մարտական դրոշը, համարը, տեղաբաշխման վայրը և նյութական միջոցները: Խիստ փոփոխություն կրեց միայն դիվիզիայի անձնակազմը՝ դառնալով ինսերնացիոնալ: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, 76-րդ լեռնահաճագային դիվիզիան համարվեց ՀԽՍՀ մարդկային և նյութական միջոցները և կրկին ձեռք բերեց նախկին ազգային տեսքը: Նրա անձնակազմի երկու երրորդը կազմեցին հայերը⁷:

1941 թ. օգոստոսի 25-ին Անդրկողվասյան ուսպամաճակատի միավորումներից կազմված զորահիմքի առաջապահում, Խորհրդային Միության և Իրանի միջև 1921 թ. կնքված պայմանագրի համաձայն, դիվիզիայի զորամասերը Զուլֆայի մոտ անցան սահմանային Արարս գետի աջ ափը և առաջ շարժվելով մինչև օգոստոսի 30-ը, առանց դիմադրության հանդիպելու, հասան թափիկ: Խորհր-

⁶ Տես Ա. Հ. Հարությունյան, Կ. Ա. Հարությունյան, Հայկական 76-րդ Վ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ 51-րդ գվարդիական Վիտերբյան, Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիա (1920—1945 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Եւ., 1976, էջ 8:

⁷ Տես ՌԴ ՊՆԿԸ, 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի ֆ., ց. 1, գ. 2, թ. 1:

դային զորքերի մուտքն Իրան հնարավորություն տվեց կարճ ժամանակամիջոցում այդ երկիրը մաքրելու գերմանաֆաշիստական գործակալներից ու ձախողնու Իրանը Խորհրդային Միության դեմ պատերազմի մեջ ներքաշնոր հիտլրյան պլանները:

Դիվիզիան թափրիզում երկար չըմնաց: Թագմանակատում ատեղծված ծանր կացությունը պահանջում էր մարտունակ նոր ուժեր: Սեպտեմբերի սկզբներին այն վերադարձավ Իրանից և ուղարկեց գործող բանակ: Այդ ժամանակ դիվիզիայի շարքերում ծառայում էին ավելի քան 16000 զինվոր ու սպա, որոնցից հայեր էին 14000-ը⁸: Սեպտեմբերի 27-ին Հարավ-արևմտյան ռազմաճակատի 38-րդ բանակի կազմում Ոնկրախնական ԽՍՀ Պոլտավայի մարզի Չուտովոյի շրջանի Կոչուրենկա - Կանտեմիրովկա - Ֆյորդրովկա տեղամասում դիվիզիան մարտերի մեջ էր գերմանաֆաշիստական զավթիչների դեմ և այնուհետև մինչև 1945 թ. մայիսի 9-ը՝ Հայքանակի օրը, մշտապես գործում էր. խորհրդա-գերմանական ճակատի ամենաթեժ կետերում: Այսօն, օրինակ, 1942 թ. հուլիսի 17-ից մինչև 1943 թ. փետրվարի 2-ը դիվիզիան Հարավ-արևմտյան ռազմաճակատի 21-րդ բանակի կազմում ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ Ստալինգրադյան ճակատամարտին և ԽՍՀՄ պաշտպանության ժողովումի 1942 թ. նոյեմբերի 23-ի թիվ 375 հրամանով արժանացավ գվարդիականի կոչման և այնուհետև կոչվում էր 51-րդ գվարդիական Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ հրաձգային դիվիզիա: Ստալինգրադյան ճակատամարտում ֆաշիստական բանակների մի հզոր խմբագործման շրջապատման ու ոչնչացմանն ակտիվություն մասնակցելու համար 51-րդ գվարդիական իրաձգային դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943 թ. հունիսի 19-ի հրամանագրով պարզեցվեց նաև Լենինի շքանշա-

նով⁹: Դիվիզիան այնուհետև Վորոնեժյան ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի կազմում 1943 թ. հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը ակտիվորեն մասնակցեց Կուրսկի ճակատամարտին՝ Բելգորդի շրջանում: 1944 թ. հունիսի 23-ից մինչև հուլիսի 4-ը գվարդիականները հարձակողական մարտեր էին մղում Բելյուսիայի հյուսիսային շրջաններում: Նրանք հաղթահարեցին շրային 4 արգելք, անցան 250 կմ տարածություն, ավատագրեցին ավելի քան 200 բնակավայր, այդ թվում Պոլոցկ քաղաքը: Դիվիզիան հատկապես աշքի ընկապ Արևմտյան Դվինան գետանցելիս, որի համար 15 գվարդիականների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Նրանց թվում էր նաև գվարդիայի եֆեկտոր Արամայիս Ասատուրի Սարգսյանը (Սարգիսով): Գորիսի շրջանի Տեղայուղի անվեհեր քաջորդին իր կյանքի գնով փրկեց ուսու հրամանատարի կյանքը և նպաստեց մարտական առաջարանքի կատարմանը¹⁰: Վիտեբսկի մարզում հակառակորդի խոշոր խմբագործան շրջապատման և ջախջախման մարտերին ակտիվ մասնակցություն ունենալու համար դիվիզիային շնորհվեցին «Վիտեբսկյան», իսկ նրա գնդերին՝ «Պոլոցկյան» պատվագոր անունները: Այնուհետև գվարդիականները մասնակցեցին ֆաշիստական զավթիչներից Լատվիայի և Լիտվայի ապատագրմանը և իրենց մարտական ուղին ավարտեցին Կուռանդական թերակղուում, Բալթիկ ծովի ափերին հակառակորդի շրջապատված զորակիւմի շախչախմամբ: Ակած Բելյուսիայից՝ դիվիզիան սերտորեն համագործակցում էր «Սասունյի Դավիթ» տանկային շարասյան հետ, որը հիմնվել էր սփյուռքահայերի շրջանում Հայ Սուտքեական եկեղեցու կատարած հանգանակության միջոցներով:

Ամբողջ պատերազմի ընթացքում դիվիզիան մարտերով անցավ ավելի

⁸ Տե՛ս Ա. Դ. ՊՆԿԱ, 51-րդ գվարդիական իրաձգագույն խորհրդի նախագահության 1943 թ. հունիսի 19-ի հրամանագրով պարզեցվեց նաև Լենինի շքանշա-

⁹ Տե՛ս ՌԴ ՊՆԿԱ, 51-րդ գվարդիական իրաձգագույն դիվիզիայի ֆ., ց. 1, գ. 2, թթ. 15, 28:

¹⁰ Տե՛ս «Կուրգա օ գերօյք». Ե., 1985, ս. 97 — 98.

քան 12000 կմ մարտական ուղի, որի ընթացքում գվարդիականները ոչչացրին ավելի քան 50000 ֆաշիստական զինվոր ու սպա, գերի վերցրին 15000 հիտլերական, ապատագրեցին 1000-ից ավելի քանակավայրեր: Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մոլված մարտերում յուցաքերած քաջության համար փառապանձ գվարդիական միավորումը 6 անգամ արժանացավ Գերագույն գլխավոր հրամանատարի շնորհակալությանը: Դիվիզիայի շուրջ 20000 զինվորներ ու սպաներ պարզեցարկեցին ԽՍՀՄ ջրանշաներով ու մեղալներով, 26 հոգու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, իսկ 7-ը դարձան Փառքի ջրանշանի բոլոր երեք աստիճանների ասպետներ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին դիվիզիայի հրամանատարությունը շարունակ պահպանում էր իր ավանդական կապերը Խորհրդային Հայաստանի աշխատավորության հետ: Նրա պատվիրակությունները 5 անգամ այցելեցին Հայաստան և հանդիպումներ ունեցան հանրաշետության քանվորների, կոլտնտեսականների, գիտության, մշակույթի և արվեստի ականավոր գործիչների հետ: Հայ ժողովուրդն իր հերթին միշտ ուշադրության կենտրոնում էր պահում փառապանձ գվարդիականներին՝ նրանց ուղարկելով զանազան նըլվեր-ծանրոցներ, ոգևորող նամակներ և այլն: Այդ կապերը պահպանվեցին նաև պատերազմից հետո, եթե դիվիզիան տեղաբաշխած էր Լիտվայի Շյաուլյայ քաղաքում, ապա՝ Ունյանովկում¹¹:

Հայկական ազգային գորամիավորումների համաստեղության մեջ հիրավի արժանի տեղ է գրավում Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան, որը, իր մարտական ուղին ակներով Կովկասի նախալեռներից, այն ավարտեց Բեռլինում: Դիվիզիան կազմավորվել է Երևանում, ըստ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. նոյեմբերի 22-ի թիվ

935 որոշման և ԽՍՀՄ պաշտպանության ժողովում նոյեմբերի 28-ի թիվ 3218 հրամանի, Անդրկովկասյան ուսպմաճակատի 45-րդ բանակի կազմում որպես 474-րդ հրաձգային դիվիզիա¹²: 1942 թ. հունվարի 5-ին ԽՍՀՄ պաշտպանության ժողով-



Գնդապետ Սիմոն Զարյան

մի թիվ 760101 հրամանով դիվիզիան դարձավ ազգային գորամիավորում՝ սուսանալով Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիա անվանումը: Կազմավորման աշխատանքներն ընթանում էին գնդապետ Սիմոն Գևորգի Զարյանի հրամանատարությամբ: 1942 թ. փետրվարին Ղրիմի ուսպմաճակատի հրամանատարության խնդրանքով գնդապետ Զարյանը նշանակվեց Կերչում վերակազմավորվող Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: Փետրվարի 23-ին նրան փոխարինեց փոխնդապետ Անդրանիկ Սարգսի Սարգսյանը:

Իր կազմավորման առաջին իսկ օրվանից դիվիզիան գտնվում էր Խորհրդային Հայաստանի պետական, կուսակցական և տեղական իշխանությունների ամենօրյա ուշադրության կենտրոնում: 1942 թ. հունվարի 12-ին հայերն լիւզով

¹¹ Դիվիզիայի մարտական ուղու մասին ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան, 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին: Եւ., 1980:

¹² Տես ՌԴ ՊՆԿԸ, ֆ. 56, գ. 12214, գ. 743, թ. 48:

լրյա տեսավ դիվիզիայի «Կարմիր վինդիր» պաշտոնաթերթը: 1942 թ. հուլիսի 17-ին Երևանի Լենինի հրապարակում (այժմ՝ Հանրապետության հրապարակ) հանդիսավոր պայմաններում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Մայակ Պետրոսի Պայյանը մարտական դրոշներ հանձնեց դիվիզիայի և նրա գնդերի հրամանատարներին: Ընդունելով դրոշները՝ դիվիզիայի անձնակազմը մեկ մարտու նման երդից փառքով օծել դրանք գալիք մարտերում, մինչև արյան վերջին կարիլ մարտընչել ֆաշիստական զավթիչների դեմ և նրանց դուրս շարտել հայրենի հողից¹³: Մինչև ռազմաճակատ մեկնելը դիվիզիայի անձնակազմը հաջողությամբ կատարում էր մարտական և քաղաքական ուսուցման ծրագիրը, հաղթահարում էր դրա հետ կապված դժվարությունները, նախապատրաստվում մարտերի: Այդ ամենն ընթանում էր՝ «Դըժվար է ուսուցման ժամանակ, հետո՝ մարտում» առվիրովյան նշանաբանով: 1942 թ. օգոստոսի սկզբներին դիվիզիան հրաման ստացավ ռազմաճակատ մեկնելու: Այդ ժամանակ նրա շարքերում կային 11782 վիճակոր ու ապա, որոնցից հայեր էին 11674-ը, այսինքն՝ անձնակազմի 99,1 %-ը¹⁴: Չնայած պատերազմի տարիներին այս կազմը որոշ փոփոխություններ կրեց, այնուամենայնիվ հայերը միշտ էլ կազմում էին դիվիզիայի անձնակազմի բացարձակ մեծամասնությունը: Օգոստոսի 8—11-ը դիվիզիայի զորամասերը Երևանից փոխադրվեցին Գրոսի և օգոստոսի 18-ից Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային զորախմբի 9-րդ, ապա 44-րդ, 58-րդ և 18-րդ բանակների կազմում մասնակցեցին Կովկասի ճակատամարտին: 1942 թ. հոկտեմբերի 14-ին դիվիզիայի հրամանատար նշանակեց գնդապետ Արտաշես Արշակի Կասիլյանը, որի գլուխվորությամբ դիվիզիայի զորամասերը 1943 թ.

¹³ Տես «Մովեսական Հայատան», 1942 թ. հունիսի 13:

¹⁴ Տես ՌԴ ՊՆԿԱ, 45-րդ բանակի ֆ., ց. 9458, գ. 24, թթ. 496—504:

հունվարի 2-ին ազատագրեցին Մալգոբեկ քաղաքը, առաջ շարժվեցին Գեորգիանկանի Սիսերալնին վոդի Ստավրոպոլի Տիխորենցիկ Գարբուզովայա Բալկան երթուղով: Փետրվարի 9—10-ը նովոշիրելինկա և Պոդի բնակավայրերի շրջա-



Գնդապետ Արտաշես Կասիլյան

նում տեղի ունեցած մարտում քաջի մահով զոհվեց գնդապետ Արտաշես Կասիլյանը: Փետրվարի 19-ին դիվիզիայի հրամանատար նշանակվեց գնդապետ Նվեր Գևորգի Սաֆարյանը¹⁵: Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ դիվիզիան հատկապես աշքի ընկալ 1943 թ. սեպտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 4-ը թամանի թերակղում թշնամու իրար հաջորդող 7 շերտերից բաղկացած «Կապույտ գիծ» կոչվող ամրակուռ պաշտպանության ճեղքման և հիտլերյան զավթիչներից թերակղուու ազատագրման մարտերում: Հենց այդ մարտերում ցուցաբերված անօրինակ սխրանքների համար դիվիզիայի 390-րդ հրաձգային գրնուդի 1-ին հրաձգային վաշտի դասակի հրամանատարի օգնական ավագ սեր-

¹⁵ Միմոն Զարյանը, Արտաշես Կասիլյանը և Նվեր Սաֆարյանը Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի կադրեր էին:

ժանտ Հունան Մակիչի Ավեսիայանին, 526-րդ հրաձգային գնդի 1-ին գնդացրային վաշտի ջոկի հրամանատար ավագ սերժանտ Սուրեն Ամբատի Առաքելյանին և 280-րդ առանձին սակրային գումարտակի ջոկի հրամանատար շարքային Զահան Սարգսի Կարախանյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում¹⁶: Թամանի թերակրպին գերմանաֆաշիստական վավեջիչներից մաքրելու մարտական գործողության ամենաակտիվ կերպով մասնակցելու և այդ ընթացքում ցուցաբերած արիության համար Գերագույն գլխավոր հրամանատարի 1943 թ. հոկտեմբերի 9-ի հրամանով դիվիզիային շնորհվեց «Թամանյան պատվավոր անվանումը¹⁷: Նույն քվականի դեկտեմբերի 1-ին գեներալ-մայորի կոչում շնորհվեց Նվեր Սաֆարյանին:

Թամանի պատագրումից հետո Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ 1943 թ. դեկտեմբեր - 1944 թ. մայիսի 12-ը Առանձին Մերձծովյան բանակի կազմում ակտիվորեն մասնակցեց Ակրում Կերչի, տապա Ղրիմի թերակրպիների պատագրումանը: Կերչ քաղաքի պատագրման համար մղված մարտերում հրամանատարության առաջադրանքներն օրինակնելիորեն կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած արիության ու քաջության համար դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. ապրիլ 24-ի հրամանագրով պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով: Անստոպովի պատագրման համար դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. մայիսի 24-ի հրամանագրով պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով, իսկ նրա 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերը Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով արժանացան «Անստոպովյան» պատվավոր

¹⁶ Դիվիզիայի առաջին հերոսներին այդ քարձը կղումը շնորհվել է հետմահու, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. մայիսի 16-ի հրամանագրով:

¹⁷ Տես ՌԴ ՊՆԿ, 89-րդ հրաձգային դիվիզիայի Փ., ց. 2, ց. 31, թ. 276:

անվանմանը¹⁸: 1944 թ. մայիսի 7-12-ը Սևաստոպոլի համար մղված մարտերում կատարած հերոսական սխրանքների համար 526-րդ հրաձգային գնդի 7-րդ հրաձգային վաշտի դասակի հրամանատարի ազնական ավագ սերժանտ Ալյին Հարությունի Հարությունյանին, նույն վաշտի ջոկի հրամանատար ավագ սերժանտ Վարդգես Արշակի Ռոտումյանին, ավտոմատափորների վաշտի ջոկի հրամանատար ավագ սերժանտ Հարություն Ռուբենի Սկրտչյանին, 400-րդ հրաձգային գնդի 3-րդ հրաձգային վաշտի դասակի հրամանատար լեյտենանտ Միմոն Կարապետի Բաղրամյանին և 390-րդ հրաձգային գնդի 7-րդ հրաձգային վաշտի դասակի հրամանատար լեյտենանտ Խորեն Արմենակի Խաչատրյանին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. մարտի 24-ի հրամանագրով շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում¹⁹:

Այնուհետև դիվիզիան աշքի ընկալ Լեհաստանի պատագրման և ֆաշիստական Գերմանիու՝ վերջնական ջախճախման համար և մարտերում: Լեհաստանի տարածքում տեղի ունեցած մարտերից հիշատակության արժանի են 1945 թ. հունվարի 17-19-ը՝ Ռուսակի Բրոդ կոչվող բնակավայրի մոտ գտնվող անտառում տեղի ունեցած մարտերը, որոնց ընթացքում թշնամին կորցրեց ավելի քան 6000 վիճակոր ու սպա: 1945 թ. հունվարի 29-ին դիվիզիայի գորամասերը մարտերով անցան ֆաշիստական Գերմանիայի սահմանը: Կրնկակուի հետապներով թշնամուն՝ նրանք փետրրվարի 16-ին Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքից 3,5 կմ հարավ գետանցներին Օդերը և 2,5 կմ երկարությամբ ու 700-800 մ խորությամբ հենակետ գրավեցին նրա ձախ ափին: Խազմակարական կարևոր նշանակություն ունեցող հենակետը, որն ստացավ «Հայկական փոքր հոռ անունը, դիվիզիան պաշտպանեց մինչև ապրիլ

¹⁸ Տես նույն տեղում, թթ. 276-277:

¹⁹ Տես նույն տեղում, ֆ. 33, ց. 793-756, գ. 3, թ. 165, ց. 43, թ. 125, ց. 32, թ. 12, ց. 4, թ. 49, ց. 51, թ. 142:

16-ը: Ապրիլի 16-ից մինչև մայիսի 2-ը դիվիզիան 1-ին Բելոռուսական ռազմաճակատի 33-րդ բանակի, ապա 3-րդ հարկածային բանակի կազմում ամենասակալուկ մասնակցությունն ունեցավ Բեռլինի գրավման մարտական գործողություններին: Ապրիլի 16-ի առավոտյան անցնելով հարձակման՝ դիվիզիան համառ մարտերով շարժվեց դեպի Բեռլին՝ գրավելով 8շնչառով և Օդերի Ֆը-րանկֆուրտ քաղաքները: Օդերի Ֆրանկֆուրտը քաղաքի գրավման ժամանակ ցուցաբերած քաղության համար Խորհրդային Սիության հերոսի կոչման արժանացավ 400-րդ հրաձգային Սևաստոպոլյան գնդի 1-ին հրաձգային գումարտակի հրամանատար մայոր Հրանտ Գևորգի Բարայանը²⁰: Ապրիլի 29-ին դիվիզիան արդեն փողոցային մարտեր էր մղում Բեռլինում, որտեղ Հումբոլդտ-Հայն այգում հանդիպեց պաշտպանական հզոր ամրություններ ունեցող բերդի կայազորի կատաղի դիմադրությանը: Մայիսի 2-ին ժամը 14-ին ամրոցի կայազորն անձնատուր եղավ: Դիվիզիայի վորամասերը գերի վերցրին գերմանական 5112 գնդով ու ապա, գրավեցին հարուստ ավար: Բեռլինի գրավման մարտերի ժամանակ հակառակորդի պաշտպանությունը ճնշելու և ցուցաբերած սխրանքների համար Հայկական 89-րդ թամանյան կարմրադրուց Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. մայիսի 28-ի հրամանագրով պարգևատրվեց Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով: Բեռլինի գրավումից հետո դիվիզիան շարժվեց դեպի արևմուտք և հաղթանակը դիմավորեց Ելբայի ափերին²¹:

Ակսած 1942 թ. օգոստոսի 8-ից մինչև

²⁰ Տես նույն տեղում, գ. 4, թ. 30 (Հ. Գ. Բարայանին հերոսի կոչում է շնորհվել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1946 թ. մայիսի 5-ի հրամանագրով):

²¹ Տես Ա. Հ. Հարությունյան, Կ. Ա. Հարությունյան, 89-րդ թամանյան կարմրադրուց, Կարմիր աստղի շքանշանակիր, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի մարտական ուղին (1942—1945 թթ.). փաստաթղթերի և պութերի ժողովածու: Ե., 1985:

1945 թ. մայիսի 9-ը դիվիզիան անցել է 7250 կմ տարածություն, որից 3640-ը՝ համար մարտերով: Այդ ընթացքում նրա վորամասերը ազատագրեցին 900 բնակավայր և 30 քաղաք: Մարտական գործողությունների ընթացքում դիվիզիայի



Գեներալ-մայոր Նվեր Սաֆարյան

ավելի քան 12000 մարտիկներ ու սպաներ պարզաբանեցին շքանշաններով ու մեդալներով: Նրանցից 9-ը արժանացան Խորհրդային Սիության հերոսի կոչման, իսկ 8-ը դարձան Փառքի շքանշանի լրիվ ասպետ: 1945 թ. սեպտեմբերին դիվիզիան գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի գլխավորությամբ Գերմանիայից վերադարձավ Հայաստան և տեղաբաշխվեց Երևանում, Էջմիածնում ու Թանաքեռում: Այն գոյություն ունեցավ մինչև 1956 թ. ամառը և համարվում էր Անդրկովկասյան գինվորական օկրուգի լավագույն վորամահավավորումներից մեկը²²:

²² Դիվիզիայի մարտական ուղու մասին ավելի մանրամասն տես Ա. Ս. Նալբանդյան, Թամանցիները: Ե., 1960, Ղ. Ա. Գալլարյան, Մարտական 89, Ե. Ա. Կարապետյան, Անմահության ճանապարհով: Ե., 1969, Ա. Մ. Հակոբյան, Հերոսական մարտերություն: Ե., 1975, Խ. Հ. Բարսեղյան, Կրակների միջոց: Ե., 1982:

Հայրենական մեծ պատեհքազմի տարիներին փառապանծ մարտական ուղիանցավ նաև Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան: Այն կազմավորվել է ըստ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. օգոստոսի 9-ի թիվ 459 որոշման և Գերագույն գլխավոր հրամանատարության գորակայանի օգոստոսի 26-ի հրահանգի, Անդրկողկասյան ռազմակատի 45-րդ բանակի կազմում, Ստեփանական քաղաքում որպես ոչ ազգային գորամիավորում: ԽՍՀՄ պաշտպանության ժողովի 1942 թ. փետրվարի 3-ի թիվ 534 հրամանի համաձայն դիվիզիան վերակազմավորվեց ազգային գորամիավորման և պաշտոնապես ստացավ «Հայկական» անվանումը²³: Դիվիզիայի առաջին հրամանատարն էր գրնդապետ Ա. Վասիլյանը: 1942 թ. փետրվարի 23-ից հայերեն լեզվով մկնեց մկնեց հրատարակվել դիվիզիայի «Մարտական գրոշ պաշտոնաթերթը: Նախապատրաստական աշխատանքներն ավարտվելուց հետո 1942 թ. դեկտեմբերի 2-ին դիվիզիան Լենինականից (այժմ՝ Գյումրի) 17 գնացքակազմերով մեկնեց գործող բանակ և Սովորվի շրջանում մտավ Անդրկողկասյան ռազմակատի 44-րդ բանակի կազմի մեջ: Այդ ժամանակ դիվիզիան իր շարքերում ուներ 13837 զինվոր ու սպա, որոնցից 13460-ը՝ հայեր, այսինքն՝ անձնակազմի 97,3 %-ը²⁴:

1942 թ. դեկտեմբերի 8-ից մինչև 1943 թ. ապրիլ դիվիզիայի գորամասերը կատարի մարտերով թերեքի ափերից հասան մինչև Կոքրանի ափերը՝ պատագներով Զեշնա-Ինգուշական ԽԽՍՀ-ի, Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերի բազմաթիվ քաղաքներ ու բնակավայրեր: Այսուհետև միավորման մարտական ուղին ձգվեց Ուկրաինա-Սովորվա-Շումինիա-Հռունգարիա-Ավստրիա-Զեխուրվակա գծով: Ուկրաինայի Կիրովգրադ քաղաքի պատագներման համար

1944 թ. հունվարի 8-ին դիվիզիային շնորհվեց «Կիրովգրադյան», իսկ Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավյայի պատագնման համար (1945 թ. ապրիլի 4-ին)՝ «Բրատիսլավյան պատվագոր անվանումը: Ուկրաինայի պատագնման մարտերում առաջադրանքները գերազանց կատարելու համար դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. մարտի 29-ի հրամանագրով պարզեցատրվեց նաև Բոգդան Խմենինից 2-րդ աստիճանի շքանշանով: Դիվիզիան իր մարտական ուղին ավարտեց Պրագայի մատուցյներում²⁵: Պատերազմի տարիներին դիվիզիայի հրամանատարներն են եղել նաև գնդապետներ Վ. Ֆ. Գյալկովը, Մ. Ի. Դորոդուկին, գեներալ-մայոր Ե. Պ. Գը-րեշանինը: Դիվիզիան կազմացրվեց 1945 թ. հունվանին²⁶:

Խորհրդային Հայաստանի տարածքում կազմավորված մյուս հայկական ազգային գորամիավորումը՝ Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան էր: Այն կազմավորվել է ըստ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. օգոստոսի 9-ի թիվ 459 որոշման Կաղարշապատում (այժմ՝ Էջմիածին), ապա Երևանում, Անդրկողկասյան ռազմակատի 45-րդ բանակի կազմում որպես ոչ ազգային միավորում: 1942 թ. մարտի 5-ին Անդրկողկասյան ռազմակատի հրամանատարության թիվ 00102 հրամանով դիվիզիան պաշտոնապես կոչվեց «Հայկական»²⁷: 1942 թ. մարտի 15-ից հա-

²³ Տես ՈՒ ՊՆԿԱ, ֆ. 56, ց. 12214, գ. 997, թթ. 112-116, Անդրկողկասյան պինդորական օկրուգի ֆ., ց. 13185, գ. 12, թթ. 1-2:

²⁴ Տես Խույս տեղում, 45-րդ բանակի ֆ., ց. 9448, գ. 12, թթ. 209-210:

²⁵ Ավելի մանրամասն տես Ա. Հ. Հարությունյան, Հ. Հ. Հոյիաննեսյան, Հայկական 409-րդ հրաձգային Կիրովգրադյան-Բրատիսլավյան, Բոգդան Խմենինից շքանշանակիր դիվիզիայի մարտական ուղին (1941-1945 թթ.): Ես., 1990, Նոյեմբեր, Հայ ռազմիները Զեխուրվակայի պատագնման համար մղված մարտերում (1944-1945 թթ.): Ես., 1983:

²⁶ Ավելի մանրամասն տես Ա. Հ. Հարությունյան, Հ. Հ. Հոյիաննեսյան, Հայկական 409-րդ հրաձգային Կիրովգրադյան-Բրատիսլավյան, Բոգդան Խմենինից շքանշանակիր դիվիզիայի մարտական ուղին (1941-1945 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ծողովածու, 1-ին մաս: Ե., 1980, 2-րդ մաս, Ե., 1981:

²⁷ Տես ՈՒ ՊՆԿԱ, 45-րդ բանակի ֆ., ց. 1, թ. 86:

իերեն լեզվով մկանց հրատարակմել դիվիզիայի «Հանուն Հայրենիքի» պաշտոնաթերթը: Մինչև ռազմաճակատ մեկնելը դիվիզիայի հիմնական խնդիրը խորհրդաբարքական սահմանի մի հատվածի պաշտպանությունն էր Ասի քաղաքի ավերակների դիմացից մինչև Դվինը ընկած 95 կիլոմետրանոց տեղամասում, ինչպես նաև ռազմաճակատի համար երթային վաշտերի պատրաստումն ու ուղարկումը: Մինչև ռազմաճակատ մեկնելը դիվիզիան գործող քանակ ուղարկեց ավելի քան 10000 մարտիկ, հրամանատար ու քաղաքաւոտող:

1942 թ. սեպտեմբերի 11—18-ը դիվիզիայի գորամասերը երկաթուղով փոխադրվեցին Փոթի (Վրաստան), այնտեղից էլ նավերով Սև ծովով՝ Տուապսն, որտեղից կատարելով հետիւնուն երթային արշավ՝ ելման դիրքեր գրավեցին Նովոռոսիյսկի շրջանում՝ Ցեմենսի և Ռիբացի ծովախորշերի ու Կաբրադինկայի շրջանում: Դիվիզիան մտավ Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան գորախըմբի 47-րդ համազորային քանակի կազմի մեջ: Այդ ժամանակ միավորման անձնակազմը բաղկացած էր 11463 մարդուց, որոնցից հայեր էին 11125-ը, այսինքն՝ անձնակազմի 97 %-ը²⁸: Դիվիզիայի հրամանատարն էր կադրային վիճակորական գնդապետ Պավել Նիկոլաևիչ Կիցուկը:

Սեպտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 26-ը դիվիզիայի գորամասերը դաժան մարտերում մկրում ձախողեցին Նովոռոսիյակի վրայով Անդրկովկաս ներխուժելու հիտերյան պլանը՝ ամրողութին շահաջախեռվ 3-րդ ռումինական լեռնահաձգային դիվիզիան, ապա Տուապսի պաշտպանական շրջանում 18-րդ քանակի կազմում արյան գնով թույլ չուվեցին թշնամուն անցնել լիննանցքները Փշիշ գետ - Սեմաշտ լեռ - Գոյթ - Շահումյան ավան տեղամասում: Կատարի մարտեր էին մղվում յուրաքանչյուր քար-

²⁸ Տես նույն տեղում, ֆ. 56, ց. 12214, գ. 996, թ. 148, 408-րդ հրաձգային դիվիզիայի ֆ., ց. 1, գ. 13, թթ. 1 - 5:

²⁹ Տես նույն տեղում, 408-րդ հրաձգային դիվիզիայի ֆ., ց. 1, գ. 1, թ. 2, ց. 2, գ. 41, թ. 48:

ձունքի, անտառային ամեն մի արահետի ու մի թիվ հողի համար: Հակառակորդը ինքնաթիռներից դիվիզիայի գրաված դիրքերում գտնվող անտարի վրա դյուրավառ հեղորկ էր թափում: Անտառն այրվում էր, բայց, չնայած դրան, դիվիզիայի մարտիկները, հրամանատարներն ու քաղաքաստողները հերոսարար դիմադրում էին թշնամուն, ծանր կորուստներ պատճառում նրան և այդպիսով վիճեցրին Տուապսն հասնելու նրա պլանը:

Հոկտեմբերի 26-ին դիվիզիային հաջողվեց գուրս գալ շրջապատումից և կենտրոնանալ Սադովոդստվո - Պատուկ լեռ - Լյամի խուսոր շրջանում: Փըրկված էր դիվիզիայի դրոշը, անձնակազմի վզայի մասը, մարտական տեխնիկան: Նոյեմբերի 5-ին շրջապատումից դուրս եկավ նաև 963-րդ հրետանային գնդի հերոսարար մարտնչած 3-րդ դիվիզիոնը, որի անձնակազմի շատ անդամներ պարզաբանվեցին մարտական շքանըշներով ու մերգալներով²⁹:

Նոյեմբերի մկրեներին դիվիզիան առաջավոր գծից տեղափոխվեց 18-րդ բանակի ոնքերկ Տուապսն քաղաք, հանգրատի և համարման համար: Այստեղ էլ Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան խմբագրման հրամանատարության նոյեմբերի 22-ի հրամանով դիվիզիան կազմացրվեց: Նրա հիմքի վրա մի քանի օր անց կազմավորվեց 7-րդ առանձին հրաձգային բրիգադը, որը 1943 թ. հունվարի 3-ից մարտերի մեջ մտցվեց Կրասնոդարի երկրամասում, 47-րդ բանակի կազմում³⁰: 1943 թ. ապրիլի վերջին և մայիսի մկրեներին բրիգադը վերակազմավորվեց 23-րդ հրաձգային դիվիզիայի, որը 47-րդ քանակի կազմում աշքի ընկած Դնեպրի գետանցման, Կիևի և Ժիտոմիրի ապատագրման ժամանակ՝ արժանանալով «Կիևյան» և «Ժիտոմիրյան» պատվավոր անուններին: Դիվիզիան աշքի ընկած նաև Լեհաստանի ու Գերմանիայի տարածքներում տեղի ու-

²⁸ Տես նույն տեղում, Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան գորախըմբի ֆ., ց. 811, գ. 32, թթ. 81 - 82:

նեցած մարտերում, պարզեատրվեց Կարմիր դրոշի և Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշաններով և իր մարտական ուղին ավարտեց Էլբայի ափերին³¹:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գոյություն ունեցած հայկական պագային պորամիավորումներից միակը, որը չի կազմավորվել Հայաստանի տարածքում, 390-րդ հրաձգային դիվիզիան էր: Այն կազմավորվել է Վրաստանի Սահմարաձեն, Փոյթի և Զուգդիդի քաղաքներում ըստ ԽՍՀՄ Պաշտպանության պիտական կորմիսի 1941 թ. օգոստոսի 9-ի թիվ 459 որոշման՝ որպես ոչ պագային միավորում³²: 1941 թ. դեկտեմբերի 26–30-ը դիվիզիան փոխադրվեց Կերչի թերակղյուղի և մինչև 1942 թ. վեստրվարի վերջերը մարտնչեց Կորպիչ–Սևմտուկա բնագծում: Դիվիզիան մտնում էր Ղրիմի ռազմաճակատի 51-րդ բանակի կազմի մեջ: 1942 թ. վեստրվարի 24-ին դիվիզիայի հրամանատար Նշանակվեց գրնադապետ Զարյանը: Այդ օրվանից էլ ակրսվեցին դիվիզիայի վերակազմավորման աշխատանքները, որոնք ավարտվեցին մարտի կեսերին: Վերակազմավորման հետևանքով միավորումը դարձավ պագային և պաշտոնապես կոչվեց Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիա³³: Այն հիմնականում համալրված էր հայերով: 1942 թ. մարտի 13-ից հայերն լեզվով սկսեց լույս տեսնել դիվիզիայի «Հայկական սնայպեր» պաշտոնաթերթը: Վերակազմավորման և համալրման աշխատանքներն ընթանում էին մարտական պայմաններում, որի ընթացքում կորուստներն անխուսափելի էին, իսկ Հայաստանից համալրումներ ստանալը՝ համարյա անհնարին, ուստի դիվիզիայի անձնակազմի պագային տեսքը ժամանակի ընթացքում նույնպես փոփոխ-

վում էր: Այսպես, օրինակ, 1942 թ. ապրիլի 19-ի տվյալներով դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 9133 մարդուց, որոնցից հայեր՝ 5744, ռուսներ՝ 1162, մընացածը՝ այլ ազգերից³⁴:

1942 թ. մարտի 18-ից մինչև մայիսի 20-ը դիվիզիայի պորամանարը հերոսական մարտերով կասեցնում էին թշնամու կատաղի գրոհները, որոնք նպատակ ունեին ճեղքելու 51-րդ բանակի պաշտպանությունը և դուրս գալու Կերչի ծովածոց: Մարտի 31-ին մահացու վիրավորվեց գնդապետ Զարյանը: Ապրիլի 2-ին նա մահացավ ստացած վերքից: Խորհրդային Հայաստանի կառավարության և Ղրիմի ռազմաճակատի հրամանատարության որոշմամբ գնդապետ Զարյանի աջոյնը փոխադրվեց Երևան և թաղվեց մայրաքաղաքի Ս. Ս. Կիրովի անվան մանկական վրուագում³⁵: 1942 թ. ապրիլի 1-ին դիվիզիայի հրամանատարությունն ստանձնեց գնդապետ հվան Բյիշ Լյուդնիկովը (հետագայում՝ գիներալ-գնդապետ, Խորհրդային Միության հերոս): Ապրիլի 17-ին Ի. Ի. Լյուդնիկովը նշանակվեց 138-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, իսկ նրան փոխարինեց գնդապետ Հմայակ Գրիգորի Բարայանը (հետագայում՝ գիներալ-մայոր, Խորհրդային Սինության հերոս, 338-րդ հրաձգային դիվիզիայի, ապա 35-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, զոհվեց 1945 թ. ապրիլի 22-ին Բնույնի ճակատամարտում):

Սայիսի առաջին տասնօրյակին Ղրիմի ռազմաճակատի գորքերի դրությունը խստ վատացավ, եթե հակառակորդը, նորանոր ուժեր կուտակելով, մայիսի 7-ին անսակ հարձակման: Նրան հաջողվեց ռազմաճակատի ձախ քենում ճեղքել 51-րդ բանակի պաշտպանությունը և շարժվել Շուրքական պատնեշի ուղղությամբ: 51-րդ բանակի զորքերն արիարար հետ էին մորում հակառակորդի ճակատային գրոհները, միաժամանակ

³¹ Ազերի մանրամասն տես Ս. Ս. Սարգսյան, Արքող անտում: Ե., 1965, Ս. Ս. Հակոբյան, Հերոսական մարտերում, Ը. Մ. Տարկոսյան. 408-րդ Արմանական պայմաններում պայմանական պայմաններում էր անհաջող մարտերում անհաջող մարտերում:

³² Տես ՌԴ ՊՆԿԱ, 390-րդ հրաձգային դիվիզիայի ֆ., ց. 1, գ. 4, թ. 1:

³³ Տես նույն տեղում, Ղրիմի ռազմաճակատի ֆ., ց. 1188, գ. 3, թթ. 11–14:

³⁴ Տես նույն տեղում, ց. 1199, գ. 3, թթ. 289–294:

³⁵ Տես «Սովետական Հայաստան», 1942 թ. ապրիլի 5:

միջոցներ փնտրում ճնշվածքը փակելու համար: Այդ նպատակով մայիսի 8-ին բանակի հրամանատարը Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան Ագիրենի շրջանից տեղափոխեց Արմա-Էլի: Առաջին նշված բնագիծ հասավ մայրու Մուշեղ Սելքոնի Մալխասյանի 789-րդ հրաձգային գունդը, որի հերոսական ջանքերով հաջողվեց այդ տեղամասում կանգնեցնել հակառակորդի առաջխաղաղումը: Դա դիվիզիայի հիմնական ուժերին հընարարություն տվեց կրակային դիրքեր գրավելու հատկացված բնագծում: Ճնշվածքը փակելու նպատակով բանակի հրամանատարությունը փորձում էր այստեղ կենտրոնացնել նաև այլ ուժեր: Սակայն հակառակորդի ավելացնայի արտակարգ բարձր ակտիվության, ինչպես նաև ծանր հրետանու հարվածների հետևանքով այդ ուժերի մի զգալի մասը չկարողացավ կատարել մարտական առաջդրանքը և ծանր կորուստներ կրեց: Ռմբակոծության հետևանքով հրամանատարական կետում զրիվեցին 51-րդ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Վ. Ն. Լիվովը և նրա հետ եղած մի շաբը բարձրաստիճան հրամանատարները³⁶: Ծանր կորուստներ կրեց նաև Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան: Ռմբակոծության ժամանակ մայիսի 9-ին Արմա-Էլի շրջանում զրիվեց դիվիզիայի կոմիսար Թորգում Շահինյանը, վիրավորվեց հրամանատար գնդապետ Հմայակ Բաբայանը: Հրամանատարին փոխարինեց դիվիզիայի հրետանու պետ գնդապետ Բագրատ Լսոնի Դամելյանը, կոմիսարին՝ քաղաքանի պետ ավագ գումարտակային կոմիսար Լիպարիտ Սերոբի Վարդանյանը:

Շայած 51-րդ բանակի ռազմիկների հերոսական դիմաքրությանը՝ նրանց շնչառվեց կասեցնել հակառակորդի առաջխաղաղումը: Մինչև մայիսի 14-ը գերմանական զորքերը Կերչից 3-4 կմ հարավ ընկած տեղամասում դուրս եկան նեղուցի ափերը և հիմնական ուժերից կարեցին դեպի Էլտիգեն և Կամիշ-Բու-

³⁶ Տես C. M. Սարկոսյան. 51-յա Արմիա. Մ., 1983, ս. 68.

րուն հետ քաշվող խորհրդային զորամասերից շատերին: Ի վերջո մայիսի 14-ին հակառակորդին հաջողվեց հարավ-արևմուտքից ճնշել խորհրդային զորքերի պաշտպանությունը և դուրս գալ Կերչի արվարձանները: Հաջորդ օրը Կերչ քաղաքը գրավվեց գերմանական զավթիչների կողմից³⁷: Դրությունը դարձավ անհուսալի, ուստի Հյուսիս-կովկասյան ուղղության գլխավոր հրամանատար, Խորհրդային Սիության մարշալ Ս. Ս. Բուդյոննին, Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանի թույլտվությամբ, հրաման տվեց Ղրիմի ռազմակայանի զորքերը Կերչի թերակղուուց դուրս բերելու մասին: Մինչև 1942 թ. մայիսի 20-ը ռազմաճակատի զորքերը կազմակերպված ձևով դուրս բերվեցին Կերչից և կենտրոնացվեցին Թամանի թերակղուում: Նրանց թվում էր նաև Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան, որը, չնայած հակառական կորուստներին, պահպանել էր մարտական դրոշները: Դիվիզիան կենտրոնացվեց Ստարոտիտարովկայի շրջանում, որտեղ ԽՍՀՄ պաշտպանության ժողովում, որտեղ ԽՍՀՄ պաշտպանության ժողովում 1942 թ. հունիսի 14-ի թիվ 00124 հրամանով կազմացրվեց³⁸:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմակորված հայկական պագային զորամիավորումներից միայն մեկը էր, որ չմասնակցեց մարտական գործողություններին: Այդ միավորումը 261-րդ հրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել էր Երևանուու, Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարության 1942 թ. հոկտեմբերի 8-ի թիվ 00431 հրամանով: Ռազմակատի հրամանատարի 1942 թ. հոկտեմբերի 17-ի թիվ 00476 հրամանով դիվիզիան կոչվեց «Հայկական»³⁹: Հայկական 261-րդ դիվիզիան մտնում էր Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի կազմի մեջ: 1943 թ.

³⁷ Տես «Օսвобождение городов». М., 1985, с. 110.

³⁸ Տես ՌԴ ՊՆԿԱ, Տնտեսական 1941—1945 թթ. Կարմիր բանակի կազմում գոյւթյուն ունեցած դիվիզիաների մասին, գույքային հմ. 6393, էջ 699:

³⁹ Տես ՌԴ ՊՆԿԱ, Անդրկովկասյան ռազմաճակատի Փ., ց. 990, գ. 2, թ. 175:

սկզբներից հայերեն լեզվով սկսեց լույս տեսնել դիվիզիայի «Մարտ հանուն Հայրենիքի» պաշտոնաթերթը: Դիվիզիայի առաջին հրամանատարը գեներալ-մայոր Վասիլի Տիմոֆեևիչ Սալովն էր, որին հետագայում փոխարինեցին գնդապետներ Բագրատ Սարգսի Միտոյանը, ապա Ներսես Փարսի Բարյանը: 1941 թ. դեկտեմբերի տվյալներով դիվիզիայի անձնակազմը բաղկացած էր 8981 մարդուց, որոնցից հայեր՝ 6632, կամ 73,8 %, ոռուներ՝ 1339, ուկրաինացիներ՝ 567, այլ ազգերից՝ 443 մարդ⁴⁰:

Այս կազմը, անշան փոփոխություններով, պահպանվել մինչև պատերազմի վերջը: Այսպես, օրինակ, 1945 թ. մարտի 1-ի տվյալներով դիվիզիայում հաշվում

⁴⁰ Տե՛ս ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 56, ց. 12214, գ. 877, թ. 5:

էր 9439 մարդ, որոնցից հայեր՝ 7813, կամ 83 %, ուռւներ՝ 948, ուկրաինացիներ՝ 358, մանադները՝ այլ ազգերից⁴¹: Դիվիզիայի հիմնական խնդիրներն էին ԽՍՀՄ պիտական սահմանի պաշտպանությունը և ուղմանակատի համար երթային գումարտակների պատրաստումն ու ուղարկումը: Մինչև իր կազմացրումը (1945 թ. հունիսի) դիվիզիան պատվով կատարեց իր առջև դրված խնդիրները: Երաշարքում մարտական պատրաստություն ստացած ավելի քան 10000 հայ զինվոր ու սպա մեկնեցին ուղմանակատ և իրենց արժանի ավանդը ներդրեցին գերմանացիանական զավթիչների ջախջախման գործում:

⁴¹ Տե՛ս Մուլյա տեսուրը, 261-րդ իրադադարին դիվիզիայի ֆ., ց. 1, գ. 1, թթ. 7–10:

АРМЯНСКИЕ ДИВИЗИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941–1945 ГГ.)

К. А. АРУТИЮНЯН, доктор исторических наук

РЕЗЮМЕ

В составе ВС СССР в Великой Отечественной войне принимали участие 6 армянских национальных стрелковых дивизий, и еще 7 дивизий (не национальных) были сформированы и в значительной степени укомплектованы армянами.

76-я им. К. Е. Ворошилова краснознаменная горно-стрелковая дивизия была создана в Ереване 5 сентября 1922 г. на базе Армянской сводной бригады. С 25 августа 1941 г. дислоцировалась в Тавризе (Иран). С 27 сентября 1941 г. до конца войны принимала самое активное участие в сражениях на советско-германском фронте. Боевое крещение приняла в районе Полтавы (Украина). Завершила войну на Курляндском полуострове. Прошла с боями более 12000 км, уничтожила более 50000 и взяла в плен 15000 фашистских солдат и офицеров, освободила более 1000 населенных пунктов. Особо отличилась в Сталинградском сражении, на Курской дуге, при форсировании Западной Двины. 23 ноября 1942 г. преобразована в 51-ю гвардейскую. Награждена орденом Ленина (19.06.1943). За активное участие в окружении и разгроме крупной группировки противника в районе Витебска удостоена почетного наименования «Витебской», а полки – «Полоцких». Получила 6 благодарностей от ВГК. Около 20000 воинов дивизии награждены орденами и медалями, 26 человек стали Героями Советского Союза, а 7 человек – полными кавалерами ордена Славы.

89-я Армянская Таманская дивизия сформирована в Ереване в конце 1941 г. Боевое крещение получила 18 августа 1942 г. в битве за Кавказ. Завершила войну на Эльбе (единственное национальное формирование, при-

нявшее участие в штурме Берлина). Прошла с боями 7250 км., освободила более 900 населенных пунктов. Особо отличилась в битве за Кавказ, при освобождении Керченского полуострова, Крыма и Польши и взятии Берлина. За успешный прорыв сильно укрепленной обороны противника на Таманском полуострове (так называемой «Голубой линии») удостоена почетного наименования «Таманской», а полки — «Севастопольских», награждена орденами Красной звезды (24 апреля 1944 г.), Красного знамени (24 мая 1944 г.), Кутузова II степени (28 мая 1945 г.). Более 12000 воинов дивизии награждены орденами и медалями, 9 человек стали Героями Советского Союза, 8 — полными кавалерами ордена Славы.

409-я армянская стрелковая дивизия формировалась с августа 1941 г. в Степанаване как не национальное формирование (с 3 февраля 1942 г. официально «Армянская»). Боевое крещение получила 8 декабря 1942 г. в битве за Кавказ. Войну завершила в районе Праги. Особо отличилась в боях за Кавказ, при освобождении Кировограда (Украина) и Братиславы (Словакия). Награждена орденом Богдана Хмельницкого II степени (29 марта 1944 г.), удостоена почетного наименования «Кировоградской» (8 января 1944 г.) и «Братиславской» (4 апреля 1945 г.). Многие воины удостоены различных боевых наград.

408-я стрелковая дивизия формировалась с августа 1941 г. в районе Варшапата (Эчмиадзин) как не национальное формирование (с 5 марта 1942 г. официально «Армянская»). Боевое крещение приняла 18 сентября 1942 г. в битве за Кавказ (в районе Новороссийска и Туапсе). До этого охраняла 95 километровый участок южной границы СССР с Турцией, а также готовила и отправляла на фронт маревые роты (более 10000 бойцов, командиров и политработников). Завершила войну на Эльбе. Особо отличилась в битве за Кавказ, где с большими потерями вышла из окружения, сохранив знамена. На базе дивизии в ноябре 1942 г. была сформирована 7-я отдельная стрелковая бригада, в конце апреля — начале мая реорганизованная в 23-ю стрелковую дивизию, которая отличилась при форсировании Днепра, в боях за Киев и Житомир, а также в Польше и Германии. Удостоена почетных наименований «Киевская» и «Житомирская». Награждена орденами Красного знамени и Суворова II степени. Многие бойцы удостоены высоких правительственные наград.

390-я стрелковая дивизия — единственная из «Армянских» сформирована не в Армении а в Грузии (Махарадзе, Поти, Зугдиди) в качестве не национального формирования. С конца декабря 1941 г. по февраль 1942 г. вела боевые действия на Керченском полуострове. 24 февраля 1942 г. командиром дивизии был назначен полковник Симон Закиян, были начаты работы по реорганизации дивизии. В результате этого большинство личного состава составили армяне, и дивизия получила официальное наименование «Армянской». В марте — мае 1942 г. вела героическую оборону на Керченском полуострове. Расформирована в июне 1942 г.

261-я стрелковая дивизия — единственная из армянских дивизий, не принявшая участия в боевых действиях. Предназначалась для охраны государственной границы и подготовки для фронта маревых батальонов (на фронт были отправлены более 10000 человек).

ARMENIAN DIVISIONS IN THE YEARS
OF GREAT PATRIOTIC WAR (1941 – 1945)

K. A. HAROUTUNIAN, *Doctor of Historical Sciences*

SUMMARY

In composition of the AF of the USSR 6 Armenian national shooting divisions took part in the Great Patriotic war and 7 divisions (not national) were formed and substantially completed with Armenians.

The 76-th after K. E. Voroshilov, Red Banner mountain-shooting division was created in Yerevan on September 5 1922 on the basis of the Armenian combined brigade. Since August 25 1941 being stationed in Tavriz (IRAN). Since September 27, 1941 up to the end of war it had the most active participation in battles on the Soviet-German front. Baptism of fire adopted in area of Poltava (Ukraine) and ended the war on Kurland peninsula. More than 12000 kms tramped with fights, destroyed more than 50000 and took in captivity 15000 fascist soldiers and officers, liberated more than 1000 occupied inhabited localities. It especially was distinguished in Stalingrad battle, on a Kursk arch, at forcing western Dvina, and was awarded with Orders of Lenin (19.06.1943). By November 23 1942 it was transformed into 51-st Guards. For active participation in encirclement and rout of a large grouping of the enemy in area of Vitebsk division was conferred the honourable name of «Vitebsk», and the regiment – «Polotsk». Six times the division deserved gratitude from the Supreme High Command. About 20000 soldiers of the division were awarded with Orders and medals, 26 men became the Heroes of the Soviet Union, and 7 men-Complete Holders of Order of Glory.

The 89-th Armenian Tamanian division was formed in Yerevan at the end of 1941. Baptism of fire adopted on August 18, 1942 in the battle for Caucasus, and ended the war on Elbe (the only national formation which took part in storm of Berlin). It tramped with fights 7250 kms., liberated more than 900 occupied inhabited localities, and especially was distinguished in the battle for Caucasus, at liberating Kerch peninsula, Crimea both Poland and for capture of Berlin. For successful breakthrough of strongly fortified defense of the enemy on Tamanian peninsula (the so-called «Light-blue line») it was conferred the honourable name «Tamanian», and the regiment – «Sevastopol», was awarded with Orders of Red Star (April 24, 1944), Red Banner (May 24, 1944) Kutuzov II degree (May 28, 1945). More than 12000 soldiers of the division were awarded with Orders and medals, 9 men became Heroes of the Soviet Union, 8 – Complete Holders of Order of Glory.

The 409-th Armenian shooting division was formed since August, 1941 in Stepanavan as not a national formation (since February 3, 1942 officially «Armenian»). Baptism of fire adopted on December 8 1942 in the battle for Caucasus. The war ended in area of Prague. It especially was distinguished in fights for Caucasus, at liberating Kirovograd (Ukraine) and Bratislava (Slovakia). The division was awarded with the Order of Bogdan Khmelnitskiy II degree (March 29, 1944), conferred the honourable name «Kirovograd» (January 8, 1944) and «Bratislavsky» (April 4, 1945). Many soldiers were conferred various fighting awards.

The 408-th shooting division was formed since August, 1941 in area of

Vagharshapat (Etchmiadzin) as not a national formation (since March 5, 1942 officially «Armenian»). Baptism of fire adopted on September 18 1942 in the battle for Caucasus (area of Novorossisk and Tuapse). Before that it had guarded 95 kilometer sites of southern border of the USSR with Turkey both trained and sent foot-drill companies on front (more than 10000 warriors, commanders and political workers). The war ended on Elbe. It especially was distinguished in battle for Caucasus, where suffering great losses came out of the encirclement, thus having kept banners. On base of the division in November 1942 the 7-th separate shooting brigade was formed, at the end of April and at beginning of May being reorganized in the composition of the 23-nd shooting division, which was distinguished at forcing of Dnieper, in fights for Kiev and Zhitomir, and also in Poland and Germany. It was conferred honourable name of «Kiev» and «Zhitomir», awarded with Orders of Red Banner and Suvorov II degree. Many soldiers were conferred governmental high awards.

The 390-th shooting division—the only one among Armenian divisions hadn't been formed in Armenia, but in Georgia (Makharadze, Poti, Zugdidi) as not a national formation. Since the end of December, 1941 till February, 1942 conducted fighting actions on Kerch peninsula. By February 24 1942 after nomination of the division commander Simeon Zakiyan the works on reorganization of the division started. As a result of it the majority of the personnel was formed by Armenians, and the division received official name «Armenian». From March till May 1942 it heroically organized and carried out defense on Kerch peninsula and was disbanded in June 1942.

The 261-st shooting division—the only one among Armenian divisions had no participation in fighting actions. Its duty was to guard the state border and train foot-drill battalions for front (more than 10000 men were sent on front).

ԽՈՐՀՈՒԱՅԻՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

Ա. Բ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, գվարդիայի պաշտոնաթող մայոր

Վեհաջունչ է Ավարայրի (451 թ.) ո-
քին: Վեհաջունչ է Սարդարապատի
(1918 թ.) ոգին: Վեհաջունչ է Հայրենա-
կան մեծ պատերազմի (1941—1945 թթ.)
հայ վինվորների ոգին, որքան էլ ումանք
փորձեն կերծել մեծ հաղոանակի պատ-
մությունը, կամացի տակ դնել այդ պա-
տերազմի արդար, ազատագրական բը-
նույթը. Վարկարեկել ոռւսական և խոր-
հորդային վինվորների զանգվածային
սիրանքը: Եվ այդ հաղթանակում մեծ է
խորհրդային գվարդիայի դերը:

Հայերը կովել են իր մասշտաբնե-
րով նմանը չունեցող այդ պատերազմի
առանց բացառության բոլոր ռազմաճա-
կատներում, և ցամաքում, և երկնքում,
և ծովում: Նրանցից շատերը կանգնած
են ենել խորհրդային գվարդիայի ա-
կունքներում, պատվով պաշտպանել են
նրա բարձր համբակը:

«Գվարդիա» բառը իտակերն է՝
guardia, որ բառայի նշանակում է պաշտ-
պանություն: Ժամանակակից յմաստով
«գվարդիա» տերմինն առաջին անգամ
օգտագործվել է 12-րդ դարում: Ալգորում
գվարդիա էին կոչվում պետության դե-
կագարի կամ զորագիտի անձնական
պահպանությունն իրականացնող ջո-
կատները, այնուհետև՝ բանակի ընտրու-
յալ արտոնյաց զորամասերը, որոնք աշ-
քի էին ընկույտ լավագույն վինվածութ-
յամբ, հանդերձանքով, մարտական պատ-
րաստականությամբ, հանձնարարված
գործի նկատմամբ մեծ նվիրվածութ-
յամբ: Տերմինն իր մեջ կրում է մարտա-
կան սիրանքի բարձր ոգին, ազնիվ ոռ-
մանտիկական շունչը: Եթե խոսում են
գվարդիայի մասին, ապա առաջին հեր-
թին նկատի են ունենում անօրինակ ա-
րիությունը, հաղթանակի հասնելու ան-
կոտրում կամքը, մեծ մարտական խի-

պախությունը, պարտքի բարձր զգացու-
մը, օրինակելի կարգապահությունը:

Գվարդիան առավել մեծ տարածում
է ստացել Ֆրանսիայում, Անգլիայում,
Շվեդիայում, Գերմանիայում, Ռուսաս-
տանում: Հայաստանում համանման
դեր էին կատարում թագավորի «թիկնա-
պահ գունդը» և «արքունի գունդը», կամ
«ոստան գունդը», որի գինվորները կոչ-
վում էին ոստանիկներ: 18-րդ դարում
Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 16-
րդի օրոր գվարդիան նաև սպաների
պատրաստման դպրոց էր: Ֆրանսիա-
կան մեծ բուրժուական հեղափոխու-
թյան (1789—1794) ժամանակ թագավոր-
ական գվարդիան վերացվեց և փոխա-
րենն ստողծվեց ազգային գվարդիա: 1805 թ.
բոլոր զորատեսակների և նավա-
տորմի ընտրյալ վինվորներից Նապո-
լեոնը կազմակերեց կայսերական գվար-
դիան, որը Ռուսաստանի դեմ արշա-
վանքի նախօրենին (1812 թ.) բալկացած
էր 22 հետևազորային և 7 հեծելազորա-
յին գնդերից, 13 հրետանային վաշտից և
այլ ստորաբաժանումներից՝ ընդամենը
60 հազար մարդ: Ի դեպ, 1809 թվականից
տարբերակում էին այսպես կոչված Հին
և Երիտասարդ գվարդիաներ:

Գվարդիայի հությունն ավելի լավ
ներկայացնելու համար հիշեցնենք Հին
գվարդիայի մարտական կյանքից մի
դրվագ, որը կապված է 1815 թ. հունիսի
18-ին տեղի ունեցած Վատենոլոյի ճակա-
տամարտի հետ: Այդ ճակատամարտում
Նապոլեոնի հրամանատարությամբ ֆր-
անսիական բանակը (71947 մարդ, 243
իրանոր) դիմակայում էր նվիրված կամքական պատությունների դաշնային զորքերին (67655 մարդ, 156 իրանոր), որոնց ընդ-
հանուր հրամանատարն էր անգլիացի
դուքս Վելինգտոնը: Ճակատամարտի

Ավագում ֆրանսիայիներին (մարշալ Նեյ) հաջողից գրավել Լա-Է-Սենտ ազարակը և ամրանադ այնտեղ ու Ուկումոն ազարակում: Սակայն վրա հասած պրուսական բանակի (մարշալ Բյուխեր) հակահարվածը ֆրանսիայիների աշ թեին՝ հնարավորություն տվեց Վելինգտոնին ձեռնարկելու ընդհանուր հարձակում: Ֆրանսիական զորքերն ընկրկնեցին և փախուստի դիմեցին: Եվ միայն Հին գրաքարդիան գեներալ Կամբրոնի գլխավորությամբ, կազմելով կարե¹, պահպանելով կարգուկանոն, հանդարտ և հաստատուն քայլերով առանց խուճապի մտտնվելու իր համար ճանապարհ էր բացում քշնամու շարքերի միջով: Անգլիայի գնդապետ Հեննետը, հիմաց ֆրանսիայիների քաջությամբ և կարգապահությամբ, գվարդիային առաջարկեց հանձնվել պատվավոր պայմաններով: Ի պատասխան այդ առաջարկին Կամբրոնն արտասանեց պատմության տարեգրության մեջ մտած իր հոչակավոր ասուլյթը՝ *«La garde meurt et ne se rend pas»*²: Եվ իրանոթների թնդյունների ու վիրափորների հառաջանքների տակ, փորորկվող իրեն ծովով միջով Հին գվարդիան կարելի հավասար շարքերով, հանդարտ ու հաստատուն քայլերով առաջ անցավ իր առջև ճանապարհ բացած քշնամու շարքերի միջով:

Բուրբոնների վերականգնման շրջանում (1815 – 1848 թթ.) գվարդիան նախ կրծատվեց, ապա՝ վերացվեց: Նապեոն 3-րդի օրոր գվարդիան կրկին վերականգնվեց:

Գերմանիայում գվարդիան ստեղծվել է 17-րդ դարի վերջում, Ֆրիդրիխ I-ինի օրոք: 20-րդ դարի սկզբում գերմանական գվարդիան բարեկացած էր 11 հետևազորային և 9 հեծելազորային գնդերից: 1918 թվականին գվարդիան Գերմանիայում վերաբարձրվեց:

Առաջնային բանակում կանոնավոր

գվարդիական զորամասեր (Ելբ-գվարդիա) ստեղծվել են 1683 թ.՝ Պյուտը 1-ինի օրոք, «պոտենջիների»³ թիվից: Գվարդիականի անվանում նրանց շնորհվել է 1690 թ.: Գվարդիականները մեծ դեր խաղացին 1709 թ. հունիսի 27-ին Պոլոտավայի մոտ շվեդների նկատմամբ ռուսական բանակի հաղթանակի ձեռքբերման գործում: 19-րդ դարում ռուսական գվարդիայի ապայական կազմը բաղկացած էր հարուստ ու տիտղոսավոր ազնվականության ներկայացուցչիներից, իսկ պին-վորները հավաքագրվում էին Ֆիվիկապես ուժեղ բարձրահասակ, քաղաքականացնեալ հուսալի մարդկանցից:

Ռուս-հայկական առնչությունները, մասնավորապես ռազմական բնույթի կապերը, ունեն դարավոր պատմություն։ Դրանք կանոնավոր բնույթ են ստացել 10-րդ դարից հետո, երբ Կիևյան Ռուսակայի մաս իշխան Վլադիմիրը, ամուսնաւալով Բյուզանդիայի հայազգի կայսր Վասիլի 2-րդի քույր Աննայի հետ, պաշտոնապես ընդունեց քրիստոնեությունը։ Կան վկայություններ, որ Կուլիկովյան ճակատամարտում (1380 թ.) Վմիտորի Դոնակոյի ռուսական բանակի կազմում կռվել են հայորդիներ։ Սամափորապես, պոկածների թվում նշվում են Սնդրեյ Սերգիի կողմէն Սեմյոն Սեմյոնի անունները⁴։ Այս առնչությունները քաղաքական ձևավորում ստացան և էլ ավելի սերտ բնույթ կրեցին 18-րդ դարի սկզբում՝ Պոտոր 1-ինի օրոք։

Պյուտրի «պարսկական» արշավանքի ժամանակ Նրա ռազմակայանում էր գտնվում և ոռուսական բանակին մեծապես աջակցում էր Խորացի Օրու (Արան Պյուտր 1-ինը շնորհել էր ռուսական բանակի գնդապետին կոչում) ուղենակի Մի-

¹ Կարճ (Քրանսեբեն՝ քառակուսի)՝ հետևա-
գորի մարտակարգ այլափիսի քառակուսու ձեռվ,
որի յուրաքանչյուր կողմէ կազմում էր դեմքով դե-
պի ողբար նայող մարտաշարք կամ շարասյուն:

² Տրանսերեն. «Գվարդիան մեռնում է, բայց չի հանձնվում»:

³ «Պուտիշներ» (ոռուսերն՝ պօտեահներ) պօտեահներ կամ պօտեահնե զօնական զարգացման վորքը» պայտական ծառաներից և նրանց զավակներից կազմված ուսմական ջլկատներ՝ ստեղծած պատահի թագածաբառակ՝ Դյուրիի (Դյուր 1-ին) վերաճանաների համար։ Հետաքայում դրանց հիմքից են առեղքացին Պրետրածնական և Սևմոնովկան գնեները, որոնցով հիմք դրվել ուսական կանոնակիր բանակին ապա և զավարյահնէն»

⁴ Shu G. P. Агаян. Россия в судьбах армян и Армении. М., 1978, сс. 133—134.

Նաև Վարդապետը, որը 1716 թ. ձեռնադրվել էր Եպիսկոպոս և նշանակվել Սուլվայի հայկական թեմի առաջնորդ։ Այդ շրջանի հայ գորականներից առավել հայտնի էն 600 – 700 մարդուց կազմված հայոց հեծելավաշուի հրամանատար, որուսական բանակի առաջնի հայազգի գեներալ Աղապար Դի Խաչիկը (Լազար Խրիստոփորով) և հայ-վրացական հեծելավաշուի հրամանատար, որուսական բանակի գնդապետ Կուզաննենցը, որուսական և վրացական աղբյուրներում՝ Կուզինով։

Ռուսական գվարդիան իր 200-ամյա
պատմության ընթացքում մասնակցել է
Երկրի բոլոր պատերազմներին և գործ-
նականում բոլոր ճակատամարտերին՝
արժանանալով հավերժ փառքի: Նրա
շարքերում, ինչպես ընդհանրապես Ռու-
սաստանյան Կայսրության բանակում
ծառայել են և տարբեր ճակատամարտե-
րում աշխի ընկել ու բարձր վիճակության
պարգևների արժանայել զգալի թվով
հայագի վիճականներ: Սակայն
1918 թ. ռուսական գվարդիան, որը դա-
րձի ակզրում բարկացած էր 12 հետևազո-
րային, 4 իրաձգային և 13 հեծելազորա-
յին գնդերից, 3 իրենուանային բրիգադից,
1 սակրային գումարտակից, նավատոր-
մային առաջնակազմից և մի քանի գվար-
դիական նավերից, վերացվեց:

1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի առաջին ամիսներին, Ասովյանսկի ճակատամարտի ընթացքում, գերմանացիական վորքերը, ճեղքելով Արևմտյան ռազմաճակատի պաշտպանությունը, հուլիսի 19-ին գրավեցին Ելիյան և ատենձնեցին լավ ամրացված ռազմահենադաշտը Մոսկվայի վրա հարձակումը վերսկսելու համար։ Ռեզերվային ռազմաճակատի (հրամանատար՝ բանակի գեներալ Գ. Վ. Ժուկով) կազմում գործող 24-րդ բանակին (հրամանատար՝ գեներալ-մայոր Վ. Ի. Շակուտին) հրաման տրվեց անցնելու հակահարձակման, առատագրելու Ելիյան և վերացնելու ռազմահենադաշտը։ Այս օպերացիային, որն ստուգել է «Ելիյան օպերացիա» անվանումը և որը Սմոլենսկի ճակատամարտի

բաղկացուցիչ մասն էր, մասնակցում էին նաև Արևմտյան (հրամանատար՝ մարշալ Ս. Վ. Շիմոշենկո), Կենտրոնական (հրամանատար՝ գեներալ-գնդապետ Ֆ. Ի. Կուզնեցով) և Բրյանսկի (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Ա. Բ. Երյոմենկո) ռազմածակատների վորքերը։ Մի շաբթ հարձակողական և պաշտպանական գործողություններով կրանց հաջողինքն կանգնեցնել գերմանաֆաշիստական «Գենուրոն» բանակախմբի (հրամանատար՝ գեներալ-ֆելդմարշալ Ֆ. Ֆոն Բոլի) հարձակումը մուկովյան ռազմավարական ուղղությամբ և վերացնել թշնամու ռազմահենադաշտը։ Հենց այս օպերացիայում էլ ծնվեց խորհրդային գվարդիան։ ԽՍՀՄ պաշտպանության ժողովում 1941 թ. սեպտեմբերի 18-ի հմ. 308 հրամանով պաշտպանության ժամանակ յուրաքանչյան տոկունության, հարձակման մեջ՝ քաջության և արիության համար Արևմտյան ուղղության առանձնապես աշքի ընկած չորս դիվիզիաների՝ խորհրդային զինված ուժերում առաջինը շնորհվեց գվարդիականի կոչում։ Դրանք էին 100-րդ (հրամանատար՝ գեներալ-մայոր Ի. Ն. Ռուսիյանով), 127-րդ (հրամանատար՝ գնդապետ Ա. Զ. Ալիմենկո), 153-րդ (հրամանատար՝ գնդապետ, նոյեմբերի 9-ից՝ գեներալ Ն. Ա. Գագեն) և 161-րդ (հրամանատար՝

գնդապետ Պ. Ֆ. Մուսկվիտին) դիմիշիաները, որոնք վերանվանվեցին, համապատասխանաբար, 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ գվարդիական հրաձգային դիմիշիաներ։ Մեզունմբերի 21-ին գվարդիականի կոչում շնորհվեց 1-ին Մուսկովյան մոտոհրաձգային դիմիշիային (հրամանատար՝ Խորհրդային Միության հերոս, գնդապետ Ա. Ի. Լիպուկով)։ Մեզունմբերի 26-ին 64-րդ, 107-րդ և 120-րդ հրաձգային դիմիշիաները, որոնք նույնպես մասնակցել էին Ելյաջի օպերացիային, դարձան, համապատասխանաբար, 5-րդ, 6-րդ և 7-րդ գվարդիական հրաձգային դիմիշիաներ։

⁵ Shu նույն տեղում:

⁶ Shu «Великая Отечественная война Советского Союза. 1941—1945. Краткая история» (шվեյцарск. «ВОВ. Краткая история»). М., 1967, сс. 77—78.

մըն անմիջականորեն կապված է Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության քառակի հերոս, ԽՍՀՄ բարձրագույն գիտուական շքանշանի՝ Հաղթանակի շքանշանի կրկնակի ասպետ Գեորգի Կոնստանտինովիչ Շուկովի անվան հետ:

Առաջին հայ գվարդիականներն էին 127-րդ դիվիզիայի 395-րդ գնդի հրամանատար մայոր Համազասպ Խաչատուրի Բարաջանյանը (հետագայում՝ Խորհրդային Միության հերոս), 1-ին մոսկովյան մոտոհրածգային դիվիզիայի շտաբի օպերատիկ բաժնի պետ փոխգնդապետ Ներսես Փարսիի Բարյանը, 11-րդ բանակի 3-րդ մեխկորպուսի մոտոմեխմիագործան հրամանատար փոխգնդապետ Բախչի Միքայելի Հայրապետյանը, գվարդիական դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Սերգեյ Եսայու Կարապետյանը, կազմական գնդի հրամանատար մայոր Վարդան Վարդանյանը և շատ ուրիշներ: Խակ 329-րդ Միքիրյան հրածգային դիվիզիան գնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանի հրամանատարությամբ 1941 թ. մերձմոսկովյան շրջանում առաջինը մի այնպիսի հումկու հարված հասցրեց գերմանաֆաշիստական փորքերին, որ, ինչպես գրում է գերմանական փորքերի 2-րդ տանկային խըմբի հրամանատար գեներալ Հայնու Գունդի հարիանը, «զորամասերն ի վիճակի չէին դիմանալու այդ ճնշմանը: Գործը հասավ խուճապի, որը տարածվեց ուսպմածակատի՝ Դեղիլրուիլից մինչեւ Բոգորոդսկ ընկած հատվածում: Այդ խուճապը, որն առաջին անգամ էր ծագում ունաւկան ուսպմարշավի ժամանակ, դարձավ մի լուրջ նախազգուշացում այն բանի մասին, որ մեր հետևազորն սպառել է իր մարտապատրաստությունը և այլևս ունակ չէ մեծ ճիգեր գործադրելու»⁷:

Հայտկանշական է նաև 100-րդ (1-ին գվարդիական) դիվիզիայի աջ մար-

տական ուղին: Դա խորհրդային բանակի հնագույն դիվիզիաներից մենք էր այն կազմավորվել էր դեռևս քաղաքացիական պատերազմի տարիներին լիգնդար հերոս Նիկոլայ Շորսի կողմից: Դիվիզիան խնամքով պահպանում էր իր մարտական ավանդությունները, և առաջին խակ մարտերում նրա անձնակազմն ապացույցն որ պատրաստ է դրանք բազմապատկելու: Բելոռուսիայի մայրաքաղաք Մինսկի պաշտպանության ժամանակ դիվիզիայի մարտիկներն այլ գորամիագորումների վիճառայողների հետ արիարար դիմագրավում էին հակառակորդի կատաղի ճնշմանը: Այստեղ հակառակորդի տանկերի դեմ պայքարում առաջին անգամ կիրառվեցին վառեալիառնուրդը լցոնված շներ: Օրինակ տվել կապիտան Վ. Տերտիչնին, որը ոչնչացրեց թշնամու մի բանի վրահապատ մերենա: Հիտլերականներն այս մարտերում կորցրին շուրջ 300 տանկ, չորս գունդ հետևազոր, բայց հաղթահարել դիվիզիայի պաշտպանական մարտակարգը ի վիճակի չեղան: Եվ միայն այն ժամանակ, երբ հակառակորդը ձեռնարկեց խոր թեանցում, դիվիզիայի սուրբաթաժանումները կազմակերպված նահանջնեցին դեպի նոր բնագիծ՝ դիրքեր բռնելով Բերեզինա գետի մոտ: Այստեղ ևս դիվիզիան համառորեն դիմագրավեց հակառակորդի բազմաթիվ գրուներին, ճեղքեց հակառակորդի թեանցման հետևանքով ստեղծված լրիվ շրջափակումը և միացավ ուսպմածակատի հիմնական ուժերին՝ ոչնչացնելով թշնամու շուրջ 150 տանկ, 300 մոտոցիկլետ և 30 ավտոմերենա:

Սոսկվայի համար մղված մարտերում հատկապես աշքի ընկան 316-րդ դիվիզիայի (հրամանատար՝ գեներալ-մայոր Ա. Ի. Պանֆիլով) մարտիկները: Այսպես՝ 1941 թ. գենկաների 16-ին 28 պանֆիլովականներ քաղղեկ Վ. Գ. Կրոջլովի գլխավորությամբ Դուբուեկովով կայարանի մոտ (Կոլուղամսկ քաղաքից դեպի արևելք) տեղի ունեցած 4-ժամյա մարտերում ոչնչացրին 18 գերմանական տանկ, համարյա բոլորը զոհվեցին, բայց թշնա-

⁷ Հենրի Գյուդերան. Վօսպոմնանի սոլդատ. Ռոտով-նա-Դոնու, 1998, ս. 245.

մուն կանգնեցրին: Այստեղ էր, որ Կոչ կովն արտասանեց իր թևավոր դարձած խոսքը. «Ռուսաստանը մեծ է, բայց նա հանչելու տեղ չկա. հետևում Մոսկվան է»: Այդ սիրտանքի համար 316-րդ հրա-

բրիգադը: Ուժերն անհավասար էին. իիտլերականներն ունեին տասնակի գերազանցություն: Նման իրավիճակում բաց մարտի բռնվելն անմտություն կլիներ: Բրիգադի հրամանատարը որո-



76-րդ հայկական հրաձգային դիվիզիայի հեծյալ գնդի հրամկագմբ.
Երկրորդ շարքում ձախից չորրորդը՝ գնդի հրամանատար Հովհաննես Բաղրամյան
Երրորդ շարքում ձախից առաջինը՝ հեծեկավաշտի հրամանատար
Բ. Հայրապետյան (հեղինակի հայրը). Լենինական, 1925 թ. (հեղինակի անձնական արխիվից)

ձգային դիվիզիային շնորհվեց գվարդիականի կոչում, և նա վերանվանվեց 8-րդ գվարդիական հրաձգային դիվիզիա⁸:

Տանկային միավորումներից առաջինը գվարդիական դարձավ գնդապետ Մ. Ե. Կատուկովի 4-րդ տանկային բրիգադը: 1941 թ. հոկտեմբերին Գուդերիանի 2-րդ տանկային խմբի կազմից երկու տանկային և մեկ մոտոդիվիզիա գրավեցին Օրյոլ քաղաքը: Նրանք հարավից սպառնում էին Մոսկվային: Սպառնալիքը չեղորացնելու նպատակով Մցենքսկից նրանց ընդառաջ ելավ Կատուկովի

շեց կիրառել շարժունակ պաշտպանության մեթոդը: Օրյոլի և Մցենսկի միջև նա առանձնաყրեց վեց բնագիծ, որոնք վրացիցին իրեն ենթակա ստորաբաժանումները: Գործելով դարաններից, հակառակորդին հասցնելով հանկարծակի հարվածներ՝ խորհրդային տանկիստները պետք է ուժասպառ անեին նրան, ոչչայնեին նրա մարտական տեխնիկան: Եվ արդեն առաջին բնագծի հաղթահարման ժամանակ հիտլերականներըն ունեցան լուրջ կորուստներ: Նրանք մեծացրին իրենց ակտիվությունը, բայց նոր հարված ստացան երկրորդ բնագծ-

⁸ Տե՛ս «ՅՈՒ. Կրատկա պատմություն», էջ 123:

ծում: Այս մարտերում հատկապն վառ դրսերդվեցին խորհրդային S-34 տանկի առավելությունները գերմանական տանկերի նկատմամբ. այն գերազանցում էր դրանց կրաքի հզորությամբ, շարժունակությամբ և զրահապաշտպանությամբ: Հիտլերյան մամուլը աշխարհով մեկ տարածեց այն կեղծ լուրջ, թե իր խորհրդային հրամանատարությունը Օրյոլի շրջանում գործի մեջ է դրել տանկերի մեծ ուժեր, մինչդեռ իրականում այստեղ գործում էր միայն մեկ տանկային բրիգադ, որն ուներ ընդամենը 45 տանկ: Միայն 7 օր անց, ծանր մարտեր վարելուց հետո գերմանական զորքերը հասան Մցենակ՝ կորցնելով 133 տանկ, 50 հրանոթ և շուրջ մեկ գունդ հետևազոր: Խորհրդային տանկիատները կատարեցին իրենց առաջադրանքը և խափանեցին հակառակորդի հարձակումն այս ուղղությամբ⁹: Դրանով իսկ այնու դրվեց խորհրդային տանկային գվարդիային:

1943 թ. ամռանն ստեղծվեցին առաջին գվարդիական տանկային բանակները՝ 3-րդը և 5-րդը, որոնք կազմավորվեցին գվարդիական զորամասերից: Ընդամենը ենթակա է վեց գվարդիական տանկային բանակ: Ի դեպ, հպարտությամբ պետք է նշեմ, որ ես պատերազմի առաջին իսկ օրերից հորս հետ ուս ուսի մասնակցել եմ մարտերին 11-րդ բանակի 3-րդ մերքնայացված կորպուսի շարքերում՝ որպես 5-րդ տանկային դիվիզիայի (հրամանատար՝ գնդապետ Ֆյոդորով) շտաբի կապի մոտոցիկլային դասակի սպա, իսկ հայրս՝ փոխգնդապետ Բ. Ս. Հայրապետյանը, այդ ժամանակ 3-րդ մերքնայացված կորպուսի (հրամանատար՝ գեներալ-մայոր Ա. Վ. Կուրկին, շտաբի պետ՝ գնդապետ Պ. Ա. Ռուտմիստրով, հետագայում՝ 5-րդ գվարդիական տանկային բանակի հրամանատար) ավտովրահատանկային վարչության պետն էր, հետագայում՝ այդ ռազմաճակատի մոտոմերքնայացված միավորման հրամանատար: Այսուհետեւ ես գեներալ Պ. Ա. Ռի-

բալզոյի 3-րդ գվարդիական տանկային բանակի կազմում մասնակցել եմ Բեռլինի և Պրագայի հարձակողական օպերացիաներին:

1944 թ. փետրվարին 3-րդ գվարդիական տանկային բանակի հրետանու հրամանատար նշանակվեց գնդապետ



Գեներալ-մայոր Ն. Ա. Լովիհաննիսյան

(հետագայում՝ հրետանու գեներալ-մայոր) Նիկոլայ Ալեքսանի Հովհաննիսյանը: Նա մասնակցեց Լվով և այլ քաղաքների ապատագրմանը, Վերին Սիլիսիայի մարտերին, որտեղ էլ 1945 թ. հունվարին վոհվեց՝ իր կյանքը Նվիրաբերելով Լեհաստանի ապատագրմանը: Բանակի հրամանատար Պ. Ա. Ռիբալկոն շատ բարձր էր գնահատում իրետանու գործի նրա գերազանց իմացությունը, գվարդիականին վայել նրա համարձակությունն ու վճռականությունը մարտում, իրետանին ըստ իրադրության փոփոխության վերակողմնորոշելու նրա ընդունակությունը:

Սոսկվայի համար մղվող մարտերում ծնվեց նաև ռազմաօդային գվարդիան: Այդ բարձր պատվին առաջին արժանացավ 29-րդ կործանիչ գունդը, որը ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի հնա-

⁹Տես Հ. Ի. Վասիլյեվ. Ռոշենիա և բայք. Կ 25-ամյակի Սովետական Գվարդիա. Մ., 1966, ս. 10.

գույն գորամասերից մեկն էր: Այն սկիզբ էր առնում ոռուսական բանակի մի ավիայիոն ջոկատից, որի հրամանատարն է եղել հոչակավոր ոռուս օդաշու շտաբս-կապահուածն Պ. Ն. Նեստերովը, որի անունով է կոչվել ավիայիայի պատմության մեջ բարձրագույն օդաշուական արվեստի հնարներից մեկը՝ «մեռյալ օդակ», կամ «Նեստերովի օդակ», կոչվող հնարքը: Հետագայում այս գնդում են ծառայել այնպիսի հոչակավոր օդաշուներ, ինչպես Վ. Պ. Զելյանը, Ս. Ի. Գրիգորյանը, Ա. Կ. Սերովը և ուրիշներ: Այս գունդը գործում էր 6-րդ կործանիչ ավիայիոն կորպուսի կազմում, և օդային մարտերի ժամանակ զընդի օդաշուները կործանեցին թշնամու 47 ինքնաթիռ: Այս կորպուսի 8 օդաշու (այդ թվում նաև հայտնի օդաշու Վիկտոր Տալալյանը, որն առաջիններից մեկը կիրառեց օդային խոյակարում հնարք) արժանացան Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման¹⁰:

Խորհրդային գործերի հականարձակումը՝ ձեռնարկված 1941–1942 թթ. ձրմուանը, նշանավորվեց խորհրդային գվարդիայի շարքերի գվալի համալրմամբ: Գրվարդիական գորամասեր դարձան 14 դիվիզիա, 3 հեծելազորային կորպուս, 2 հրաձգային և 5 տանկային բրիգադ, 9 հրետանային և 6 ավիայիոն գունդ:¹¹ Ընդհանրապես գվարդիական դարձան համապարկային կրակի ռեակտիվ հրետանու ստորաբաժանումները: Այս զինատեսակն առաջին անգամ կիրառվեց 1941 թ. հուլիսի 14-ին Օրջա քաղաքի համար մղված մարտերում: Այդ օրը ժամը 15-ն անց 15 րոպեին մարտկոցի հրամանատար կապիտան Ի. Ա. Ֆյորովի «Ֆաշիստական հորդաների վրա՝ համազարք» հրամանով յոթ հատ ԲՄ-13 «Կատյուշա» մարտական մերենաներ կատարեցին առաջին արձակումը թշնամու վրա: Թփուտով պատված ձորակի վրա բարձրացավ ծխի ու փոշու ամաց: Ցուրաբանչուր կայանը 15 վայրկանի ընթացքում արձակեց 16 132-մմ ռեակտիվ արկ: Օրջայի երկաթուղային կայարանում, որ

տեղ կանգնած էին ուսպմամթերքով և վառելանյութերով բնանված մեծ թվով գերմանական վագոններ, երկինք բարձրացան կրակի և ծխի հավայական այուներ, փայտի և երկաթի կտորներ: Մեկուկես ժամ անց մարտկոցը կրակ բացեց Օրջա գետի վրա կազմակերպված գետանցման ուղղությամբ՝ հակառակորդին պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ: Հիտլերականների շարքերում խուճապ առաջացավ, նրանք, ովքեր կինդանի էին մնացել, գերվեցին¹²: Ռեակտիվ հրետանու մարտկոցները նույնքան հաջող էին գործում նաև ուսպմածակատի մյուս հատվածներում: Ընդհանրապես «Կատյուշաների» համապարկերն ամբողջ պատերազմի ընթացքում մեծ վնաս էին պատճառում հակառակորդին՝ նրա շարքերում խուճապ առաջ բերելով: Պատահական չէ, որ այդ կայանքները պաշտոնապես անվանվում էին գվարդիական ականանետներ:

1942 թ. գարնանը գվարդիա է ըստեղիվում նաև ուսպմածովային ուժերում: Սուաջինն այդ բարձր կոչմանն են արժանանում «Հրամանի Կազմագործ հածանավը, «Սուոյի» էկադրային ականակիրը, մեկ ականապատիշ, S-205 ականորսը և Դ-3, U-171 ու Կ-22 սուզանավերը: Այդ նաևների անձնակազմերը մեծ արիություն ու հերոսություն, հաղթանակի հասնելու անկուտրում կամք էին ցուցաբերել հակառակորդի հետ մարտերում: Այսպիսի Կ-22 սուզանավը, որի հրամանատարն էր 2-րդ աստիճանի կապիտան Վ. Կուտելինիկովը, հաջողությամբ գրոհել էր թշնամու տրանսպորտի վրա և տորպենդահարել այն: Սակայն տրանսպորտին հաջողվանը մնալ ջրի երեսին: Այդ ժամանակ սուզանավի հրամանատարն ընդունեց ուրոշում՝ բարձրանալ ջրի երես և թնդանոթից իրակոծելով ոչնչացնել այն: Եվ միայն ջրի երես բարձրանալուց հետո խորհրդային նավաստիները նկատեցին սուզանավով նավին օգնության շտապող եր-

¹⁰ Տես «ՅՈՒ. Կրաքակա պատմություն», էջ 142:

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես «Վելիկաя Отечественная война. 1941–1945. Кн. 1. Суровые испытания» (այսուհետև՝ «Суровые испытания»). М., 1998, с. 173.

կու ֆաշիստական ռազմանավ։ Սուվենիլ չէր կարելի, դրա համար ուշ էր. դա կնքանակեր հաստատ մահ։ Եվ Կոտելիսկովը հրամայում է մարտի բոնվիլ։ Սուվանապորդներն ակսենին անհավասար մարտը։ Կատաղի հրետանային փոխհրածըգությունն ավարտվեց խորհրդային նավատինիների հարթականակով։ Նախ ոչնչացվեցին հակառակորդի ռազմանավերը, ապա և տրանսպորտը¹³։

Այսուհետև գվարդիականի կոչում ստացան հետևյալ խորհրդային նավերը։ Հյուսիսային նավատորմի կազմում՝ Մ-56, ՇՀ-402, Մ-72, Մ-174, ՇՀ-422 սուվանավերը, Բարթիական նավատորմի կազմում՝ «Վիցե-ադմիրալ Դրոզ» էսկադրային ականավիրը, «Օլա» ականավատնեշադիրը, «Գաֆեր» ականնորոր, տորպեդային ու պահակային կատերների և ականորսների մի շարք դիվիզիոններ, ինչպես նաև Կրասնոսելսկի 1-ին ծովային հրետանային երկաթուղային կարմրադրուց բրիգադը, Անծովյան նավատորմի կազմում՝ Կրասնի Կրիմ» հածանավը, «Սոնդրապիտենի» էսկադրային ականավիրը, «Զաշշիտնիկ» ականորոր, ԱԿ-065 պահակային կատերը, Ս-33, ՇՀ-205, Տ-215, Մ-35 և Մ-62 սուվանավերը, Խաղաղօվկիանոսյան նավատորմի կազմում՝ «Օխոտսկ» ականապատնեշադիրը, «Մետեր» և ԱԿՌ-2 պահականավերը, Տ-278 և Տ-281 ականորսները, տորպեդային կատերների երկու դիվիզիոն, Ամուրի նավատորմի կազմում՝ «Ավերդով» մոնիշտորը, «Պրոլետարի» և «Կրասնայա վվեկդա» հրետանավերը և պահակամասներների երկու ջոկատ¹⁴։ Գվարդիականի կոչում ստացան նաև ՀՕՊ-ի և ՈՇՈՒ-ի, ավիայիայի և ափասահպանության մի շարք զորամասեր ու զորամիավորումներ։

Խորհրդային հայելական դիվիզիաների¹⁵ մարտական տարեգրության մեջ

կան շատ նշանակալից թվականներ, որոնց շարքում առանձնանում է 1942 թ. դեկտեմբերի 23-ը։ Այդ օրը Կ. Ե. Վորոշիլովի անվան 76-րդ կարմրադրու լառնահրածգային դիվիզիան (հրամանատար՝ գեներալ-մայոր Ն. Տ. Թավարքիլաձե) Ստալինգրադյան ճակատամարտի «Փոքր Սատուռն» օպերացիայի ժամանակ 21-րդ բանակի (հրամանատար՝ գեներալ Ի. Մ. Չիստյակով) կազմում կարեւոր հանգույց հանդիսացող Վիետակայաքանակավայրի ապատագրման համար վերակազմավորվեց Կ. Ե. Վորոշիլովի անվան 51-րդ գվարդիական կարմրադրու հրածգային դիվիզիայի՝ 21-րդ համագորային բանակի զորամիավորումների մեջ առաջինն արժանանալով գվարդիականի բարձր կոչման։

Ստալինգրադյան ճակատամարտի ավարտական փուլ դարձավ «Կոլցո» («Օդակ») օպերացիան։ Գերագույն գլուխավոր հրամանատարության ռազմակայանը, վորքերի կառավարումը բարելավելու և օպերացիայի նախապատրաստման ու իրագործման համար պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով, 1942 թ. նոյեմբերի 30-ի իր դիվակար հրահանգով Դոնի ռազմաճակատի կազմի մեջ փոխադրեց Ստալինգրադյան ռազմաճակատի 62-րդ, 64-րդ և 57-րդ բանակները (հրամանատարներ, համապատասխանաբար՝ գեներալներ Վ. Ի. Չույկով, Ս. Ս. Շումիլով, Ն. Ի. Տրուֆանով), ինչպես նաև Հարավ-արևմտյան ռազմաճակատի 21-րդ բանակը։ Դոնի ռազմաճակատի հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ (1943 թ. հունվարի 15-ին՝ գեներալ-գնդապետ) Կ. Վ. Ռոկոսովսկին։ Դոնահատնով իրագործյունը՝ ռազմաճակատի հրամանատարը որոշում ընդունեց արևմուտքից և արևելքից հանդիպակաց հարվածներով հատել հակա-

¹³ Տես Ն. Ի. Վասիլև, նշ. աշխ., էջ 11։

¹⁴ Տես «Եօլայա սովետական հնուկլոպեդիա», տ. 6. Մ., 1971, ս. 154։

¹⁵ Խորհրդային հայելական դիվիզիաները վեցն էին՝ 76-րդ լեռնահրածգային, 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ հրածգային դիվիզիաները։ Ձևել 1938 թ. հաստատվեց Կարմիր բանակի համարման միասնական համակարգ, և բոլոր ազգային

ուակորդի շրջափակված խմբավորումը երկու մասի, տպա ոչնչացնել դրանք: Այդ նպատակով հրաման տրվեց 21-րդ և 65-րդ (հրամանատար՝ գեներալ Պ. Ի. Բատով) բանակներին արևմուտքից, իսկ 62-րդ բանակին՝ արևելքից գրոհել Կուրասնի Օկտյաբր ավանի վրա: 1943 թ. հունվարի 26-ին ոռազմաճակատի զորքերը ձեռնամուխ են լինում իրենց առջև դրված խնդիրների կատարմանը, և նույն օրվա երեկոյան այդ ավանի շրջանում և Մամայան բլրի մոտ (որը Ստալինգրադի վրա իշխող բարձունք էր) տեղի ունեցավ 21-րդ և 62-րդ բանակների առաջադիր զորամասերի հանդիպումը, և այսպիսով հակառակորդի խմբավորումը բաժանվեց երկու մասի: Ի դեպ, 62-րդ բանակի 13-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 42-րդ հրաձգային գնդի հետ 21-րդ բանակի 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի կազմից առաջիններից մեկը հանդիպեց այդ դիվիզիայի Լոռիվա գունդը:

Այդ պատմական պահն ընդմիշտ մտավ Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ: Դիվիզիան ակտիվ մասնակցություն ունեցավ նաև հակառակորդի շրջապատված խմբավորումների ոչնչացման գործում: Այս գործությունների համար նա պարզեատըրվեց Լենինի շրանշանով, իսկ 21-րդ բանակը վերակազմավորվեց 6-րդ գվարդիական բանակի:

76-րդ լիոնահրաձգային դիվիզիան ստորդվել էր 11-րդ Կարմիր բանակի կազմում 1920 թ. կազմավորված Առանձին հայկական հրաձգային գնդի հիմքի վրա: 1922 թ. ամռանը և աշնանը Առանձին կովկասյան բանակի (ԱԿԲ) կազմում եղած ազգային բրիգադները վերակազմավորվեցին ազգային դիվիզիաների: ԱԿԲ 1922 թ. սեպտեմբերի 5-ի հմ. 1398 հրամանով Հայկական համահավաք բրիգադը վերանվանվեց Առանձին հայկական հրաձգային դիվիզիա, որի հրամանատար նշանակվեց Ա. Պ. Մելիք-Շահնապարյանը, կոմիսար՝ Տ. Ա. Հովսեփյանը, շտաբի պետ՝ Գ. Ֆ. Պրիտոմանովը: 1931 թ.

աշնանը դիվիզիան վերակազմավորվեց ըստ լիոնային կազմակերպվածքի հաստիքների և ստացավ Հայկական լիոնահրաձգային դիվիզիա անվանումը: 1931 թ. մարտի 15-ին դիվիզիայի հրամանատար նշանակվեց Ա. Տ. Աթոյանը, իսկ Մելիք-Շահնապարյանը նշանակվեց Կիևի հաստուկ զինվորական օկրուգի կորպուսի հրամանատար: ԽՍՀՄ ՄԿԳԿ նախագահության 1935 թ. գեներալմերերի 2-ի հրամանագրով դիվիզիան անվանակոչվեց Խորհրդային Միության մարշալ Վ. Ե. Վորոշիլովի անունով, իսկ 1936 թ. մայիսի 29-ին այն պարզեատըրվեց Կարմիր գործի շրանշանով: ԽՍՀՄ պաշտպանության ժողովածուի 1936 թ. մայիսի 21-ի հրամանով նրան տրվեց 76 թափամարդ, իսկ 1940 թ. հունիսի 16-ի հմ. 150 հրամանով Վ. Ե. Վորոշիլովի անվան Հայկական կարմրադրոշ լիոնահրաձգային դիվիզիան վերանվանվեց Վորոշիլովի անվան 76-րդ լիոնահրաձգային կարմրադրոշ դիվիզիա:

1941 թ. հունիսի 22-ին՝ պատերազմի առաջին օրը, դիվիզիայի զորամասերը պաշտպանում էին ԽՍՀՄ հարավային սահմանները: Անձնակազմի կենսից ավելին հայեր էին: Տարբեր տարիներ դիվիզիայում լույս էին տեսանում հայերն լեզվով թերթեր՝ «Կարմիր բանակային թերթ», 1-ին և 2-րդ գնդերում, «Կարմիր երկրային», 3-րդ գնդում, «Գրոհ», հեծյալ գնդում (Լենինականի հեծելագունդ), «Որոտ», հրետանային գնդում: Դիվիզիայում լույս էր տեսանում նաև «Վորոշիլովներ» թերթը, որի առաջատար աշխատակիցն էր հայ Ճանաչված գրող Հրաշյա Քոչարը:

Պատերազմի ընթացքում դիվիզիան անցավ ավելի քան 8000 կմ մարտական ուղի՝ պատագրելով շուրջ 1000 բնակավայր: Այդ տարիներին նրա զորամասերին հայտարարվել է Գերագույն գլխավոր հրամանատարի 6 շնորհակարություն, 19114 վիճոր պարզեատըրվել են շրանշաներով ու մեղաղներով, 26 վիճոր արժանացնել են Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման, 9-ը փառքի շրանշանի լրիվ ասպետ էին: Հերոսների

թվում էր գվարդիայի եֆրեյտոր Արամայիս Ասատորի Սարգսյանը (Սարգիսվ), որին ԽՍՀՄ Գերազույն խորհրդի 1944 թ. Խուլիսի 22-ի հրամանագրով հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում՝ իր կյանքի գնով հրա-



Խորհրդային Միության հերոս
գվարդիայի եֆրեյտոր Ա. Ա. Սարգսյան

մանատարի կյանքը փրկելու և դրանով
մարտի հաջող ելքն ապահովելու համար:

Պատերազմի տարիներին չէր կորորդում դիվիզիայի կապը Հայկական Խորհրդային Սոցյալիստական Հանրապետության հետ. դիվիզիայից Հայաստան են ժամանել վեց պատվիրակություն, իսկ հանրապետությունը բազմակողմանի օգնություն էր ցույց տալիս դիվիզիայն, որի անձնակազմը որպես սըրբություն էր պահպանում հայկական հրաձգային դիվիզիայի փառավոր ավանդույթները:

51-րդ գվարդիական դիվիզիան 21-րդ համազորային բանակի կազմում, գործելով Վորոնեժյան, 1-ին և 2-րդ Մերձբալթյան ռազմաճակատների վորքերի շարքում, մասնակցել է Կուրսկի ճակատամարտին, Լենինգրադ-Նովոռոտոյյան, Բելոռուսական, Մերձբալթյան օպերացիաներին: Հատկանշական է, որ նա իր մարտական ուղին ավարտել է Կուրլանդյան զորախմբի (հրամանատար՝ բանակի գեներալ Հ. Բաղրամյան)

կազմում, հակառակորդի Կուռլանդյան խմբագրման շախահմամբ:

Գվարդիականները հատկապես աչքի ընկան Արևմտյան Դվինայի գետանցման ժամանակ, երբ դիվիզիայի 15 վինգոր արժանացան ԽՍՀՄ հերոսի բարձր կոչման, իսկ Վիտեբսկ – «Պոլոցկ շրջանում հակառակորդի հվոր խմբագրման շախահմանը ցույցը բած ակտիվ մասնակցության համար դիվիզիան արժանացան «Վիտեբսկյան», իսկ նրա գնդերը՝ «Պոլոցկյան» պատվավոր անունների¹⁶:

Մեծ է եղան դիվիզիայի գերը հայագի հրամանատարների պատրաստման գործում: Նրա շարքերում են սկսել իրենց ծառայությունը բոլոր հայկական հրաձգային դիվիզիաների հրամանատարները՝ Ա. Վասիլյանը, Ս. Զարյանը, Ա. Սարգսյանը, Ն. Սաֆարյանը, ականավոր զորավարներ, Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և Խորհրդային Միության հերոս, Խորհրդային Միության գրահատակային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բարաջանյանը, տարբեր զորամասերի ու զորամասագրումների հայագի հրամանատարներ, որոնք աչքի են ընկել պատերազմի տարիներին՝ գեներալ-մայոր Աշոտ Սարգսյանը, իրենանու գեներալ-մայոր Նիկոլայ Հովհաննիսյանը, հեծելափառի հրամանատար Հայկ Ղազարյանը, գնդի հրամանատար Վիկտոր Բյալիշը, փոխգնդապետ Բախչի Հայրապետյանը, մայոր Վարդան Վարդանյանը, գվարդիայի գնդապետ Սուլշեն Կարապետյանը, գվարդիայի գնդապետ Ամիրջան Դանիելյանը և շատ ուրիշներ:

Տարիներն անցնում են, և այսօր, երբ մենք համայն մարդկության հետ նշում ենք ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի՝ 55-րդ տարեդարձը, քիչ թվով գվարդիականներ են իրենց պատվավոր տեղը գրավում տոնախմբությունների մասնակիցների շարքերում: Բայց 1999 թ. սեպտեմբերի 21-ին Երևանում կայացած զինվորականների շքերթը ամբող

¹⁶ Տես «Բանքեր Հայաստանի արխիվների», հ. 3., էջ 5–12:

աշխարհին յույց տվեց, որ Մեծ Հայրենականի քաջակորուզ մասնակիցների արիության և հայրենիքին նվիրվածության ոգին ապրում ու հարատեսում է մեր ազգային բանակի պահների ու շարքայինների սրտերում:

Գվարդիայի մեր ներկայացրած պատմությունը և ՀՀ բանակի ներկայիս վիճակը մեզ իիմք են տալիս առաջարկելու, որ մեր բանակում ևս իհմնվի գվարդիայի հաստատությունը: Արդեն այժմ կարելի է մարտական, ֆիզիկական և բարյահեղեղանական հատկանիշների հի-

ման վրա առանձնացնել գինվորների ու հրամանատարների և կազմավորել հատուկ գինվորական ստորաբաժանումներ: Դրանք կդատնան էտաղոն, ընդօրինակման առարկա մյուս գիննծառայողների ու ստորաբաժանումների համար: Եվ Ժամանակի ընթացքում դրանք կորակավորեն որպես գվարդիական ստորաբաժանումներ: Գվարդիականի հաստատությունն անշուշտ կնպաստի մեր գիննվածութերի մարտական պատրաստության, բարյահեղեղանական կոփվածքի ընդհանուր մակարդակի բարձրացմանը:

РОЖДЕНИЕ СОВЕТСКОЙ ГВАРДИИ

А. Б. АЙРАПЕΤՅԱՆ, гвардии майор в отставке

РЕЗЮМЕ

Термин «гвардия» вошел в обиход в XII в. Наибольшее распространение гвардия получила во Франции, Англии, Швеции, Германии, России. В историю вошли слова командира наполеоновской гвардии генерала Камбранна, сказанные в ответ на предложение англичан сдаться на почетных условиях во время сражения при Ватерлоо (1815), — «Гвардия умирает, но не сдается».

В России гвардия была создана в 1683 г. при Петре I из «потешных войск». За 200 лет своего существования русская гвардия, в рядах которой служило и удостоилось высоких наград немало армян, покрыла себя неувядаемой славой, доблестно сражаясь практически во всех битвах. В 1918 г. русская гвардия была ликвидирована.

Уже в первые месяцы Великой Отечественной войны была создана Советская гвардия. Приказом Наркома обороны № 308 от 18 сентября 1941 г. четыре стрелковые дивизии: 100-я, 127-я, 153-я и 161-я — за стойкость в обороне и храбрость и мужество в наступлении, проявленные во время Ельнинской операции при обороне Смоленска, были удостоены высокого звания гвардейских и переименованы в 1-ю, 2-ю, 3-ю, 4-ю гвардейские стрелковые дивизии, соответственно.

Среди танковых соединений первой стала гвардейской 4-я танковая бригада, сорвавшая стремительное наступление врага на Мценск в октябре 1941 г. 14 июля 1941 г. первый свой залп по врагу произвела батарея гвардейских минометов БМ-13 — прославленных «Катюш». В боях за Москву родилась гвардия в ВВС, а в 1942 г. и в ВМС.

Создание института гвардии в ВС СССР в годы войны несомненно способствовало повышению боевого мастерства и выучки советских воинов, их морально-психологических качеств, самоотверженности и стойкости при решении боевых задач.

Высокого звания гвардейской была удостоена и 76-я Армянская краснознаменная им. К. Е. Ворошилова горно-стрелковая дивизия (23 декабря 1942 г.). Эта дивизия, созданная на базе сформированного в 1920 г. в

составе XI Красной армии Армянского отдельного полка и расквартированная в довоенный период в Армении, стала настоящей школой подготовки офицеров-армян, таких, как дважды Герой Советского Союза, Маршал Советского Союза И. Х. Баграмян, Герой Советского Союза, Главный маршал бронетанковых войск А. Х. Бабаджанян, генералы и полковники, руководимые которыми соединения и части отличились на фронтах ВОВ.

Среди советских гвардейцев первыми из армян были А. Х. Бабаджанян, генерал-майор С. И. Карапетян, подполковник Н. П. Балоян, подполковник Б. М. Айрапетян, майор В. Варданян и др.

Состоявшийся 21 сентября 1999 г. в Ереване парад со всей очевидностью показал, что офицеры и солдаты нынешних ВС РА сохранили славные традиции высокого боевого мастерства, мужества и беззаветной преданности Родине, заложенные армянами-гвардейцами в годы Великой Отечественной войны, и что настало время для создания гвардейских частей в ВС РА.

BIRTH OF THE SOVIET GUARDS

A. B. HAIRAPETYAN, Retired Major of the Guards

SUMMARY

The term «Guards» was included in use in XII century. Mostly the guards was widely used in France, England, Sweden, Germany, Russia. The words of the commander of Napoleon guards general Kambrone told in reply to Englishmen's offer to surrender on honorable conditions during the battle at Waterloo (1815) — «The Guards dies, but does not surrender», have come into history.

In Russia guards was founded in 1683 in the time of Peter I out of «fun troops». For 200 years of its existence in the ranks of Russian guards quite a number of Armenians served and awarded with high rewards, covering themselves with unfading glory, valiantly fought in all battles. In 1918 Russian guards was liquidated.

Already in the first months of the Great Patriotic war the Soviet guards was created. By the order № 308 of National Commissar of defense (minister of defense) on September 18, 1941 the following four shooting divisions, the 100th, 127th 153rd and 161st for stability in defense and both bravery and courage in offensive manifested in Yelninski operation and at Smolensk defense were awarded with high rank of guards and renamed in the 1st, 2nd, 3rd, 4th Guards shooting divisions accordingly.

Among tank formations the 4-th tank brigade first became guards breaking down the enemy's fast-moving offensive to Mtsensk in October 1941. July 14, 1941 the first volley was fired by the battery of guards mortars BM-13 glorified in fights «Katiushas». During the fights for Moscow guards was born in the Air Forces and in 1942 in the Navy.

The creation of the institute of guards in the Armed Forces of the USSR in the years of war undoubtedly promoted increase of battle skill and training of the soviet warriors, their moral-psychological qualities, selflessness and stability at the decisions of combat tasks.

High rank of guards was awarded to the 76-th Armenian Red Banner, after K. E. Voroshilov mountain-shooting division (December 23, 1942). This division

was created on the basis of formed in 1920 in composition of the 11th Red Army's Armenian separate regiment and having been quartered in pre-war period in Armenia, became a real school of training of Armenian officers such as twice Hero of the Soviet Union, marshal of the Soviet Union I. Baghramyan, Hero of the Soviet Union, main marshal of tank troops H. Babadjanyan, generals and colonels under whose leadership the military units and formations were distinguished on fronts of the Great Patriotic war.

Among the first Armenian guardsmen were H. Babadjanyan, major-general S. Karapetyan, lieutenant-colonel N. Baloyan, lieutenant-colonel B. Hairapetyan, major V. Vardanyan etc.

The military parade having been held in September 21, 1999 in Yerevan has shown with all evidence that the officers and soldiers of present AF of the RA have kept famous traditions of high battle skill, courage and selfless fidelity to the native land incorporated by the Armenian guardsmen during the Great Patriotic war and that time has come for creation of guards units in AF of the RA.

ՍՓՅՈՒՐՔԱՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

Ս. Կ. ԳԱԼՈՎՅԱՆ

Երկրորդ աշխարհամարտում Հայաստանի բուն տարածքը զերծ մնաց պատերազմի արհավիրքներից, բայց հայ ժողովուրդն իր ակտիվ մասնակցությունը բերեց գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի դեմ մղված արդարացի պատերազմին: 1941 թ. հունիսի 5-ին և 31-ին Ամենայն հայոց հայրապետության տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեցյանը, իսկ օգոստոսի 17-ին Խորհրդային Հայաստանի մտավորականությունը կոչ ուղղելով հայ ժողովուրդին, ողջ արտասահմանյան հայությանը ըստ ամենայնի օժանդակելու հայրենիքի մեծ և արդար գործին, միավորելու բոլոր ուժերը ֆաշիզմի դեմ մըղվող պայքարում:

Զերմորին արձագանքելով՝ Ֆաշիզմը չի հաղթանակի՝ կարգախոսին՝ սիյուռ-քահայերը, Այրութական և բարոյական օգ-նությունից բացի, զենքը ձեռքներին պայքարի երան խոտական ու գերմանա-կան ֆաշիստական ոհմակների դեմ։ Ե-րովպիայում, Ֆրանսիայում, Հարավալա-վիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Լիհաստանում, ամենուրեք, որտեղ ֆա-շիզմն սպառնում էր մարդկության ապա-տության ու անվախությանը, հայ առա-ջադիմական ուժերն առաջին զծում էին։

Սիրիակայ և լիբանանակայ աշխատավորների և ամակներում գրված էր, որ իրենք պատրաստ են համարմբվելու՝ կանգ չառնելով ոչ մի զոհորության առաջ: Մի շարք երկրներում հայերն ըստեղենին առաջադիմական նոր կապմակերպություններ, որոնք միավորում և գիտավորում էին սփյուռքահայերի պայքարը ֆաշիզմի դեմ: Այդպիսի կապմակերպություններից էին «Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը» և այլն:

յունը» Սիրիայում, «Ամերիկայի հայ պազային խորհուրդը», «Հայերի պազային ճակատը» Փարիզում, «ԱՄՆ-Մ բարեկամների միությունը» Թավրիզում և այլն։ Այդ կազմակերպությունների կարենոր ձեռնարկումներից էր «Ասունցի Դաշիք» տանկային շարասյան առեղծման համար միջոցների հանգանակությունը (1943 - 1944 թթ.), որին մասնակցեցին ԱՄՆ-ի, Հարավային Ամերիկայի, Իրանի, Եգիպտոսի, Լիբանանի, Սիրիայի, Կիպրոսի հայերը։ 1943 թ. հունվարի 26-ին և 1944 թ. հունիսի 7-ին ստացվեցին ԽՍՀՄ ժողովադատության նախագահ Ի. Վ. Ստալինի ողջույնը և շնորհավորական հեռագրերը «Ասունցի Դաշիք» տանկային շարասյան առեղծման առթիվ։ Հանգանակությունը էր ականա նաև «Գեներալ Բարդայան» տանկային շարասյան առեղծման համար, որն ընդհատվեց պատերազմն ավարտվելու կապակցությամբ։

Հայ ժողովուրդը միշտ էլ երախտապարտ է եղել այն ժողովուրդներին, որոնցից օգնություն ու աջակցություն է ստացել: Հունահայերը կարող են հպատանալ, որ Հելլադայի հանդեպ իրենց հավատարմությունն ապացուցեցին՝ 1940 – 1944 թթ. Կողք կողքի կռվելով հույն ազատամարտ ժողովրդի, Նրա խիստախ պարտիզանների հետ՝ դուրս չպրտենու համար իտալագերմանական հորդաներին: Դերզութի մոտակայքում տեղի ունեցած մարտում զոհվեց երիտասարդ պարտիզան Անդրանիկ Ղուկասյանը: Հունահայ գաղութի մարտիկներ Երփանդ Ղուկասյանի, Միլիմանոր Ղալիյանի, Ավետիք Ցառջանի, Մարտին Տերտերյանի, ինչպես նաև հունահայերից և հայ ուսամագերիներից կազմված «Ազատություն» ջոկատի անունները միշտ

կիմային հակաֆաշիստական պայքարի տարեգրության մեջ։ Հույն գրողներ Մելլպո Արխուտիսը, Միձուլիսը և ուրիշներ բարձր են գնահատել հունահայերի հայրենասիրությունն ու խիվախությունը։

Զեխոսովակիայում խորհրդային պարտիզանների խմբի մեջ խիվախորն

ամբողջ ընթացքում նեցուկ կանգնեց հայրենասիրներին։ Փարիզից մինչև Մարտի, Լիոն, Վալանս, Դեսին, Բորդո, որտեղ կային հայեր, նրանք միավորվեցին ընդհատակա կազմակերպություններում նպատակ ունենալով վնասել իհտներյան ուժերին։ Ստեղծվեց ֆրանսահայ Ազգային ճակատը, որին գործուն մա-



Միսար Մանուչյանի խումբը Ֆրեն բանտի բակում գնդակահարությունից առաջ, ձախից երկրորդը՝ Ս. Մանուչյան. գերմանական կինոխրոսիկայից, 1944 թ.

կովում էր Արտյոմ Պետրովանը։ Նրան կոչում էին «Մորավիայի արծիվ»։ Զեխոսովակայան կառավարությունը հայ պարտիզանին արժանացրեց բարձրագույն պարգևի՝ «Զեխոսովակյան վինվորական խաչ» և «Զեխոսովակյան պարտիզանի աստղ» շքանշանների։ Պրագայի ապատագրմանը մասնակցեցին գնդապետներ Մաթևոս Մադարյանի և Բագրատ Միրզյանի դիվիզիաները։

1963 թ. Խոտամիայի ազգային հերոսի կոչման հետմահու արժանացագ Մըկերտիչ Դաշտոյանը, որը քաջարար կրովել էր 54-րդ գարիբադիական «Մակարիո» պարտիզանական բրիգադում։ Գեվորգ Քողովյանին խոտամիան կառավարությունը 1966 թ. հետմահու պարզեատրենեց «Ռազմական արիության համար» բրոնզե մեդալով։

Ֆրանսահայությունը պատերազմի

նականական ունեցան Քյուրեցյանը, դոկտոր Խանչերը։ Ֆրանսահայան դիմադրության շարժման հերոսներ Միսար Մանուչյանի, Նշան Տեր-Մարտիրոսյանի, Հայկ Դավիրյանի, Արսեն Չաքրյանի, Հարություն Գարայանի, առաջին խորհրդային պարտիզանական գնդի (որի մեծ մասը հայեր էին) և այլոց մասին էր, որ ֆրանսահայան կոմմունի կենտրոնում բարտուղար Ժակ Դյուկլըն գրեց. «Հայ ժողովուրդն իրավունք ունի պարծենալու Մանուչյանի խմբի հերոսներով..., որոնք իրենց կյանքը տվեցին հանուն ժողովուրդների ապատության»!։ Մեծ էր պարտիզանական գնդի դերը Ֆրանսահայի Նիմ և Լա Կալմետ քաղաքների ապատագրման գործում։ Ի նշան գնահատանքի Դը Գոլը գնդին է հանձնել Ֆրանսահայի կառավարության դրոշը։

¹ «Ժողովուրդ» (Փարիզ), 1946 թ. մարտի 3:

1944 թ. հոկտեմբերից հայկական դիմադրության ընդհատակյա կազմակերպությունը ապաստամբությամբ ապատագրված Փարիզում լույս էր ընծայում «Ժողովուրդ» օրաթերթը: Միայն Լոզեր, Գար, Սերձափնյա Ալզեր, Դյու Ռոն դեպարտամենտներում գործում էին հայ հայրենասերներից կազմված 15-ից ավելի պարտիզանական ջոկատներ, Միսար Մանուշյանը ղճակարում էր «Զապաս», Աստաղինգրադ, «Վիկոոր Հյուգո», «Ապատուրյուն» ինսերնայինուազ պարտիզանական ջոկատները, որոնք կատարել են 60 դիվերսիոն ակտ:

Ֆաշիստական օկուպացիայի մռայլ օրերին Լուիզան (ԱՍ) և նրա ամուսինը՝ Արֆիար Ասրանյանը, իրենց ընակարանը Փարիզում դարձրել էին հավաքատեղի, նրանք բռուցիկներ, կոչեր, ընդհատակյա հրատարակություններ էին տարածում գերմանական բանակի պազային լեգեններում: 1944 թ. հուլիսի 26-ին նովիայի մատուցության հետևանքով Լուիզային ձերակալեցին և ուղարկեցին Ռավինսարուկի, իսկ նրա ամուսնուն՝ Բուխենվարդի համակենտրոնացման ճամբարները: Համակենտրոնացման ճամբարի մռայլ բարագներում Լուիզան գրեց իր «Մայ» պոեմը: Ֆաշիստները 100 այլ կանանց հետ Լուիզային քշեցին բաղնիքի շենք, որն իրականում գավի խցիկ էր:

Բուլղարիայում աշքի ընկան Հակոբ Պարոնյանը, Հակոբ Մարգարյանը: 17-ամյա Հերմինե Ռազգրադյանը (Մաշկա) միացավ «Զավդար» պարտիզանական ջոկատին և բուլղարացի իր ընկերների հետ ուս ուսի կովեց թշնամու դեմ: 1944 թ. հունիսին արյունաբար եղած պարտիզանուիին սվինների սպառնալիքների տակ փորեց իր գերեզմանը, իսկ քիչ հետո իրազնի համապարկը վերջ տվեց իրու հայուհու կյանքին:

Հարավակական լեռներում հերոսարար մարտնչում էին հայ պարտիզաններ Առաքել Սահակյանը, Ցողակ Աֆրիկյանը, Պարգև Հակոբյանը:

Եթովպիայի պատության ու անկախության համար գոհվեցին Բարեկին Ան-

ֆերյանը և շատ ուրիշ հայ քաջորդիներ:

Ամերիկան բանակում ծառայում էին 20 հազար հայ մարտիկներ ու ապաներ, որոնցից շատերն արժանացան կառավարական բարձր պարգնների: Ամերիկահայ Հարությունյանների ընտանիքից ոսպմաճական մեկնեցին յոթ հոգի՝ Արսենը, Արամը, Հայկը, Վահանը, Վարդանը, Հերին և Վանուուին: Նաճարյանների ընտանիքից մեկնեցին իինսքը, որոնցից Զեյմար և Արթուրը պարգևատրվեցին «Արծաթե աստիք և «Քրոնվե մեդալներով: Ահմաջան ընտանիքից մեկնեցին չորսը. Հրայր Ահմաջյանը ծառայել է ավիացիայում որպես ինժեներ, Աշոտը կովել է Ֆիլիպիններում, ովկավարել է ոսպմաճինժեներական գորամա, Ազատը, աշքի ընկերով Խաղողիկիանոսյան ոսպմաճակառում, պարգևատրվել է «Կաղնու երեք ճյուղերի մեդալով:

Գեներալ Էլգենհաուերը շնորհավորել է Երվանդ (Եռնեստ) Դերվիշյանին, որը պարգևատրվել է բարձրագույն պարգևով՝ Ամերիկայի ազգային հերոսի՝ Կոնգրեսի պատվո մեդալով: Այդ փառքին արժանացել են միայն 87 հոգի: Գընդապետ Սարգիս Զարդարյանը, որը ծովերյա կեների վրա գործող հակաօդային մարտկոցների հրամանատար էր, 1942 թ. մասնակցել է Հյուսիսային Աֆրիկայի, Միջիայի և Խոտանայի կոիվներին, 1944 թ. ստացել է գեներալի կոչում: Գեներալ Հայկ Շեքերջյանը 1942 թ. ամերիկյան բանակի բխմիական բաժանմունքի ուժերի պետն էր: Ռումինահայ Հենրի Կալպակյանը վրիվել է Ֆրանսիայի Օքիոնիքներ բնակավայրի մոտ տեղի ունեցած մարտում: Նա այն հազվագյուտ հայերից էր, որին շնորհվել է Հատուկ ծառայության խաչ երկրորդ բարձրագույն պարգևը, ինչպես նաև բարձրագույն աստիճանի հերոսության պարգև: Ամերիկահայ Վիկոոր Մաղաքյանը ծառայել է ծովային ուժերում 1936—1946 թթ.: Պարգևատրվել է Նախատորմի խաչով, Արծաթե աստիքով, Քրոնվե մեդալով, Զինաստանում ծառայության շքանշանով: Հերոլդ Բան-

թարյանը իր եղայրների հետ ամերիկյան, եվրոպական, աֆրիկյան, հյուսիսային Ֆրանսիայի, միջին արևելյան ռազմաճակատներում ծառայել է ավիայիայում, պարզեատրվել է թոփշքային ծառայությունների համար երկու մեդալով: Հայ բարերար, միլիարդատեր Քըրք Քըրորյանը ամերիկյան ռազմաօդային ուժերի օդաչու էր:

Այստեղ կարելի է հիշատակել նաև ամերիկահայ Ռոպ Գուլանյանին, որը ծառայել է Խաղաղօվկիանոսյան ռազմաճակատում, կանանց հատուկ ավիայիոն գորամատում, Կլարա Ավիջյանին, գեներալ Էյվենհաուների շտաբում ծառայած ամերիկահայ սերժանտ Ճել Սյու Սարաֆյանին և շատ ու շատ ուրիշ հայուհիների:

Ֆրանսիական բանակի գնդապետ, Պատվագոր Լեգեննի շքանշանի ասպետ, գեներալ Արամ Գարամանուկյանը սիրիական բանակի կազմակերպիչներից էր, բանակի հրետանու հրամանատար: Այդ գործում մեծ ներդրում ունեցավ նաև գեներալ Գրիգոր Հինդոյանը:

Այդ տարիներին խորհրդային բանակին մեծ օգնություն կապմակերպեց իրանահայ համայնքը, օգնության ցուցաներ ստորագրություններով պահպում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

1941 թ. դեկտեմբերին ճապոնացիների կողմից իրակոծման ննժարկվեց Փեոլ Հարբոր խարսխակայանը: Միայնակ Նահանգների նավատորմը լիովին զրկվեց իր 6-րդ էսկադրայից: Փեոլ ծովախորշում իրար հետևից խորտակվել էին «Օմահան», «Թրենտոնը», «Կայխոռնիան», «Օլվահոման» և այլ հածանավեր, գծանավեր, զրահանավեր: Դեպքից 3 օր հետո սենատի հանձնաժողովը եկրակացրել է, որ նավերից առաջնը կարելի է ռազմունակ դարձնել 18 ամսում: Սակայն տեղի ունեցավ աներևակայենին. կես տարում համարյա բոլոր նավերը ջրի նրեսին էին: Նավադրկման տեխնիկայի համար դա հրաշք էր, որը տեղի ունեցավ շնորհիվ հայորդի Լևոն Փիտերսի (Բարդասարյան):

Մեծ աշխատանք կատարեց ԱՆԶԱ

կազմակերպությունը (Անօթևան հայերի ամերիկյան ազգային կոմիտե), որի նախագահն էր Չորջ Մարտիկյանը, փոխնախագահ՝ Սուրեն Սարոյանը, կազմակերպության ղեկավարներից էին նաև Հայկ Շեքերջյանն իր տիկնոց հետ: Զ.



Գեներալ Արամ Գարամանուկյան

Սարտիկյանը, Շտուտգարտում տեսնելով հայերի վիճակը ճամբարում, խոստացավ. «Ամերիկա երթալուս՝ ամեն միշտ ցոյներս պիտի տրամադրեմ, որպեսզի հաջողիմ ձեզի Ամերիկա տանիիր»²: Սարտիկյանի կոչին արձագանքեց ՀՕՄ-ը՝ տրամադրելով 25000 դոլար, ամերիկահայությունը նույնական օժանդակեց այս գործին:

Բայց դրամական օգնությունից ՀՕՄ-ը սննդի և հագուստների ծրաբներ ուղարկեց Շտուտգարտի հայերին: Մեծ աշխատանք կատարվեց ծերերին, հիվանդներին տեղափոխելու ուղղությամբ: Լիբանանի ազգային հիվանդանույին տրամադրվեց 40000 դոլար նոր հարկաբաժին կառուցելու համար, որպեսզի Գերմանիայի հիվանդ հայերը

² Տես Մ. Թողարքան, Օրերու հետ, Պեյրութ, 1963, էջ 565:

տեղափոխվեն այստեղ: Տիկին Շեքերջյանը կապմակերպեց անգլերնենի անվորձար դասընթացներ: ԱՆՁ-ի ստեղծման օրից մինչև 1951 թ. դեկտեմբեր Գերմանիայից, Ավստրիայից, Խոտալիայից և այլ երկրներից Ամերիկա և այլուր տեղա-



Գեներալ Զորշ Մարտիկյան

փոխվեցին մոտ 4000 հոգի, որոնցից 3000-ից ավելին՝ ԱՄՆ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայում մեծ աշխատանք կատարեց դաշնակցությունը: Գերմանացի գիտնական դոկտոր Ռոհերքամի և Արտաշեն Արենյանի ջանքերի շնորհիվ ապացուցվեց, որ հայերը սեմական ծագում չունեն, այլ պատկանում են արիական ցեղին: Հայերը ձեռք բերեցին նոր անձնագրեր, որի շնորհիվ նրանք փրկվեցին բնաջնջումից, այլապես կենթարկվեին իրեաների ճակատագրին:

1942 թ. դեկտեմբերին Բնոլինում

կազմվեց Հայոց Ազգային խորհուրդը՝ Արտաշեն Արենյանի նախագահությամբ: Նրա անդամներն էին Վահան Փափազյանը (Կոմս), Դավիթ Դավիթիսանյանը, Զարդարյան եղբայրները, Աբրահամ Գյուլյանդանյանը, Գարեգին Նժդիկը, Դրոն և ուրիշներ: Այս խորհուրդը կարողաց մենք տարում փրկել 8000 հայ ուսպանքերիների: Դրոն ասել է, որ այս ծանր պայմաններում իրենց ընկերները պետք է ջանային և՝ «գերման գայլը կուշտ պահեն», և՝ «հայ գառը ողջ փրկեր»³: 1943 թ. Հայոց Ազգային խորհրդի նախաձեռնությամբ իրատարակվեց «Հայաստան» անունով ամսաթերթ Խոսրով Ներսեսյանի խմբագրությամբ: Ազգային խորհուրդը կազմարուծվեց 1943 թ. վերջերին, և նրա փոխարեն կազմվեց «Կապ պահող պաշտոնատուն» անունով մարմինը: Սա էլ իր գոյությունը պահպանեց մինչև 1944 թ. և իր տեղը փշեց Հայոց Ազգային կոմիտեին, որի նախագահը Տիգրան Քաղաքարյանն էր: Սա հայկական վերջին մարմինն էր, որը գործեց Բնոլինում մինչև 1945 թ. ապրիլի 15-ը:

Մեծ էր նաև ափյուռքահայ թժիշվների դերը: Նրանցից դոկտոր Քելիկյանը, գլխավոր վիրաբույժ փոխնողապետ Սարգիս Սարգսյանը, Կառլ Գասպարյանը, Զոն Արազյանը, որը հետագայում դարձավ ԱՄՆ-ում շնչառական օրգան ներկայի խոչըն մասնագետ, և ուրիշներ օտար ափերում իրենց նշանակալից ներդրումն ունեցան ապատագրական պայքարում:

Ըստիանուր առմամբ երկրորդ աշխարհամարտին մասնակցեցին շուրջ 80 հազար ափյուռքահայեր:

Մեկ հոդվածում հնարավոր չէ ներկայացնել երկրորդ աշխարհամարտի մասնակից բոլոր հայերի անձնագրի պայքարը: Մենք սահմանափակվեցինք առավել աշքի ընկածների սիրանքներով:

³ Տես Հ. Գևորգյան, Դրոն Ե., 1991, էջ 392:

УЧАСТИЕ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ
ВО ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

С. К. ГАЛСТЯН

РЕЗЮМЕ

Хотя в годы II мировой войны территория Армении непосредственно не подверглась разрушительному воздействию войны, но весь армянский народ принял самое активное участие в борьбе против фашизма. 5 и 31 июля 1941 г. местоблюститель патриаршего престола в Эчмиадзине архиепископ Геворг Чёрекчян и 17 августа интеллигенция Советской Армении обратились к армянскому народу, ко всем зарубежным армянам с призывом встать на защиту правого дела Родины, объединиться для борьбы с фашизмом. К этому времени (по сильно приниженным данным) почти третья армян была разбросана по всему свету в результате геноцида, совершенного против армян в 1915 г. младотурками.

Армянская диаспора откликнулась на эти призывы и не только оказала Родине большую материальную помощь в форме различных пожертвований, но и включилась в активную борьбу против фашизма как в составе союзных сил США, Великобритании и Франции, так и сил сопротивления в оккупированных фашистами странах. Армянский народ всегда был глубоко признателен всем тем народам, которые приютили его сыновей и дочерей, спасшихся от турецких ятаганов. И сейчас он пожертвовал жизнью тысяч своих сыновей и дочерей во имя свободы этих народов, во имя искоренения скверны человеконенавистничества, столь хорошо знакомой ему.

Десятки молодых партизан-армян сражались на древней земле Эллады, удостоившись любви и признания всех свободолюбивых греков. В составе патриотических сил действовал и отдельный армянский партизанский отряд.

В Чехословакии героически сражался Артем Петросян, прозванный «Орлом Моравии» и удостоенный высших правительственные наград — орденов «Чехословацкий военный крест» и «Звезда чехословацкого партизана». В освобождении Праги участвовали дивизии полковников Мадатяна и Мирзояна.

Правительство Италии в 1963 г. удостоило звания национального героя Италии бойца 54-й бригады гарibalдийцев Даشتояна (посмертно), а в 1966 г. наградило, также посмертно, бронзовой медалью «За военное мужество» другого армянина — Колозяна.

Во Франции прославились партизанский отряд национального героя Франции поэта Мисака Манушяна, советский партизанский полк (который состоял в основном из армян) — единственное национальное формирование, удостоенное боевого знамени от правительства Де Голля. Здесь действовало более полутора десятка партизанских формирований, состоявших только из армян. В составе ВС Франции сражался полковник Арам Гараманукян, удостоившийся высшей награды Франции — ордена Почетного легиона. В дальнейшем генерал-лейтенант А. Гараманукян стал одним из создателей ВС Сирии и командующим артиллерией сирийской армии. Большой вклад в это дело внес и генерал Г. Индоян.

Много армян сражалось и в партизанских дружинах в Болгарии. Славой покрыла себя 17-летняя Эрмине Разградян (Сашка), погибшая в июне 1944 г.

Армяне героически сражались в Югославии, Румынии, Венгрии, Польше, Эфиопии.

В армии, авиации и флоте США сражались более 20 тыс. армян. Сержант Ерванд (Эрнест) Дервишян стал одним из 87 бойцов, удостоившихся в годы войны высшей боевой награды США — медали Почета Конгресса. Самых высоких правительственные наград СССР удостоились Генри Калпакчян и Виктор Магакян. Генерал Гайк Шекерджян возглавлял силы химического отделения армии США. Отличились и генералы Джордж Мартинян, Саргис Зардарян, майор авиации (ныне миллиардер) Кркорян и многие другие. Благодаря армянину Левону Питерсу (Багдасарян) удалось сократить с ожидаемых 1,5-2 лет до полугода сроки восстановления поврежденных в Перл-Харборе американских кораблей.

Всего в зарубежных армиях, партизанских формированиях и диверсионных группах сражались около 80 тысяч армян.

На пожертвования армян республики и диаспоры была в СССР построена танковая колонна «Давид Сасунский», оказывалась помощь бывшим узникам концлагерей. Многие зарубежные армяне-врачи (Келикян, подполковник Саргсян, Гаспарян, Абаджян) спасали жизнь раненым солдатам. Многие армяне, проживавшие на оккупированных фашистами территориях, прятали у себя беглецов из концлагерей, лиц, преследуемых гестапо.

Таким образом, армянская диаспора внесла достойный вклад в историческую победу над фашизмом как на полях сражений, так и во многих сферах деятельности.

PARTICIPATION OF THE ARMENIAN DIASPORA IN THE WORLD WAR II

S. K. GALSTYAN

SUMMARY

Though during World War II the territory of Armenia didn't directly undergo to destructive influence of war, but all Armenian people had the most active participation in struggle against fascism. On the 5th and 31st of July 1941 the custodian of the patriarchal seat of Holy See in Echmiadzin archbishop Gevorg Chorekchyan and the intelligentsia of the Soviet Armenia on 17th of August addressed to Armenian people in homeland and in abroad calling them to rise to uphold the just cause of the motherland, to be consolidated for struggle against fascism. To this time (on the strongly belittled data) almost third of all Armenians was scattered all over the world as a result of the genocide perpetrated against Armenian people by Young Turks in 1915.

Armenian diaspora responded to these appeals rendering not only material assistance to the native land in the form of various donations but also joined active struggle against fascism as in composition of allied forces of resistance in the occupied countries. Armenian people has been always grateful to all those nations who have sheltered his sons and daughters, having been escaped from Turkish yatahan.

And now Armenian people was sacrificing lives of thousands of his sons and daughters in the name of freedom of these peoples, in the name of eradication of nasty man-hating, so well familiar to our people.

Dozens of young partisans fought in the ancient land of Hellas deserving love and recognition of all freedom-loving Greeks. In the ranks of patriotic forces separate Armenian partisan group was also operating.

Artem Petrossyan, nicknamed «Eagle of Moravia» heroically battled in Czechoslovakia and conferred the highest governmental awards—Order of Czechoslovak military cross and star of Czechoslovak partisan. For liberation of Prague colonels Madatyan's and Mirroyan's divisions had an active participation.

The government of Italy in 1963 posthumously awarded the fighter of the 54th Garibaldians brigade Dashtoyan with the title of the national hero of Italy and another Armenian—Kolozyan in 1966 was awarded with bronze medal for courage, again posthumously.

In France the partisan group of the national hero of France, poet Misak Manoushyan became famous. The Soviet partisan regiment (consisted basically of Armenians) was the only national formation which was awarded with battle banner by the government of De Golle. Here more than one and half dozen partisan formations operated consisted of Armenians merely. In the ranks of the Armed Forces of France colonel Aram Garamanukyan was fighting, later he conferred the highest award of France—Order of Honorary legion.

Later lieutenant-general A. Garamanoukyan became one of the founders of Syrian Armed Forces and the artillery commander of Syrian army. Great contribution to this sphere was brought by general G. Indoyan as well.

Many Armenians fought in partisan groups in Bulgaria. 17 years of age Hermine Razgradlyan (Sashka) covered herself with glory and was killed in June 1944.

The Armenians heroically battled in Yugoslavia, Rumania, Hungary, Poland, Ethiopia.

More than 20thousand Armenians fought in the Army Navy and Air Forces of the USA. Sergeant Ervand (Earnest) Dervishyan one of 87 warriors awarded with the highest battle awards of the USA in the years of war—congressional service medal. The highest governmental awards of the USA were conferred on Henry Kalpakchyan and Victor Maghakyan. General Haik Shekerdjyan headed forces of chemical branch of the USA Army. Generals George Mardigyan, Sargis Zardaryan, major of Air Forces (at present billionaire) Kirkoryan and many others were distinguished as well. Due to Levon Peters (Bagdasaryan) Armenian by birth it became possible to reduce with expected 1,5—2 years up to half-favor terms the restoration of damaged American warships in Pearl Harbor.

In total 80thousand Armenians fought in foreign armies, partisan formations and diversion groups.

On the donations of Armenians of the republic and diaspora tank column «David of Sasun» was created, assistance was organized to former prisoners of concentration camps. Many doctors Armenian by origin in abroad (Kelikyan, lieutenant-colonel Sargsyan, Gasparyan, Abadjan) rescued lives of wounded soldiers. Many Armenians, living on occupied territories, hid at themselves escaped convict prisoners from concentration camps, being pursued by gestapo.

Thus, Armenian diaspora has brought in worthy contribution to the historical victory over fascism, having not only active participation on fields of battles, but also in many spheres of activity subordinated to interests of war in those years.

ՀԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ

Հ. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պաշտոնաթող գնդապետ

Պատմական իրադարձությունները հաճախ են ներքարկվում նենգափոխումների: Այդ տեսակնետից բացառություն չեն երկրորդ աշխարհամարտը և նրա հիմնական մասը կազմող 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը: Մինչև այժմ էլ նենգափոխում են պատմական նշանակություն ունեցող այնպիսի կառոր իրողություններ, ինչպիսիք են պատերազմի ծագման պատճառները, այն իրահրողների մեղավորությունը, ֆաշիստական-միջիտարիստական բլոկի դեմ անփունգության դաշնորդի ատեղծումը, հատթանակում վճռորոշ ուժերի ճիշտ գնահատումը, հաղթանակի համաշխարհյան նշանակությունը և այլն:

Նշենք, որ առաջին համաշխարհյան պատերազմը չունեց պատերազմից առաջ պետությունների միջև եղած հակառությունները: Դրանք էլ ավելի սրբնակին ու անհաջողի դարձան խորհրդային պետության ստեղծման, ինչպես նաև ազգային-պատառական շարժումների հետևանքով: Խորհրդային երկր ներխուժումը տապալվեց: Բայց նորաստեղծ պետության կործանման հարցը մնաց ագրեսիվ քաղաքականություն վարող տերությունների գործունեության օրակարգում: Նպատակին հասնելու համար նրանք աստարելին Գերմանիայիում իշխանության ձգուող Հիտլերին, նրան հնարավորություն տվեցին, հակառակ Վերսայան պայմանագրի սահմանադաշտումների, վերապինվելու և, որպես «միակ հուսապի հենարան», այդ երկրներին «փրկնելու» «բոլցիվմի ուրիշականից» ու «կարմիր ջրհեղեղից»: Խսկ ֆաշիստական-միջիտարիստական բլոկի ստեղծմամբ պատերազմը դիտվեց որպես դրա իրականացման միակ միջոց: Բրկին զոհաբերվեցին Հռենոսի ապա-

ռազմականացված մարզը, Խապանիայի հանրապետությունը, Ավստրիան, Զիտուլովակիան, Մանչուրիան, Հարենցուանը: Զավթման վտանգը կախվեց բարկանյան, այլ աֆրիկյան երկրների վրա: Արդեն Հռենոսի մարզի օկուպացումից հետո անգլիացի պատմաբան Զ. Ուշեր-Բենհուոր նշում էր, որ Հիտլերին թույլ տրվեց շահել երկրորդ ճակատամարտը առանց կրակ բացելու:

Խորհրդային պետությունն ատիպած էր դիմելու կորուկ միջոցների երկրի վիճակ ուժերի հզորությունը մեծացնելու համար: Ռազմական բախումը Ֆինլանդիայի հետ ցույց տվեց, որ Կարմիր բանակը պատերազմի պատրաստ չէ: Տարիներ հետո այդ բանը նշեց նաև հայտնի ռազմագետ Էրիխ ֆոն Մանշտայնը. «1941 թ. հունիսի 22-ին խորհրդային զորքերն այնքան խոր էին շարանակարգված, որ նման դասավորության դեպքում անտարակուս կարող էին միայն պաշտպանություն վարել»¹: Նյուորնբերգյան դատավարությունում նույնպես հաստատվեց, որ Խորհրդային Միությունը պատերազմելու նպատակներ չի հետապնդել: Նայիստական ռադիո-հաղորդումների պատասխանառու Հ. Ֆրիչեն խոստովանեց, որ ինքը կազմակերպել է հակամորհրդային լայն քարոզական արշավ՝ ձգտելով հասարակայնությանը համոզելու այն բանում, որ այդ պատերազմում մեղավորը ոչ թե Գերմանիան է, այլ Խորհրդային Միությունը, և որ ոչ մի հիմք չկար նպակացնելու, թե ԽՍՀՄ-ը նախապատրաստվում է Գերմանիայի վրա հարձակման:

Կարծում ենք՝ այսքան էլ բավական է համոզվելու համար, որ խորհրդա-

¹ «Մերյան պատրաստություն», Ռոստով-նա-Դոնу, 1999, с. 187.

յին պետությունը պատերազմի հրահրուման մեջ մեղ չուներ, և որ նրա հասցեն ամբաստանությունը բացաձակապես անհիմն է ու չարամիտ:

Պատմության կնդարարները մինչև հիմա էլ ձգում են նսեմացնելու ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում Խորհրդային Միության վճռական դեր՝ առաջնությունը տալով անգրամերիկյան զորքերին: Նրանք, օրինակ, համարում են, որ «թեև Խորհրդային Միությունն իր վրա կրեց պատրազմի ծանրությունը, բայց նա հաղթանակի ճարտարապետը չէր»²: Իսկ ամերիկյան պատմաբան Դ. Գյուլբերը այդ հաղթանակում վճռական դերը հատկայնում է Փեոլ Հարբորի օպերացիային: Անգլիական պատմաբան Սաուլի կարծիքով երկրորդ աշխարհամարտու ունեցել է 13 «գլխավոր ճակատամարտ», որոնցից միայն երկուսն են տեղի ունեցել խորհրդագերմանական պատերազմում:

Ինարկեա, ոչ մի նորմա դատողության տեր մարդ չի կարող նսեմացնել առավել ևս ժխտել դաշնակիցների դերը ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում, այն արագացնելու, հետևաբար և մեր կորուստները կրծատելու գործում: Մեր կարծիքով կարևորն ու նշանակալից այն հանգամանքն էր (ինչը գրավանության մեջ հանիքավի անտեսվել է), որ պատերազմի առաջին իսկ օրերին Անգլիայի և ԱՄՆ-ի դեմքավարները հաստատապես հայտարարեցին ֆաշիստական ազրենիայի դեմ Խորհրդային Միությանը պաշտպանելու մասին: Նրանց այդ հայտարարությունները երկրի համար ստեղծված լիստ վտանգավոր պայմաններում բարյական զորացման գործոնի ներ խաղացին: Սակայն կասկածից դուրս է, որ չարանենք և մեծապոր ֆաշիստական-միլիտարիստական բլոկի դեմ պատերազմում հաղթանակն ապահովեցին Խորհրդային Միությունը, նրա ենթական վինվածությունը և նույնքան մեծագործ թիկունքային աշխատավորությունը: Աս է ճշ-

մարտությունը: Բավական է հիշեցնել, որ խորհրդային երկիր ներխուժած հակառակորդի առաջին ռազմավարական շարանակարգում կային 5,5 միլիոն մարդ, շուրջ 4,3 հազար տանկ, 5 հազար ինքնաթիռ, 47 հազար հրանոթ և ականանեստ: Անձնակազմի տեսակետից հակառակորդը Կարմիր բանակին գերազանցում էր 2 անգամ, տեխնիկայի տեսակներից՝ 3-4 անգամ:

Եվ, չնայած երկիրի առավել կարևոր մեծ տարածքների կորստին, պատերազմի առաջին շրջանում (1941 թ. հունիսի 22—1942 թ. նոյեմբերի 19) խորհրդային ժողովուրդը կարողացավ իր անխոնջ աշխատանքով վճռական բնելում մտցնել արտադրության մեջ: Արդեն 1942 թ. վերջներին Կարմիր բանակը գերազանցեց հակառակորդին անձնակազմի թվաքանակով, Խորհրդային Միությունը կարողացավ առանձին վինատեսակների արտադրությամբ հասնել Գերմանիային, 1943 թ.՝ չնվորացնել նրա բոլոր առավելությունները, իսկ 1944 թվականից՝ արտադրել այնքան զինքն ու վինամբերը, որ հիտլերյան դեմքավարությունը չը էլ կարող երացնի:

Եվ Խորհրդային Միությունն ինքն սկսեց առավելություններ ստանալ Գերմանիայի նկատմամբ: Այդ առավելությունները մինչև պատերազմի վերջը գնալով աճեցին: Դա նման էր հրաշքի: Խորհրդային երկրի մասին 1944 թ. մայիսին «Նյոր Յորը թայմար» գրել է. «Այն ակնառու հաջողություններից հետո, որոնց պատերազմում հասել է խորհրդային համակարգը, դժվար թե մենք հանդիսի պնդել, թե Ռուսաստանը գենուս թույլ երկիր է: Այնպես որ, ներկայումն խորհրդային համակարգն անխտրաբար քննադատունները, որոնք բայց երկիրն ավերելուց ոչինչ չեն ստեղծել ու չեն էլ գիտակցում, թե ուր են գլորվում, մեղմ ասած՝ այնքան էլ արդարացի չեն: Նրանք անկարող են ճիշտ գնահատելու պատմության կարևոր իրադարձությունները և արժեքները: Զրկանքների աներևակայի դաժան պայմաններում հայրենիքի փրկության վիճ ու լուսավոր գաղափարը

²Տե՛ս «Вторая мировая война: итоги и уроки». М., 1985, с. 379.

վեր էր ամեն ինչից, այն տիրապետել էր բոլոր մարդկանց, վերածվել կորուսին կորով հաղորդող ուժի ու մդրում էր վիթխարի գործերի՝ անհնարինը հնարավոր դարձնելու աներեք հավատով։

Մինչև պատերազմի ավարտը հակառակորդի ուժերի բացարձակ մեծամասնությունը գտնվում էր խորհրդագերմանական ռազմաճակատում, որտեղ լուծվում էր հաղթանակի հարցը։ Աշխարհի ուշի-ուշով հետևում էր խորհրդային երկրներում տեղի ունեցող ռազմական բախումներին։ Այդ ռազմաճակատներում իրականացվող օպերացիաներն իրենց մասշտարներով, մարդկանց թվաքանակով ու կիրառված տեխնիկայով, ռազմական արվեստի տեսակետից անախաղեակ երևույթ էին պատերազմների պատմության մեջ։ Այդ ռազմաճակատներում էլ նվաճվում էր հաղթանակը ֆաշիստական հորդաների դեմ։ Կարմիր բանակի հաջողությունները ամբողջ աշխարհում ցնծության հետ մեկտեղ զարմանք էին առաջացնում։ Նույնիսկ Գերեզը՝ ֆաշիզմի խավարամիտ ու մարդատյաց գաղափարախոսության հիմնական մշակողներից մենքը, որը հաճախ էր «կանխատեսումներ» անում Կարմիր բանակի պարտությունների ու մոտալու շախատման մասին, 1944 թ. նոյեմբերին իր ուղիով լույթում ասաց։ «Ենք թվում է, թե խորհրդային անընդգրկելի տափաստաններից ենում են նորանոր զանգվածներ, կարծես թե ինչո՞ր կախարդ ուրայան կավերից ծեփակերտում է յանկայած քանակությամբ բոլշևիկյան մարտիկներ։»

Հաղթանակում Խորհրդային Միության ու նրա կորեկտի վճռական դերի մասին վկայությունների հիշատակումն իսկ կիսամի մի ամբողջ ստվար գիրք։ Ուստի մենք այսուղե սահմանափակվենք մի քանի կարծիքներով, որոնք արտահայտվել են դեռևս պատերազմի ժամանում։

1942 թ. ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը գրել է. «Մեծ ռազմավարության տեսակետից պահանջվում է աշխարհող անել այն ակնառու փաստը, որ ռուսական բանակները ոչչացնում են հակառակորդի ավելի շատ վիճակոր ու զինք, քան Միավորված պետքի մյուս 25 երկրները միասին վերցված»³: Խոկ 1943 թ. ՌԽԻՆՍՊՈՆ Զերչիլը, հիացած պատերազմական գործողություններում Կարմիր բանակի սիրանքներով, գրել է. «Կարմիր բանակի հաղթանակները, որոնք առաջ են բերել դաշնակիցների անսահման հիացմունքը, որոշեցին գերմանական միջիտարիզմի բախտը։ Ապագա սերունդները Կարմիր բանակի հանդեպ իրենց պարտական կիամարեն նույնքան աներկեցայորեն, որքան մենքը, որոնց վիճակից ականատես լինել այդ վեհապրանչ սիրագործություններին»⁴:

Են որպիսի պատմության կերպարանները վերջնականապես չկորցնեն իրենց խիղճը և ընդունեն, որ Փաշչիմի դեմ տարած հաղթանակում վճռական դերը պատկանում է խորհրդային երկրին, նրա վիճակը ուժերին, վկայակոչներ նաև գերմանացի պատմարան Վ. Ռեներին։ «Երբ արևմտյան դաշնակիցները 1944 թ. ամռանը ձեռնամոլի եղան «Ժվոռպայի ամրոցի» վրա վճռական հարձակման, երկրորդ համաշխարհային պատերազմի երջը գործնակում արդեն կանխորշված էր։ Գերմանիան պետք է պարտություն կրեր Ռուսաստանից»։

Խորհրդագերմանական ռազմաճակատում շարքից դուրս բերվեց գերմանական 607 դիվիզիա, գրեթե 3,5 անգամ ավելի, քան արևմտանվարության ու միջերկրածովյան բոլոր ռազմաճակատներում միասին վերցված՝ 176 դիվիզիա⁵:

1944 թ. ընթացքում իրականացրած, ռազմավարական նշանակություն ունե-

³ Տես նոյեն տեղում, էջ 121:

⁴ «Պերոպիսկա Պредседателя Совета Министров СССР с Президентами США и Премьер-Министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941—1945 гг.», т. 1. М., 1957, с. 310.

⁵ Տես «Վելիչие подвига Советского народа». М., 1985, с. 370.

յող 10 օպերայիաների շնորհիվ Կարմիր բանակը լիովին ազատագրեց խորհրդային հողերը զավթիչներից, այնուհետև ջախչախիչ հարվածներով վերջնական պարտության մատնեց ուժեղ և գոռովաճիռ հակառակորդին: 1945 թ. մայիսի 8-ին ստորագրվեց գերմանացիների անվերապահ կապիտույցայի ակտը: 1945 թվականը մնաց պատմության մեջ որպես հայրանակի տարի:

Եվրոպական ժողովուրդները հանձնին խորհրդային վիճակորի տեսան նոր մարդու, որի հայրենասիրությունը, ժողովրդի և հայրենիքի նկատմամբ ունեցած բարձր պատասխանատվությունը, դժվարությունները հաղթահարելու ընդունակությունը, թշնամուն հաղթելու անհողողող կամքը, ծանր փորձությունների պահերին ընկերող փրկելու համար անձնապիհության պատրաստակամությունը, միաժամանակ հակառակորդի խաղաղ ժողովրդի նկատմամբ մարդասիրությունը նրան բերեցին համամարդկային ճանաչում և ժողովուրդների հարգանքը: «Կարմիր բանակը, —գրել է «Եյու Ցորք հերալդ տրիբյուն» թերթը 1945 թ. հունիսին, —փաստորեն դարձավ Եվրոպայի և աշխարհի կեսը ազատագրած բանակն այն խմաստով, որ առանց այդ բանակի և առանց այն անսահման փոհերի, որ կրեց նա, նայիմի դաժան թից ազատագրվելն անհնարին կլիներ»:

Տեղեկանքի կարգով ասենք, որ եվրոպական երկրների պատագրման համար խորհրդային կողմից պատերազմում զոհվել է ավելի քան 1 միլիոն մարդ: Հայթանակում ներդրած նյութական ծախսերի տեսակետից նույնակեն առավելություն ունի Խորհրդային Միությունը. դրանք կազմել են 485 մլն. դոլար, իսկ ԱՄՆ-ի, Անգլիայի, Կանադայի և Ֆրանսիայի ծախսերը միասին վերցված կազմել են 438,3 մլն. դոլար:

Դատապարտելով ԽՍՀՄ-ում թույլ տրված սխալները և կատարված հանցագործությունները՝ այնուամենայնիվ հաստատակեն կարենի է ասել, որ եթե այսօր կան ազգեր և ազգային պիտություններ իրենց տնտեսական ու ժողո-

վորդագարական գարզացումներով, եթե պահպանվել է համաշխարհային քաղաքակրթությունը և փլուզվել է դարավոր գաղութատիրությունը, ապա այդ ամենը ֆաշիզմի դեմ Խորհրդային Միության տարած հաղթանակի շնորհիվ է: Սա է ճշմարտությունը, ու թերևս դրա մեջ է հայթանակի մնացուն համաշխարհային արժեքը:

Հայրենական մեծ պատերազմը այս ամենի հաջակառումով պետք է դիտել որպես 20-րդ դարի մեծագույն իրադարձությունը:

Այդ հայթանակն առանձնապիս նըշանակալից է հայ ժողովրդի համար: Հայաստանի սահմանների մոտ նրա տարածք ներխուժելու նպատակով կուտակված թուրքական 26 դիվիզիա ապաւում էին հրամանի՝ զավթելու Անդրկովիլապը և մինչև ավարտը հասցնելու հայերի ցեղասպանությունը: Բայց դա կանխվեց Ստալինգրադի շրջանում գերմանաֆաշիստական զորքերի կրծք պարտության շնորհիվ: Զպեսոր է մոռանալ նաև Արդովֆ Հիտլերի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Մտցնելով գերմանական («արհական») ազգի գտարյունության պահպանման մասին օրենքը՝ Հիտլերն այն դիտում էր «որպես միջոց... փրկելու գերմանական արյունը ապականումից», որի աղբյուր կարող են լինել ոչ միայն հրեաները, այլև հայերը⁶:

Ազգային հապարտությամբ պետք է նշենք, որ պատերազմի ռազմաճակատների ըոլոր գործառնակներում, դաշնակիցների բանակներում, պարտիզանական և գիմադրական շարժումներում հարյուր հազարավոր հայ մարտիկներ աշքի ընկան իրենց սիրագործություններով, սպաները, գեներալներն ու մարշալները՝ մարտավարական և ռազմավարական տաղանդով, բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու, անսիսալ որոշումներ ընդունելու և դրանք անկուրում կամրով իրականացնելու կարողությամբ:

Նշենով հիտլերյան Գերմանիայի դեմ

⁶ Տես Գ. Բարդակչյան, Հիտլերը և հայերի ցեղասպանությունը: Ե., 1991:

պատերազմում հայ ժողովրդի ծանրակշիռ ներդրումը՝ ականավոր պորազար ժուկովն ասել է, որ հայ ռազմիկները՝ վիճակորի մինչև մարշալ իրենց անունները պահպաղադեսին անվեհեր մարտիկների շխամրող փառքով: «Հայերը ոչ թե պատերազմի ստորական մասնակիցներ էին, այլև իրենց քաջությամբ, անձնագործությամբ և ռազմական տաղանդով օրինակ էին ծառայում ամբողջ վաշտերին, գնդերին, բրիգադ ներին, դիվիզիաներին, — գրում է բեղուռական պարտիզանների փառապանծ ղեկավար, Խորհրդային Միության հերոս գեներալ Վ. Կորժինը: — Նրանք իրենց հերոսությամբ և կարգապահությամբ փայլում էին ռազմաճակատների ամենատարեր զորատեսվաններում: Ես խոնարհում եմ իմ գործիք հայ պարտիզանների սիրազորդությունների առջև, այդ իսկական ռազմիկների առջև, որոնք ոչ թե հրամանով, այլ կամովին գնում էին ստորաբաժանումների առջևնից: Չընդունել կամ նսեմայ-

նել այդ նշանակում է զուրկ լինել ողամբությունից: Ապատաւենչ հայ ժողովուրդը, եթեն նույնիսկ չիներ ԽՍՀՄ կապմում, չէր կարող մեկուսացած մնալ այնպիսի հետադիմական ուժերի դեմ պայքարից, ինչպիսին հիտլերյան ֆաշիզմն էր:

Հայորդիները բազմապատկեցին մեր ժողովրդի պատագրական պայքարի հերոսական ավանդությունները, արժանացան ֆաշիզմի ստրկությունից պատագրված ժողովուրդների երախտագիտությանն ու համակրանքին:

Հանուն այդ պատմական առարելության հայ ժողովրդի առատորեն թափած արյունը բարոյական իրավունք է վերապահում մեզ հատուցման պահանջ ներկայացնելու եվրոպական ժողովուրդներին ու նրանց կառավարություններին՝ ճանաչելու հայերի նկատմամբ թուրքերի իրականացրած ցեղասպանությունը, ինչպես և զորավիճ կանգնելու Ղարաբաղի ժողովուրդի արդարացի պահանջներին:

ВО ИМЯ ИСТОРИЧЕСКОЙ ПРАВДЫ

Г. Г. ОГАНЕСЯН, полковник в отставке

РЕЗЮМЕ

История Второй мировой войны и ее составной части — Великой Отечественной войны, — как и многие другие исторические события, порой фальсифицируется. В частности, фальсифицируются такие факты, как причины возникновения войны и ее истинные виновники, те силы, которые сыграли решающую роль в победе над фашизмом и т. д.

Делаются попытки виновником развязывания II мировой войны представить СССР. Однако общеизвестно, что I мировая война не разрешила всех противоречий между двумя воюющими блоками, а глубокий экономический кризис, охвативший Запад, лишь усугубил их. Запад не только в нарушение Версальского договора помогал фашистской Германии окрепнуть, но и шел на территориальные уступки «странам оси» за счет малых государств Европы, пытаясь фашистскую агрессию направить против СССР.

Решающую роль СССР в разгроме фашизма официально признавали в свое время как лидеры демократического лагеря (Ф. Рузвельт, У. Черчилль), так и ведущие историки Германии и многие руководители вермахта.

Делаются также попытки уменьшить значение этой победы для армянского народа. Однако общеизвестно, что Турция на границе с СССР сосредоточила до 26 дивизий с целью вторжения в Закавказье и доведения до конца совершенного в 1915 г. с ведома Кайзеровской Германии геноцида армян.

Известно и отношение к армянам Гитлера, который считал, что источником осквернения «арийской» крови немцев являются не только евреи, но и армяне, которых также считал семитами.

Тысячи армян, сражаясь в рядах ВС СССР, в составе союзных армий, партизанских отрядов и движений сопротивления в различных странах Европы, погибли во имя освобождения народов этих стран от «коричневой чумы», от угрозы геноцида и имеют моральное право требовать от этих народов объективного отношения к признанию факта осуществления Турцией первого в XX веке геноцида — геноцида армян.

IN THE NAME OF HISTORICAL TRUTH

H. G. HOVHANNISYAN, Retired Colonel

SUMMARY

The history of the World War II and its component part — the Great Patriotic war as well as many other historical events now and then are distorted. In particular such facts are distorted as the reasons of origin of the war and its true culprits, those forces which played decisive role in the victory over fascism and so on. The attempts to present USSR as a culprit for unleashing the war, can be watched in nowadays. However it is well-known that the World War I couldn't solve all contradictions between two struggling blocks and the deep economic crisis spread all over the west only intensified them. The west not only by infringement of Versailles agreement helped fascist Germany to get stronger but also made territorial cession to the «countries of hub» at the expense of the small states of Europe, trying to direct the fascist aggression against the USSR. The decisive role of the USSR in rout of fascism officially was recognized at the time by the leaders of democratic camp (F. Roosevelt, W. Churchill) as well as historians of Germany and many chiefs of Wehrmacht. Attempts are made to belittle the importance of this victory for Armenian people. However it is well-known that Turkey on border with the USSR had concentrated up to 26 divisions so as to invade Transcaucasia and finish up to the end the genocide of Armenian people which had been carried out in 1915, with the knowledge of Kaiser Germany.

The attitude of Hitler to Armenians is known either, who considered the source of desecration of «Aryan» blood of the German people were not only Jews but also Armenians who were considered to be Semite as well. Thousands of Armenians fighting in allied armies, partisan detachment and in the movement of resistance in various countries of Europe were killed in the name of liberation of the peoples of those countries from brown plague, from threat of genocide and have moral right to demand of those nations to admit the fact of realization of genocide by Turkey against Armenian people.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԴԱՎԱՏԻ ԹԻԿՈՒՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր

Պատերազմի առաջին օրերից Հայաստանում մեծ աշխատանքներ ծավալեցին թիկունքը ռազմաճակատի պահանջներին համապատասխան վերակառուցելու ուղղությամբ: Անհրաժեշտ էր ապահովել զորահավաքը, բանակ մեկնածներին փոխարինողներ ընտրել, ռազմաճակատի պահանջներին համապատասխան ընդլայնել արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը, եռոց տանել երկաթուղիների, գործարանների, կողլունտեսությունների անվտանգության, անխափան աշխատանքի համար, կազմակերպել հակառակային պաշտպանություն և այլն:

1941 թ. հունիսի 30-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե: Թիկունքային հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում, ժողկումստրին կից ստեղծվեց մեծ լիազորություններով օժտված հատուկ կարգադրիչ մարմին՝ «Փոքր Ժողկոմխորի նիստ» անունով, որը ղեկավարում էր ռազմական արդյունաբերության աշխատանքները, կազմակերպում ռազմաճակատի պատվերների կատարումը:

Նախապատերազմյան տարիներին հանրապետության արդյունաբերության կարևոր ճյուղերը ձևավորվել և գործում էին հիմնականում մյուս հանրապետություններից (մասնավորապես Ռուսաստանից) ստացվող մերժնաների և հումքի հաշվին: Պատերազմի հետեւ վանքով իսահուտվեցին տնտեսական կայիքը, և նվազեց հումքի ու վառնիքի մատակարարումը: Դա բավական ծանր վիճակ ստեղծեց: Շուտով վերանայվեցին պատերազմից առաջ հաստատված տնտեսական զարգացման պլանները, սահմանվեցին արդյունաբերության

խնդիրներն ու արտադրանքի ծավալները, գյուղատնտեսության, տրանսպորտի, կապիտալ շինարարության, խոնայողության խնդիրները, կարգավորվեցին աշխատանքի, աշխատավարձի և այլ հարցեր: Հիմնական ուշադրությունը դարձվեց ներքին պաշարների օգտագործման վրա:

Վառելիքային ճգնաժամը մեղմացներու նպատակով սեղմ ժամկետում կապմակերպվեց Զաշուոի գորշ ածխի, տորֆի արդյունահանումը, բամբակի սողունների ու խաղողի վագերի մթերումը որպես վառելիքի և այլ աշխատանքներ: Երենց աշխատանքները վերակառուցեցին Արավերդու և Կապամնի հանրագործներն ու մետաղագործները: Պղնձարդյունաբերողները 1941 թ. դեկտեմբերի 5-ին կատարեցին տարեկան պլանները: Երեսնի Զերծինակու անվան հաստոցաշխնական գործարանը, անցնելով շորջօրյա աշխատակարգի, առաջինը ձեռնարկեց ռազմաթերքի արտադրությունը: Մեղմ ժամկետում վերակառուցվեցին և մըսեցին ռազմական արտադրանք տալ երեսնի մեխանիկական, կարբիդի գործարանները, քիմիական կոմբինատը, Լենինականի մեխանիկական գործարանը, Կիրովականի քիմիական կոմբինատը և այլ ձեռնարկություններ¹: 1941 թ. վերջին հանրապետության արդյունաբերությունը 12 անուն վիճամթերք էր արտադրում (տարբեր տեսակի ակտների պատյաններ, պայթուցիչներ և այլն): Բայց այդ, զգալի աշխատանքներ տարվեցին գումակային և ինժեներա-

¹ Տես Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊԿԱ), ֆ. 113, գ. 9, գ. 100, թ. 64:

հրետանային ծառայության գույքի, կապի իրերի, քիմիական պաշտպանության, հրշեց, քողարկման և այլ նյութերի արտադրության ուղղությամբ, որոնց միքանի տասնյակ տեսակներ հիմնականում մեր հանրապետությունն էր մատակարարում բանակին: Հանրապետության աշխատավորները ռազմաճակատի կարիքների համար արտադրում էին նաև վինվորական հագուստի և գույքի 50-%ից ավելի տեսակներ (շինել, կիսամուշտակ, կոշիկ, սպիտակեղին և այլն):²

Հանրապետությունն ակսել էր թողարկել նաև ստրատեգիական հումք: Գերմանիայի կողմից երկրի մեծ տարածքներ նվաճված լինելու հետևանքով երկրի քիմիական արտադրությունը նըփավել էր, և դրանով ավելի էր կարենրվում հանրապետությունում այդ ճյուղի զարգացման անհրաժեշտությունը: Քիմիական արտադրության անընդհատ աճման հետ մեկտեղ կառւատիկ սոդա, սինթետիկ կառւչուկ, կարբիդ և այլն) պատերազմի հրամայական պահանջների հաշվառմամբ յուրացվում էր նաև նոր տեսակի ապրանքների արտադրություն (սոսինձ, հենրուկ քլոր, ռետինատեխնիկական իրեր, հակատանկային հեղուկ և այլն):

Այդ նպատակով նորանոր արտադրամասեր էին կառուցվում, վերակառուցվում էին հները: Քիմիական արդյունաբերության մեջ ձեւավորվեցին նոր ճյուղեր, որոնք հումքի արտադրությունից բացի ակսենին թողարկել նաև պատրաստի արտադրանք: Ձիկունք փոխադրված սարքավորումների օգնությամբ կառուցված Արդտեխնիկա գործարանը 1942 թ. կեսերին ակսեն արտադրել ավտոդոմեր: 1943 թ. շահագործվեց Երևանի քիմիադեղագործական գործարանը, որը նախատեսվում էր շահագործման հանձնել 1945 թ.: Նորանոր արտադրամասեր կառուցվեցին նաև Ալա-

վերդու և Երևանի քիմիական գործարաններում: Քիմիական արդյունաբերությունը մեծ թոհջ ապրենեց:³

Դեռևս նախապատերազմյան տարիներին հանրապետությունում բավականին զարգացել էր գունավոր մետաղների և պղնձի արտադրությունը: Այն կենարոնացած էր Արավերդում և Կապանում: Սակայն պատերազմի մկրնական շրջանում պղնձարդյունաբերությունը խիստ անկում ապրեց տեխնիկական բազայի թուլության և որակյալ կադրերի պակասի պատճառով: Մեծ թվով հանրագործներ ու բանվորներ ռազմաճակատ էին մեկնել, իսկ նրանց փոխարինելու եկած կանայք ու պատանիները չէին կարող սեղմ ժամկետում յուրացնել մետաղագործի դժվար մասնագիտությունը: Կապանում, օրինակ, 1942 թ. որակյալ բանվորների 50 %-ից ավելին վորակողմել էր բանակ: Բայց այդ, նվազել էր քարածուխի, հրակայուն աղյուսի, հաստոցների ու պահեստամասերի ներմուծումը: Չնայած պղնձարդյունաբերության վերակառուցման մասին խիստ որոշումներին, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այն սկսեց արտադրանքն ավելացնել միայն 1944 թ.⁴:

Պատերազմի տարիներին հանրապետությունում բավական բարձր տեմպերով զարգացավ մեքենաշինությունը: Շնավորվեցին նոր, բարձր արդյունավետությամբ գործող ճյուղեր՝ հաստոցաշինությունը, սարքաշինությունը, էլեկտրամեքենաշինությունը և այլն: 1941–1945 թթ. մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքն աճեց 1,7 անգամ: Զերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը համարվեց բարձր արտադրողականությամբ հաստոցներով ու հատուկ սարքավորումներով և 1944 թ. սկսեց թողարկել խորատային նոր հաստոցներ: Հանրապետության սարքաշինության առաջնեկը Երևանի ժամացույցի գործարանն էր, որն սկսեց արտադրանք տալ 1943 թ.: Երևանի ավտոնորոգման գործարանը համարվեց

² Տես Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների փաստաթուղթերի պահպանման պետական կենտրոնական արխիվ (այսուհետեւ՝ ՀՀ ՀԿՓՊԿ), ֆ. 1, գ. 6, գ. 37, թ. 25:

³ Տես նույն տեղում, ց. 23, գ. 26, թթ. 28–29:

⁴ Տես ՀՀ ՆՊԿԱ, ֆ. 113, ց. 15, գ. 253, թ. 11:

նոր սարքավորումներով և 1944 թ. վերակառուցվելով ավտոպահեստամասերի գործարանի: Պատերազմի տարիներին դրվեցին նաև Էլեկտրամեքենաշինության և Էլեկտրատեխնիկական արտադրության հիմքերը: 1942 թ. սկսվեց Հայէ-

պարզացման հեռանկարները (Հոկտեմբերյան, Արտաշատ, Արթիկ, Սպիտակ, Կոտայք, Շամշադին և այլն):

Պատերազմի սկզբնական շրջանում հիմնական միջոցները և ուշադրությունը ուղղվում էին ծանր արդյունաբե-



Երևանի հմ. 447 գործարանում պատրաստված առաջին ինքնաթիռը, 1943 թ.

լեկտրագործարանի (հմ. 447) շինարարությունը, որտեղ ծրագրվում էր արտադրել ինքնաթիռի մասեր: Հետագայում այն դարձավ հանրապետության ամենախոշոր արտադրական միավորումներից մեկը: 1943 թ. վերականց թաշարանի պըղնձամոլիբդենի կոմբինատի շինարարությունը, իսկ 1944 թ.՝ պատերազմի ըսկըբում ընդհատված թանաքերի այլումնի գործարանի (Կանաչ) կառուցումը⁵:

Ինչպես տեսնում ենք, պատերազմի ծանր տարիներին հանրապետությունում արդյունաբերությունը բավականին բարձր տեմպերով է զարգացել: Կարևոր է և այն, որ խոշոր, հիմնական արդյունաբերական կենտրոններից բացի նոր գործարաններ և ֆաբրիկաներ էին հիմնվում նաև մի շարք շրջկենտրոններում, որով փաստորեն ուրվագծվեցին հանրապետության արդյունաբերական

րական ձեռնարկությունները թիկունքային հանրապետություններ փոխադրելուն, և թիջ տեղ էր հատկացվում սրնընդի և թեթև արդյունաբերության ձեռնարկություններին: Միջոցներ չկային նույնիսկ թիկունք փոխադրված գործարաններն աշխատեցնելու համար: Այդ պայմաններում բանակի կարիքները հոգացու հիմնական ծանրությունն ընկալ թիկունքային հանրապետություններում գործող ձեռնարկությունների վրա:

Ի տարբերություն ծանր արդյունաբերությունից թեթև արդյունաբերությունը հանրապետությունում արագ վերակառուցվելով և պատերազմի առաջին օրերից սկսած արտադրանք էր տալիս ռազմական կարիքների համար: Արդեն հուլիս-օգոստոս ամիսներին ռազմական պատվերներով արտադրվում էին թանգիֆ, գուլպա, սպիտակեղին, կղզիկ և այլն: Այսունդ զգացվում էր հումքի, քիմի-

⁵ Տես ՀՀ ՀԱՓՈՊԿԱ, ֆ. 1, ց. 32, թ. 116:

ական նյութերի, սարքավորումների կարիք, որը տեղական միջոցներով հոգավարական դժվար էր: Սակայն պատերազմը հարկադրում էր հաղթահարել բոլոր տեսակի դժվարությունները: Թեթև արդյունաբերության աշխատողները, հիմնականում կանայք, լարելով բոլոր ուժերը, կատարեցին ու գերակատարեցին պատերազմի բոլոր տարիների պատվերները:

Պատերազմի տարիներին լարված աշխատանք կատարեցին նաև սննդարդյունաբերության արտադրանքի ավելացման համար, որի կարիքը շատ մեծ էր: Բանակի և բնակչության պահանջմունքները բավարարելու նպատակով պատերազմի տարիներին հանրապետությունում զգալիորեն ընդլայնվեց սննդարդյունաբերությունը, յուրացվեցին արտադրության նոր տեսակներ, ստեղծվեցին նոր արտադրամասեր, ավելացվեցին արտադրական կարողությունները: Երեանի պահածոների գործարանն սկսեց մսի պահածոների արտադրությունը, Լենինականի մսի կոմբինատը յուրացնեց բժշկական մի շարք պատրաստուկների արտադրությունը, ընդլայնվեց ծխախոտի, տնտեսական օճառի, գինու և օղու արտադրությունը⁶: 1942 թ. Վերսալի Հոկտեմբերյանի պահածոների գործարանի շինարարությունը, և այն շուտով սկսեց արտադրանք տալ: Չնայած պատերազմական դժվարություններին, զգալի միջոցներ հատկացվեցին գինեգործական նոր հոսքեր տեղակայելու և շաքարի արդյունաբերությունն սկսվածքորելու համար: Միայն 1944 թ. այդ նպատակով ծխախոտը մոտ 40 միլիոն ռուբլի⁷: Պատերազմի վերջին տարիներին մի շարք նոր ֆարբիկաներ ու գործարաններ կառուցվեցին Երևանում, Լենինականում և այլ քաղաքներում, որի շնորհիվ զգալիորեն ավելացան սնընդի ու թեթև արդյունաբերության տեսականին ու արտադրանքը: Դա հնարավորություն տվեց զգալիորեն գերակատարելու պետական առաջադրանքները: Վե-

րակառուցված արդյունաբերությունը հետագայում զարգացում ապրեց, և հանրապետությունը որոշակի շափով մասնակցեց զենքի, ռազմական հանդերձանքի արտադրությանը:

Պատերազմի տարիներին շահագործման հանձնվեցին 30 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն: Անշուշտ, դա կատարվում էր բավական ծանրը պայմաններում, եթե ամենուր ըգգայլում էր հումքի, բանվորական կադրերի սուր կարիք: Հանրապետության բանվոր դասակարգը մտավորականության հետ մեկտեղ հերոսական ճիգեր գործադրեց ռազմական պատվերները ժամանակին կատարելու համար:

1944 թ. 25 անուն վենք ու վինամըթերք էին արտադրվում: Պատերազմի ծանր պայմաններում Հայաստանում տասնյակ ֆարբիկաներ ու գործարաններ կառուցվեցին, նոր արտադրամասեր շահագործվեցին, ինչը հնարավորություն տվեց զգալիորեն ավելացնելու արտադրանքի քանակն ու տեսականին, կատարելու ռազմական պատվերները:

Տարեցտարի ընդլայնվող արդյունաբերական ձեռնարկությունները որակյալ բանվորական կադրերով ապահովելու նպատակով պատերազմի տարիներին վերակառուցվեց նրանց պատրաստման համակարգը: Բանվորների ամենուր զգայլող կարիքը սեղմ ժամկետում բավարարելու նպատակով կիսով շափ կրծատվեցին արհեստագործական և ֆարբիկագործարանային ուսումնարաններում ուսուցման նախկինում գործող ժամկետները, զգալիորեն ավելացավ դրանց քանակը. Եթե մինչև պատերազմը 5 ուսումնարան կար, որտեղ սովորում էին մոտ 1000 պատանիներ, ապա 1944 թ. դրանց թիվը հասավ 15-ի, որտեղ 4000-ից ավելի սովորողներ կային⁸: Այդ հաստատությունները հաճախ բանվորական կադրեր էին պատրաստում տվյալ կոնկրետ ձեռնարկության համար: Այսպես՝ Երևանի քիմիական կոմբինատին սպասարկում էր իմ. 1 արհեստագործական ուսումնարանը, Զեր-

⁶ Տես նույն տեղում, ց. 2, գ. 11, թ. 24:

⁷ Տես նույն տեղում, ց. 24, գ. 3, թ. 108:

⁸ Տես նույն տեղում, ց. 31, գ. 54, թ. 44:

ժինսկու անվան գործարանին՝ հմ. 7 ուսումնարանը, Լենինականի տեքստիլ կոմբինատին՝ հմ. 1 ուսումնարանը և այլն: Հայրենական պատերազմի տարիներին հանրապետության աշխատաքային ռեզերվների վարչության կողմից պատրաստվեցին մոտ 10 հազար որակյալ բանվորներ:

Սակայն բանվորական կադրերի պատրաստման պանզպատճեն ձևը ինչպես նախկինում, այնպես էլ պատերազմի տարիներին մնում էր անհատական, բրիգադային ուսուցումը գործարաններում ու ֆաբրիկաներում: Բանվորական կադրերի պատրաստման այս ձևի արդյունավետությունն ավելի բարձր էր, որովհետև այն դեկավարում էին արտադրության առաջավոր և մեծ փորձ ունեցող մասնագետները: 1942 թ. օգոստոսին հանրապետության կառավարությունը հասուլ որոշում ընդունեց տեղերում անհատական, բրիգադային ուսուցում կազմակերպելու մասին: Լենինականի տեքստիլ կոմբինատում պատերազմի տարիներին 2200-ից ավելի որակյալ բանվորներ պատրաստվեցին: Անմիջականորեն գործարաններում կադրերի պատրաստման ձևը լայնտրեն տարածված էր նաև Երևանի, Ալավերդու, Կապանի արդյունաբերական ձեռնարկություններում: Պատերազմի տարիներին այդ միջոցով մասնագիտական որակավորում ստացան 11,5 հազար պատանիներ ու առջիկներ, որոնց մեծ մասը փոխարինեց ուսամաճակատ մեկնածներին⁹:

Աշխատուժի արդյունավետ օգտագործման նպատակով կառավարությունը մի շաբթ որոշումներ ընդունեց պարտադիր աշխատանքի, արտաժամյա աշխատանքի և այլ կարևոր հարցերի մասին: Ձեռնարկված միջոցառումները հընարավորություն տվեցին անընդհատ համալրելու բանվոր դասակարգի կազմը: Միայն 1942 թ. հանրապետությունում աշխատանքի է ընդունվել ավելի շաբաթ 16 հազար բանվոր, որոնց կեսից ավելին կանաչը էին¹⁰: Չայած պատե-

րազմի տարիներին կոլտնտեսային գյուղացիությունը նույնպես զգալիորեն պակասել էր, և այնտեղ ևս զգացվում էր աշխատողների պակաս, բայց բանվորական կադրերը հիմնականում հավաքագրվում էին գյուղերից: Ժողովածորին առընթեր ատենդված աշխատուժի հաշվառման, մորիլիզացման-վերաբաշման բյուրոն, հաշվի առնելով տվյալ արդյունաբերական ձեռնարկության աշխատուժի կադրերը, հիմնականում շրջակա գյուղերից բանվորներ էր հավաքագրում, կազմակերպում նրանց ուսուցումը: 1942 թ. այդ բյուրոն 185 հազար գյուղական բնակչիների հավաքագրեց արդյունաբերական ձեռնարկություններում աշխատուղի համար: Բայց այդ, աշխատուժը համարվում էր նաև գերմանացիների պավթած տարբեր շրջաններից Հայաստան փոխադրվածներին աշխատանքի տեղավորելու միջոցով: 1942 թ. դրանց թիվը հասնում էր 22 հազարի, որոնց մեջ չեն որակյալ կադրերն ու մասնագետները: Աշխատանքի էին ընդունվում նաև թոշակառուները, հաշմանդամները և ուրիշներ: Այդ բոլորով հանդերձ ամենուր աշխատողների կարիք էր զգացվում, և բանվորները հաճախ 16–18 ժամ չեին հեռանում գործարաններից:


Պատերազմը նոր և ծանր խնդիր դրեց կոլտնտեսային գյուղացիության առջև՝ օգտագործել բոլոր հնարավորությունները ուսպամաճակատի անխափան մատակարարումն ապահովելու համար: Խնդիր էր դրվում ընդարձակիրու հատկապես հացահատիկի, տեխնիկական կոլտուրաների ցանքատարածությունները, ավելացնելու անստուների գըխարանակը, բարձրացնելու բերրատրվությունն ու միջերատվությունը: Թիկունքային հանրապետությունները, այդ թվում և Հայաստանը, պետք է բազմապատկեն իրենց արտադրանքը՝ դրանով իսկ լրացնելով այն բացը, որ առաջացել էր թշնամու կողմից գյուղատնտեսական շատ կարևոր շրջանների զավթման պատճառով: Դա շատ դժվար խնդիր էր, մանավանդ որ պատերազմի

⁹ Տես ՀՀ ՆՊՊԱ, ֆ. 163, գ. 11, գ. 24, թ. 18:

¹⁰ Տես ՀՀ ՀԿՊՊԱ, ֆ. 1, գ. 81, գ. 6, թ. 142:

պատճառով ամենուր զգացվում էր կադրերի ու մասնագիտների, գյուղմեխանիքատորների կարիք, նվազել էր կոլտընտեսությունների աշխատումը: Գյուղում մեծ դժվարություններ էին առաջացնել պահեստամասերի և տեխնիկայի ձեռք-

բաղարի աշխատունակ բնակչությունը: Այդ համընդհանուր շարժումն ընդգրկել էր բոլորին: Մեծահասակներն ըրադիում էին բերքահավաքով, իսկ անշափահասները՝ հասկահավաքով, մեծերի հետ անառուններ էին խնամում, կեր էին կու-



Հայաստանում արտադրվող 120-մմ ականանետներ

բերման և վերանորոգման գործում, վառելանյութի պակասության պատճառով և այլն: Այդ բոլորի փոխարեն նորից ձեռքի ծանր և անհրապույյ աշխատանքըն էր դարձել գյուղատնեսական արտադրության վճռական ուժը, և այդ ծանրը բեռն իրենց թույլ ուսերի վրա էին վերցրել կանայք, ծերերն ու անշափահասները:

1941 թ. բերքահավաքը տեղի էր ունենում պատերազմի պայմաններում: Հասուկ միջոցառումներ մշակվեցին այն ժամանակին ու անկորուատ անսկացներու համար: «Բերքահավաքի ժամանակ կորուատներ թույլ տալը, — գրում էին գյուղացիները, — մանավանդ այժմ՝ պատերազմի օրերին, հանցագործություն է»¹¹: Այսպիս էին մտածում բոլորը: Բերքահավաքի աշխատանքները հաջող կազմակերպիր նպատակով ժամանակավորապես հավաքագրվում էր նաև

տակում և այլն: Աշտարակի Եղվարդ գյուղի հաղորդում էին. «Մեր կոլտընտեսությունից զգաի թվով երիտասարդներ մեկնեցին ռազմաճակատ: Նրանց փոխարինողներ եղան հարյուրավոր հայրենասեր կանայք, մեծահասակներ ու պատանիներ: Աշխատանքի ընդունակ բոլոր կոլտնտեսականները մասնակցում են բերքահավաքին: Զկա ավելի մեծ պատվավոր գործ, քան մեր սրբազն հայրենիքի պաշտպանությունը»¹²:

Հայ կանանց նուանն ու կորովը համախմբենու, նրանց աշխատանքն սպավի նպատակամղված դարձնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ Երևանի արտադրական ձեռնարկությունների մի խումբ կանանց 1941 թ. հունիսի 26-ի բաց նամակը՝ ուղղված Հայաստանի բոլոր կանանց: «Այժմ հասել է ժամը, — գրված է այնուհեռ երբ մեր երկրի բոլոր կանայք պետք է մեջ մարդու նման դուրս գան պայքարի, գործարա-

¹¹ «Առվեսական Հայաստան», 1941 թ. հունիսի 28:

¹² Նույն տեղում, 1941 թ. հուլիսի 11:

նում թե կոլտնտեսությունում, իհմնարկում թե ճակատում զննքը ձևոքին օգնեն մեր Կարմիր բանակին՝ գավազած թշնամուն մինչև վերջ շախազանելու համար»¹³: Նույնպիսի նամակով հանրապետության կանանց դիմեցին Լենինականի մանածագործարանի կանայք, Ստեփանավանի, Կավինինոյի անսանապահները, Անանի ավագանի ծխախոտագործները: Այդ կոչերին ու դիմումներին գյուղացիությունը պատասխանում էր կոնկրետ աշխատանքով: Եթե Վարդենիսի շրջանի կոլտնտեսություններում 1941 թ. հունիսի կեսերին 2525 կին էր աշխատում, ապա մեկ ամիս անց (պատերազմն ականչուց հետո)՝ 4350 կին¹⁴: Հանրապետությունում լայն արձագանք տվեց Մարտունու շրջանի 21 կոմերժութունների դիմումը՝ իրենց գործուղելու կոլտնտեսություններում որպես մեխանիզատորներ աշխատելու համար: Եթե Հայրենիքը պահանջի, գրում էին լրանք, տրամադրությունը դեկիյ մենք կանցնենք տանկերի վրա և Կարմիր բանակի մարտական շարքերում կմարտնչենք Հիտլերի ավագակային բանդաների դիմք¹⁵: Ալավերդու շրջանի Հազվի գյուղի կոլտնտեսության Անուշ Օհանյանը, որի 10 որդիները և 5 բոռները կովում էին թշնամու դեմ, որդիներից մեկին գրում էր. «Ձենամին մեզ վրա է հարձակվել, ուզում է քանդել մեր օջախը, անպատճել իմ հարսներին, կոտորել իմ զավակներին, որբացնել թոռներին: Եթե մենք նըրան շիմադրենք, ո՞վ պետք է դիմադրի: Դուք 10 ենթայներով դիմացեք ձեր ծանր վերքերին, քաջ կրվեցք ու բարձր պահեք Օհանյանների գերդաստանի պատիվը... Մենք բոլորս եւ աշխատում ենք կոլտնտեսությունում: Ես անասնապահական ֆերմայի կթվոր եմ, ունեմ 180 աշխօր»¹⁶:

Պատերազմի նախօրյակին Հայաստանում կար 1038 կոլտնտեսություն, 15 խորհունտեսություն: Համատարած կո-

լեկտիվացմամբ ավերվածն աստիճանաբար վերականգներվ՝ գյուղացիությունը հարկադրված էր համակերպվելու և ամրապնդելու եղած տնտեսությունները, ավելացնելու անասունների գիշարանակը: Բոլությամբ ու դժվարություններով ձեսպորված գյուղատնտեսական ձեռնարկություններն սկսել էին աշխատել, տայ առաջին պլոտղները:

Պատերազմն սկսվեց գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն շրջանում: Ծայած աշխատումի կրծատմանը, հանրապետությունում կապմակերպվեցին և սեղմ ժամկետում պարտվեցին 1941 թ. բնրքահավաքն ու մյուս աշխատանքները: Ժամկետից 20 օր շուտ կատարվեցին հացահատիկի, մսի, կաթնամթերքի, կարտոֆիլի մթերումները: Հարթավայրային և նախալեռնային շրջանները հաջողությամբ կատարեցին նաև 1941 թ. աշնանացանը՝ զգալի շափով ընդլայնելով ցանքատարածությունները:

Սակայն թիկունքի աշխատանքների հաջողությունները մեծ շափերով կախված էին կաղրերից: Ռազմաճակատ մեկնածներին փոխարինողներ պատրաստելու նպատակով 1941 թ. հանրապետությունում կապմակերպվեցին մեխանիզատորների, օղակավարների, բրիգադավարների, ֆերմաների վարիչների և կոլտնտեսությունների նախագահների կարծածմակետ դասընթացներ, որտեղ պարապմունքներն անցկացնում էին գյուղատնտեսական բուհերի և համապատասխան գերատեսչությունների լավագույն մասնագետներ¹⁷:

Պատերազմը փոխեց գյուղական բնակչության սոցիալական կառույցվածքը: Գյուղական բնակչությունից մոտ 100 հազար մարդ զորակոչվել էր գործող բանակ: Գյուղում խիստ նվազել էր աշխատունակ մարդկանց քանակը: Այսպիսի Ալավերդու շրջանի Օձուն գյուղից զորակոչվել էր 757 մարդ, իջևանի Սևքար գյուղից՝ 574, Նոյեմբերյանի Կողբ գյուղից՝ 445 և այլն: Երիտասարդների պակասի հետևանքով գյուղատնտեսական

¹³ Նոյն տեղում, 1941 թ. հունիսի 26:

¹⁴ Նոյն տեղում, 1941 թ. հունիսի 12:

¹⁵ Նոյն տեղում, 1942 թ. նոյեմբերի 26:

¹⁶ Նոյն տեղում, 1942 թ. հունիսի 1:

¹⁷ Տես ՀՀ ՀԿՊՊԿԱ, ֆ. 122, ց. 3, գ. 41, թ. 35:

աշխատանքների ոչ միայն ղեկավարման, այլև կատարման հիմնական ծանրությունն ընկալ կանանց ու դեռահասների վրա: Եթե 1940 թ. հանրապետության գյուղական վայրերում ապրող 146 հազար կանանցից 123 հազարն էր մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, ապա 1942 թ. 150 հազար կանանցից՝ 147 հազարը: Նույնն էր գյուղատնտեսական աշխատանքներին անշափահասների մասնակցության պատկերը: Եթե 1940 թ. 186 հազար անշափահասներից 84 հազարն էր մասնակցել, ապա 1942 թ. նույնքան դեռահասներից՝ 122 հազարը: Դեռահասների տարեկան աշխատանքների քանակը կրկնապատկեց¹⁸:

Գյուղում հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում հացահատիկի արտադրության պարզացմանը: Հանրապետությունը սովորաբար հացահատիկ էր ներմուծում իր կարիքները բավարարելու համար: Պատերազմի տարիներին հանրապետությունը կարողացավ ոչ միայն իրեն բավարարել հացահատիկով, այլև զգալի քանակությամբ հացահատիկ հանձնել պետությանը, օգնել ուսամական կարիքների բավարարմանը: Այդ նպատակով պատերազմի տարիներին զգալի շափով կրճատվեցին բամբակի, անասնակերի ցանքատարածությունները և ավելացվեցին հացահատիկի ու ծխախոտի դաշտերը:

1942 թ. երկրորդ կեսից ծանր և տագնապայի վիճակ ստեղծվեց Անդրկովկասի համար: Գերմանական վորքերը հասել էին Կովկասի մասուցյներին և փորձում էին ներխուժել Անդրկովկաս: Այդ ժամանակ բազմամարդ հակաֆաշիստական համահավաքներ էին տեղի ունենում Անդրկովկասի գյուղերում ու քաղաքներում: Օգոստոսի 23-ին թիվի սիում տեղի ունեցավ անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների համահավաքը, որը հասուն կոչով դիմեց ինչպես ճակատայիններին, այնպես էլ թիվունքի աշխատողներին՝ էլ ավելի լարված աշխատանքով բազմապատկելու եր-

կըրի տնտեսական հպորությունը և արժանի հակահարված տպար թշնամուն:

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները, հավանություն տարով այդ դիմումին, 1942 թ. համար նոր պարտավորություններ ստանձնեցին: Կոտայքի շրջանի 30 կոլտնտեսություններ հուլիսի կեսերից սկսած պետությանը հացահատիկ էին հանձնում և հետագայում հետպին ավելացրին հացահատիկի բերքահավաքը և գագաթորեն գերակատարեցին պետական պարտավորությունները: 1942 թ. դաշտավարական կուլտուրաների բերքահավաքը սեղմ ժամկետում և առանց կորուստների կատարեցին Էջմիածնի, Վիրովականի, Աշտարակի, Գորիսի, Սփյամի և այլ շրջանների տնտեսությունները: Հոկտեմբերի ավգուստին հանրապետությանը բոլոր կոլտնտեսությունները չևիր բացառությամբ կատարել և գերակատարել էին պլանով նախատեսված մթերումները:

Կորուստնեսությունները կազմակերպված աշխատանքներ կատարեցին նաև հաջորդ տարվա ցանքի նախապատրաստման և անցկացման համար: Տնտեսություններին մեծ օգնություն էին ցույց տալիս ՍՏԿ աշխատողները, որոնք բավական ծանր պայմաններում կարողանում էին ժամանակին նորոգել գյուղատնտեսական մերձնաները և կատարել աշխատանքները: 1943 թ. նույնպես հացահատիկային կուլտուրաների բարձր բերք ստացվեց: Բայց պետական բոլոր պարտավորությունները կատարենու, Էջմիածնի, Ալավերդու, Ղուկասայանի, Կապանի և այլ շրջաններում բավական բարձր վարձատրություն տվեցին կոլտնտեսականներին՝ վաստակած աշխատանքի դիմաց բաշխելով մեծ քանակությամբ դրամ, հացահատիկ, յուղ, պանիր և այլ մթերք: Հայ գյուղային հիմնականում կարողացավ խուսափել սովորական կարանքին:

Հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը 1940 թվականի համեմատությամբ 1943 թվականին աճեց

¹⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 1, թթ. 28-29:

12 %-ով, կարտոֆիլինը՝ 25 %-ով, մահնը՝ 24 %-ով և այլն: Մեկ միջինսից ավելի նկամուտ ունեցող կոլտնտեսությունների թիվն անցնել էր 100-ից: 1943 թ. պետական պարտավորությունների կատարումից բացի կոլտնտեսությունները պաշտպանության պետական ֆոնդ հանձնեցին 123 հազար փութ հայահատիկ և կարտոֆիլ¹⁹:

Դավմաճակատում 1944 թ. տարած փայլուն հաղթանակները հնարավորություն ընձեռնեցին որոշ չափով արտադրքերու նաև գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, պահեստամասեր: Ավելացվեցին նաև գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների չափերը: Եթե 1943 թ. Հայաստանի գյուղատնտեսությանը հատկացվել էր 12,6 միջին ոռուքի, ապա 1944 թ.²⁰ 21,7 միջին: Դրա մի գգայի մասը նախատեսվում էր ուղղել շրանցքաշինարարական աշխատանքներին: Լարված և հետևողական աշխատանքներ ծավալվեցին 1944 թ. բերքահավաքը սեպմ ժամկետում անցկացնելու համար: Շահումյանի, Գորիսի, Արտաշատի, Կոտայքի շրջաններում 10 – 15 օր շուրջ ավարտվեցին բերքահավաքի աշխատանքները: 1944 թ. հայահատիկի հանձնման պետական պյանը հանրապետության կոլտնտեսությունները կատարեցին 107 %-ով: Արտավալանային կարգով Կարմիր բանակի ֆոնդ հանձնվեց 200 հազար փութ հայահատիկի²⁰:

Պատերապմի տարիներին որոշակի փոփոխություններ տեղի ունեցան հանրապետության գյուղատնտեսության յանրատարածությունների կառուցվածքում: Մոտ 32 հազար հեկտարով պվելացակ հայահատիկի ցանքատարածությունը, ինչն անշուշտ բացասարար անդրադակ մյուս գյուղատնտեսական ճյուղին պարգայման վրա: Հիմնական ուշադրությունը հայահատիկի արտադրության պվելացման վրա դարձելու պատճառով հատկապիս պատերապմի առաջին տարիներին անհրաժեշտ աշխատանքներ չտարվեցին այգե-

գործության և խաղողագործության զարգացման ուղղությամբ: Ավելին, զգային ընդունելի կրծատվեցին դրանց տարածությունները, և նվազեց բերքատվությունը:

Այգեգործության վիճակը բարեկավելու նպատակով աշխատանքներ կատարվեցին ողոգելի հողատարածություններն ընդարձակելու ուղղությամբ: 1943 թ. վերսկզբն Զանգվիլ, Աղյամանի, Թալինի և Օձուկի ջրանցքների ջինարարությունը: Պետական հատկացումներից բացի, այդ աշխատանքների ծավալման համար ըգայի չափով կապիտալ ներդրումներ կատարեցին նաև կոլտնտեսությունները: Աշխատանքի հիմնական ծանրությունն ընկալ կոլտնտեսականների վրա, որոնց օգնում էին բանիք-ծառայողներն ու ուսանողները: Պատերապմի ծանր տարիներին Ավակերդու, Ստեփանավանի, Կայինինոյի շրջանների կոլտնտեսականների ուժեղով ավարտվեց Լոռվա ջրանցքի ջինարարությունը: Երևանի ուսանողության և բանվոր-ծառայողների ուժեղով կառուցվեց Նորքի ջրանցքի առաջին հերթը: Ընդհանրապես պատերապմի տարիներին հանրապետությունում ողոգելի հողատարածություններն ավելացան շուրջ 27 հազար հեկտարով, որի մեծ մասը հատկացվեց այգեգործությանն ու տեխնիկական կուտարանների մշակմանը: Էջմիածնի, Արտաշատի, Հոկտեմբերյանի կոլտնտեսություններում և խորհունտեսություններում այգիների տարածության ընդլայնման հետ մեկտեղ զգայի չափով բարձրացավ բերքատվությունը, հետևաբար և տնտեսությունների եկամտաբերությունը:

Հանրապետության համար կարևոր էր նաև այն հանգամանքը, որ գյուղասիներն այգեգործությամբ մկնացին ըցբաղվել նաև նախալենային և լոռնային շրջաններում, որի շնորհիվ ավելանում էին նրանց եկամուտները, ամրապնդվում էին տնտեսությունները, և գյուղայինների անսահան բանակն էր հեռանում գյուղերից: Բանի որ այգեգործության համար անհրաժեշտ դեղանյութեր այլևս դրսից չէին ստացվում, անհրաժեշտ էր հանրապետությունում ծավալել այգի-

¹⁹ Տես նույն տեղում, թ. 32:

²⁰ Տես նույն տեղում, թ. 90, գ. 4, գ. 348, թ. 14:

ների մշակման և վնասատուների դեմ պայքարելու համար քիմիական նյութերի արտադրություն: Հայաստանի գործարաններում պատերազմի տարիներին տեղական կարիքները բավարարե-

պետության կողտնտեսություններն ու խորհտնտեսությունները պետությանը հանձնեցին 42,5 հազար տոննա կարտոֆիլ, ավելի քան 1,5 հազար տոննա բանջարեղին: Պատերազմի տարիներին գը-



Լենդլիվով ԽՍՀՄ մատակարարման նրան—ԽՍՀՄ ճանապարհի մի հատվածը. Խճան, 1945

լու համար սկսվեց ծծմբաթթվի, կալցիումի, նիկոտինի սուլֆատի, ֆորմալինի, պղնձարջասափի և այլ նյութերի արտադրությունը: Հետագայում դա մեծ զարգացում ապրեց, և հանրապետությունը թունաքիմիկատներով իր կարիքները բավարարելուց բացի սկսեց նաև դրանք արտահանել:

Պատերազմի տարիներին հանրապետությունում բավական ընդարձակվեց բանջարաբուտանային կուլտուրաների և հատկապնա կարտոֆիլի մշակությունը: Եթե 1940 թ. հանրապետությունում ցանքել էր մոտ 7 հազար հեկտար կարտոֆիլ, ապա 1945 թ. այդ տարածությունները հասան 11,6 հազար հեկտարի²¹: Կարտոֆիլի բարձր բերք էին ստանում Ստեփանավանի, Կալիսինոյի, Սեփանի ավազանի շրջանների կողտնտեսությունները: Միայն 1944 թ. հանրա-

թերեն կրկնապատկվեց բանջարաբուտանային կուլտուրաների ցանքատարածությունը: Այն 1940 թվականի 12 հազար հեկտարից 1945 թվականին հասավ 22 հազար հեկտարի:

Համատարած կողեկտիվացման տարիների անասնաջարդի հետևանքով պակասած անասունների գիւղաբնակը վերականգնված չէր, երբ սկսվեց պատերազմը: Հատկապնա մեծ չափով էր զգացում քաշող ուժի կարիքը: 1941 թ. ձմռանը հանրապետությունում լավ կազմակերպվեց անասունների խնամքը, կատարվեցին պետական պարտավորությունները, և շատ տնտեսություններում զգալի չափով անասնապահական մթերքներ բաշխվեցին: Չնայած 1941 թ. հաջող ձմռացման աշխատանքներին, հաջորդ տարի հանրապետության անասնաբուծությունը բավականին ծանր վիճակի մեջ ընկավ, որի հիմնա-

²¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 30, ց. 37, գ. 97, թ. 6:

կան պատճառն այն էր, որ հայահատիկի և տեխնիկավան կուլտուրաների յանքատարածության ավելացման հետևանքով բավական կրծատվել էր անասնակերի յանքատարածությունը, նվազել արտադրությունը: Բայց այդ, պահանջված էին խորացրած կերերի արտադրությունն ու ներմուծումը: Ըստհանուր առմամբ վատացն էր նաև անասունների խնամքը: Դա բավական դժվար բնագավառ էր, և կանայք ու պատանիները միշտ չէ, որ կարողանում էին հաջողությամբ փոխարինել մասնագետներին: Այդ բոլորի հետևանքով նվազեց անասունների գլխարանակը, մթերատվությունը, և հանրապետությունը չկարողացավ կատարել պետական պարտավորությունները:

Միայն 1943 թվականից հանրապետության անասնապահության վիճակը որոշ չափով բարելավվեց: Հատկապես բարձր ցուցանիշների հասան Ստեփանավանի, Կայինինոյի, Խշեանի, Գորիսի և մի քանի այլ շրջանների անասնապահությունը: Այդ նվաճումների մեջ անգնահատելի էր Լուսու տոհմաբուժական սովորությունը՝ Այստեղ գգալիորեն ավելացավ անասունների գլխարանակը, բարձրացավ մթերատվությունը: Այդ նվաճումների մեջ անգնահատելի էր դարձել: 1944 թ. հունվարին շրջանում կար 16 հազարից ավելի խոշոր եղբարակոր, մոտ 15,5 հազար մասնըր եղբարակոր անասուն և 2000-ից ավելի ձի: Բարելավվեց նաև մյուս շրջանների վիճակը: Պատերազմի տարիներին Ստեփանավանի շրջանի կոլտնտեսություններում խոշոր եղբարակոր անասունների գլխարանակն աճեց 1036-ով, մասն եղբարակորներինը՝ 3600-ով, ամրապնդվեց կերարտադրության բազան: Գլխարանակի ավելացման հետ մեկտեղ ստեփանավանցիներն անընդհատ ավելացնում էին նաև անասունների մթերատվությունը: Բարձր ցուցանիշների հասնելու և պետական կոմիտեի պարտավորությունները միշտ գերակատարելու համար ԽՍՀՄ Ժողովադատության որոշմամբ 1943 թ. Ստեփանավանի շրջանին

հանձնվեց պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ Կարմիր դրոշը և դրամական պարգև: Բարձր ցուցանիշների հասան նաև Ղուկասյանի, Հրազդանի և Խշեանի շրջանները:

1943 թ. հանրապետությունում անասնապահությի լարված աշխատանքի շնորհիվ զյուղատնօնաւորթյան այդ ճյուղը դուրս եկավ ծանր վիճակից և մկան վերելք ապրեն: ԽՍՀՄ Ժողովադատությունը, անդքրադատնարկ 1943 թ. Հայաստանի անասնապահության վիճակին, արձանագրեց: «Հայաստանի կոլտնտեսականներն ընթացիկ տարվա 10 ամսում հասել են անասնապահության զգալի հաջողությունների: Անասունների գլխարանակն ավելացել է՝ խոշոր եղբարակոր անասուններինը՝ 3,5 %-ով, մանրերինը՝ 16,2 %-ով, խոպերինը՝ 103,3 %-ով²²: Որոշման մեջ նշվում էր, որ հանրապետությունը կատարել և գերակատարել է պետական բոլոր պարտավորությունները:

Հանրապետության աշխատավորները 1944 թ. որոշակի նվաճումների հասան անսանապահության բնագավառում: Խորիդային գորքերի հայթական երթը ոգևորել էր բոլորին: Հանրապետությունն զգալիորեն գերակատարեց 1944 թ. համար սուանձնած պարտավորությունները, իսկ Թալինի, Շամշդինի, Ստեփանավանի, Հոկտեմբերյանի, Կամոյի շրջանների աշխատավորները շատ բարձր ցուցանիշների հասան:

Չնայած պատերազմական ծանր պայմաններին և անասնապահության արտադրանքի մթերումների բարձր պըլաններին, որոնք հիմնականում գերակատարվում էին, հանրապետությունում անասունների գլխարանակը տարեցնության ավելանում էր: ԽՍՀՄ վիճվարչության տվյալներով 1941 թ. հունվարի 1-ի համեմատությամբ Հայաստանի կոլտնտեսություններում 1945 թ. հունվարի 1-ին խոշոր եղբարակոր անասունների գլխարանակն աճեց 11,2 հազար գլխով, մասն եղբարակորներինը՝ 19,2 հազարով, ձիներինը՝ 1000-ով²³: Դա անշուշտ մեծ նվաճում էր:

²² Տես նույն տեղում, թ. 22:

²³ Տես նույն տեղում, ց. 33, գ. 1, թ. 12:

Հայրենական պատերազմի տարիներին հանրապետությունում նոր թափ ստոցավ տեխնիկական կուլտուրաների մշակումը: Ծխախոտի, բամբակի, ճակընդեղի մշակումը: Հայրենոր նշանակություն ուներ: Այդ տարիներին ծխախոտի յան-

Ալավերդու շրջանների տնտեսությունները, որոնք զգալիորեն գերազանցարեցին մթերումների պլանները: Խջևանումը բերքատվության բարձրացման հետ մեկտեղ ընդարձակվեցին նաև յանքատարածությունները և համախառն արտա-



Հայաստանի կոլոնտեսականները միջոցներ են հավաքում Պաշտպանության ֆոնդի համար

քատարածություններն ավելացան մոտ 50, և այդ շաքարի ճակնդեհինը՝ 100 %-ով: Որոշ շափով ընդլայնվեցին նաև բամբակի և վուշի յանքատարածությունները: Շաքարի ճակնդեհի արտադրությունը հիմնականում կենտրոնացած էր Ախուրյանի, Սպահանի, Ղուկասավանի, Արթիկի և Ամափայի շրջաններում: 1942 թ. հանրապետության ճակնդեղագործները բարձր բերք ստոցավան և պատվիզ կատարեցին պիտական պարտավորությունները: Անընդհատ ընդլայնելով յանքատարածությունները և բարձրացնելով բերքատվությունը՝ նրանք պատերազմի բոլոր տարիներին ժամկետից շուրջ կատարեցին պիտական մթերումները և մեծ քանակությամբ հումք հանձնեցին պաշտպանության ֆոնդին:

Ծխախոտի արտադրության ավելացումը նույնագի կարեոր էր: Պատերազմի առաջին տարում ծխախոտի բարձր բերք աճեցրին Շամշադինի, Խջևանի,

դրանքի բարձր ցուցանիշներ ձեռք բերվեցին: Ծխախոտի մշակումը գյուղատնտեսության ամենաթույլ մերքնայցված, հիմնականում ձեռքի աշխատանքի վրա հիմնված, բավականին ծանրը և առողջության համար վնասակար ճյուղերից էր, և այդ ծանրությունը հիմնականում ընկած էր կանանց ու դպրոցական երեխաների ուսերին: Պատերազմի տարիներին հանրապետությունում ծխախոտի մշակմամբ սկսեցին վրադվել նաև լիռնային և նախալեռնային շրջանների կոլտնտեսությունները: Եթե 1940 թ. ծխախոտի յանքատարածությունները կազմում էին 5020 հեկտար, ապա 1945 թ. դրանք անցան 8000-ից²⁴:

Հանրապետությունում մշակվող մյուս տեխնիկական կուլտուրան բամբակն էր, որի պահանջմունքը բնակչանաբար շատ էր մեծացնել պատերազմի

²⁴ Տես «Բանբեր Հայաստանի արխիվների», 1961, հ. 1, էջ 197:

տարիներին: Չնայած հայության գանձարածությունների ընդարձակման հետևանքով բամբակի ցանքատարածությունները նույնական որոշ չափով կը քառատվեցին (17 հազար հեկտարից պատերազմի վերջին շրջանում իջև էին 13,5 հազարի), բայց բարձր բերք ստանալու շնորհիվ համախառն արտադրանքը մընաց համարյանույն մակարդակին:

Պատերազմի բոլոր տարիներին հանրապետության կողմանական գյուղացիությունը կատարեց բոլոր պետական պարտավորությունները՝ հայրենիքին հանձննելով 9 մլն. փութ հայութիկ, 4,6 մլն. փութ բամբակ, 6 մլն. փութ շաբարի ճակնդեղ, 1 մլն. փութ ծիխախոտ, 230 հազար փութ բուրդ և այլ մթերքներ²⁵: «Հայրենական պատերազմի տարիներին հանրապետության թիվունքի 365 հազար աշխատողներ իրենց բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվեցին «Կովկասի պաշտպանության համար» և «1941 – 1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով: Դրանց կեսից ավելին գյուղի աշխատավորներ էին:

Հայաստանի բնակչությունը երկրի պաշտպանության ֆոնդին մուծեց մեծ աշխատավորներ դրամ, փոխառության

պարտապոմներ, մթերք և նույնիսկ անձնական զարդեր: Պատերազմի բոլոր տարիներին Հայաստանի բնակչությունն ակտիվ կերպով մասնակցեց այդ ֆոնդի հարատացմանը, պատերազմի տարիներին մուծեց ավելի քան 131 միլիոն ռուբլի: Բայց այդ, երկրում լայն տարածում էր ստացել ռազմաճակատ նվեր-ծանրոցներ ուղարկելը: Պատերազմի տարիներին Հայաստանից ռազմաճակատ ուղարկվեցին 200 հազարից ավելի նվեր-ծանրոցներ, 45 վագոն գյուղատնտեսական մթերքներ և ավելի քան 1300 կտոր տաք հագուստ²⁶:

1942 թ. հանրապետությունում հայրենասիրական նոր շարժում ծավալվեց «Սովետական Հայաստան» ավիամիավորման, «Հայաստանի կողմանական», «Սովետական ուսուցչություն», «Խառնույթի Դավիթ» տանկային շարասյունների ստեղծմանը միջոցներ տրամադրելու համար: Իր խնայողությունների հաշվին հանրապետության բնակչությունը տասնյակ միլիոններ նվիրաբերեց այդ սուրբ գործին:

Հայ ժողովրդի հայրենանվեր աշխատանքն ու ծանր զոհաբերությունների գնով ռազմաճակատին ուղարկված օգնությունը բարձր գնահատվեցին միութենական կառավարության կողմից:

²⁵ Տես ՀՀ ՀԿՊԴԱ, ֆ. 1, ց. 33, գ. 248, թ. 16:

²⁶ Տես նույն տեղում, ֆ. 240, թ. 1, ց. 23:

УЧАСТИЕ АРМЕНИИ В ТЫЛОВОМ ОБЕСПЕЧЕНИИ ФРОНТА

Г. М. ГЕГАМЯН, доктор исторических наук

РЕЗЮМЕ

С первых дней войны в республике были развернуты широкомасштабные работы по перестройке экономики в соответствии с требованиями фронта. Проблема заключалась в том, что до войны вся экономика республики была ориентирована на широкую кооперацию с другими регионами страны. Однако в результате быстрого продвижения войск противника в глубь страны были захвачены огромные территории и находящиеся на них промышленные предприятия либо были демонтированы и эвакуированы на Восток и пока не работали, либо были захвачены врагом; в обоих случаях экономические связи с ними были нарушены. Приходилось экономическую базу создавать на основе экономного использования собственных ресурсов.

К части населения и руководства республики удалось в короткие сроки не только освоить производство новых видов промышленной продукции, но и создать новые отрасли промышленности. В республике получили развитие станкостроение, приборостроение, электромашиностроение, химическое производство, горнодобывающая промышленность и металлургия, резинотехническая промышленность, производство ядохимикатов для сельского хозяйства, легкая и пищевая промышленность. На фронт отправлялись около 300 видов военной продукции, в том числе минометы, самолеты, обмундирование, лекарственные препараты, мясные и овощные консервы.

В результате осуществленных в области сельского хозяйства мероприятий республика, которая до войны получала пшеницу из других районов страны, смогла не только обеспечивать себя хлебом, но и сдавать в фонд обороны зерновые, картофель, сахарную свеклу, традиционные для Армении продукты садоводства и виноградарства (в том числе вина, коньяки, водку), животноводческие продукты, табачные изделия. Несмотря на нехватку рабочих рук существенно расширились посевные площади, в том числе — орошаемые, резко повысилась урожайность, возросло поголовье крупнорогатого и мелкорогатого скота.

На смену ушедшим на фронт пришли женщины, старики и подростки. В республике была создана действенная система подготовки в короткие сроки квалифицированных кадров для промышленности и сельского хозяйства.

Широкое распространение получила инициатива отправки на фронт посылок с теплыми вещами. Население республики, несмотря на свое тяжелое экономическое и морально-психологическое состояние (практически каждая семья испытала горечь утраты близкого и родного), оказывало большую моральную поддержку фронтовикам, призывая их не жалеть жизни для разгрома врага.

На пожертвования населения республики были созданы авиасоединение «Советская Армения», танковые колонны «Колхозник Армении», «Сасунци Давид» («Давид Сасунский») и т. д.

Патриотическая деятельность и помощь населения республики, оказываемая фронту ценой тяжелых жертв, были высоко оценены Правительством страны.

THE PARTICIPATION OF ARMENIA IN LOGISTICAL SUPPORT OF FRONT

G. M. GEGHAMYAN, Doctor of Historical Sciences

SUMMARY

Since the first days of the war large scale of work in the republic was developed on reorganization of economy according to the requirements of front. The basic complexity of the situation was that before war all economy of the republic was focused on wide cooperation with other regions of the country. However as a result of fast advancement of the troops of the enemy towards the interior of the country the huge territories and enterprises existing there were either captured or evacuated to the East and could not work yet or were seized by the enemy and in both cases the economic communications were broken. It became

necessary to create economic base on the basis of economical use of own resources.

To honor of the population and leaders of the republic it became possible in short terms not only to master manufacture of new kinds of industrial production, but also to create new branches of industries. Machine-tool construction, instrument making, electromechanical engineering, chemical manufacture, mining industry and metallurgy, rubber-technical industry, manufacture of toxic chemicals for agriculture, light and food industries began to develop in the republic. about 300 kinds of military production including mortars, airplanes, uniforms, medicinal preparations, meat and vegetable canned food were sent to front.

As a result of carried out measures in the field of agriculture, the republic which before war had been receiving grain from other regions of the country could not only provide itself with it, but also deliver to the fund of defense crops, potatoes, sugar beet, traditional for Armenia products of gardening and viticulture (including wine, cognac, vodka), cattle-breeding products, tobacco. Despite of shortage of operatives the sowing areas essentially extended, including irrigative areas, sharply raised productivity of agricultural products, total stock of cattle and goats and sheep increased.

On change of those who left for front women, old men and teenagers came in manufacture. Effective system of training qualified staff for industry and agriculture was created in the republic in very short terms.

The initiative of sending parcels with warm clothes to front went into wide circulation. The population of the republic, despite of hard economic and moral-psychological condition (from 500 thousand Armenians battling on fronts of the Great Patriotic war 200 thousand were lost and practically each family tested bitter taste of loss of its close relative) displayed great moral support to warriors on front, calling them to not pity life to defeat the enemy.

On donations of the population of the republic there were created air-craft formation «Soviet Armenia», tank columns «Collective-farmer of Armenia», «David of Sasun» etc.

Patriotic activity and support of the population of the republic at the expense of hard sacrifices were highly appreciated by the Government of the country.

ԽՍՀՄ ՌԱՀ-Ի ՀԱՅԱԶԳԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԵԶ

*Ա. Ե. ՄԱՐԳԱՅԱՆ, փոխգնդապետ, Շազմական գիտությունների
ռուսաստանյան ակադեմիայի ակադեմիկոս*

1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը ծանր փորձություն էր ամբողջ խորհրդային ժողովրդի համար: Մինչ այդ չտեսնված մասշտաբների արյունահեղ ճակատամարտներում ու մարտերում որոշվում էր ոչ միայն խորհրդային ժողովուրդների, այլև ամբողջ առաջադիմ մարդկության ճակատագիրը: Խորհրդային Միությունը, նրա վիճակը ուժերը կարողացան հսկայական մարդկային և նյութական կորուստների գնով հաղթել այդ ժամանակվա ամենահզոր ու փորձառու գերմանաֆաշիստական բանուկին՝ նրան գերազանցելով ինչպես և Հնակազմի մարտական ու բարոյական հատկանիշներով, այնպես էլ տեսնիկական վիճակությամբ:

Կարուր է հատկապես շնչուել այն հանգամանքը, որ խորհրդային վիճակը ուժերի հաղթանակը ձեռք բերվեց հիմնականում սեփական վենչի շնորհի, որը մշակվել էր խորհրդային գիտնականների, կոնստրուկտորների, մասնագետների կողմից և արտադրվել էր հատուկ նախանշանակման խորհրդային մեքենաշինական ձեռնարկություններում մեր բանվորների ձեռքով: Անվակած, պատերազմի ժամանակ արդյունաբերության պաշտպանական ճյուղերի փորձը որոշ առումով կարող է օգտակար լինել նաև այսօր:

Նախապատերազմյան տարիներին ու պատերազմի ընթացքում սպառապինության և ռազմական տեխնիկայի (ՈՒՏ) նոր նմուշների մշակման, դրանց սերիական ու զանգվածային արտադրության կազմակերպման, այդ ՈՒՏ-ով խորհրդային բանակի վիճական գործում այլ ազգերի (ռուսներ, հրեաներ, ուկրաինացիներ

և այլն) հետ մեկտեղ մեծ ներդրում ունեցան նաև հայազգի մասնագետները և գիտության ու արտադրության կազմակերպիչները, մի հանգամանք, որը մինչև այսօր տարբեր օրինակով ու սուրյանկությամբ պատճառներով գեր չի ըստացել իր պատշաճ լուսաբանումը գիտական և գիտահանրամատչնի գրականության մեջ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին իրեն անմահ փառքով պատկան «պատերազմի աստված»՝ իրետանին: Հըստանու պարզացումը միշտ էլ հատուկ ուշադրության է արժանացնել, թնդանությունների տեսնձման և պատրաստման գործում ներգրավվել են լավագույն մասնագետներն ու գիտնականները: Հըստանու բնագավառում տարվող աշխատանքները միշտ էլ խթանել են երկրների գիտական ու արդյունաբերական ներուժի վարգացումը, նոր տեսակի տեխնիկայի տեսնձման ու արտադրության գործնարարացները: Իրանությունները մշտապես կատարելագործվել են, կատարելագործվել են նաև դրանց արտադրությունն ու կիրառությունը:

ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության ականավոր կազմակերպիչների ու դիվագարների աստղաբույրում իր առանձնակի տեղը ունի Բ. Ա. Միրզախանովը: Մինչև պատերազմ նրա դիվագարած հմ. 8 գործարանում ստեղծվել ու պատրաստության տարբեր աստիճանների են հասցել 25, 37, 45, 76, 85 և 100 մմ տրամաշափի ավելի քան 50 տիպի տարբեր նախանշանակման հրանորներ ու հիմտանային կայաններ:

Տնտեսական մասնականում գրավվում էր զենի-

թային տեխնիկայի ստեղծմամբ: Պատերազմի տարիներին Սվերդլովսկում այդ գործարանում արտադրվել են 20000-ից ավելի հրանոթ ու կայանք, ինչի համար 1945 թ. գործարանը պարզևատրվել է «Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով»: Ի դեպ, դեռ 1939 թ. հունվարի 17-ին գործարանը «ԲԳԿԲ-ի սպառապինման, սպառապինության նոր նմուշների ստեղծման և բուրացման գործում մաստուցած հակայական ծառայությունների համար» պարգևատրվել էր Լենինի շքանշանով, իսկ գործարանի տնօրին, տաղանդավոր ճարտարագետն և մեծ մասշտարի փայլուն կազմակերպիչ Ի. Ա. Միրզախանովը երկրորդ անգամ պարգևատրվել էր Լենինի շքանշանով: Նըշնք, որ մինչպատճենապյան շքանշում գործարանը թողարկել էր 56 հազ. հրանոթ ու կայանք՝ զգալիորեն ավելի շատ, քան մյուս բոլոր հրետանային գործարանները միասին վերցված (11,3 հազար): 1939 թ. Միրզախանովը նշանակվել է սպառապինության ժողովամատիկ հրետանային արտադրության գլխավոր վարչության պետ, իսկ 1941 թ. մկրներից վարել է այդ բնագավառի ժողովոմի՝ հրետանու գծով տեղակալի պաշտոնը: 1941—1945 թթ. խորհրդային ռազմական արդյունաբերությունն արտադրել է 523,5 հազ. հրանոթ (երեք անգամ ավելի, քան նույն ժամանակահատվածում Գերմանիան): Եվ դա ճարտարագիտական ծառայության գեներալ-մայոր Ի. Ա. Միրզախանովի ծանրակշիռ ներդրումն էր հաղթանակի ձեռքբերման մեջ:

Պատերազմի տարիներին միջին տրամաշաբի դաշտային, հակատանկային և տանկային հրանոթների թողարկումը յուրացրեց Ստոլինի անվան քառակի շքանշանակիր հմ. 92 գործարանը, որի տնօրինն էր Սովորայիստական աշխատանքի հերոս, ստալինյան (պիտական) մրցանակի քառակի դափնելիքը, ճարտարագիտական ծառայության գեներալ-մայոր Ա. Ա. Եռյանը: Մինչև հաղթանակի օրը գործարանը թողարկել է շուրջ 100 հազ. հրանոթ: Արտադրության բարձր մակարդակի կազմա-

կնրապումը, կադրերի խելացի բաշխումը, բոլոր ծառայությունների հատակ աշխատանքը, ամբողջ կողմեկտիվի ստեղծագործական նախաձեռնողականությունը և բարձր գիտակցականությունը դարձան գործարանի ոլիթմիկ և բարձր արտադրողականությամբ գործունեության գլուխականը: Եվ այդ ամենը գործարանի տնօրին, ականավոր ճարտարագետ ու արտադրության հմուտ կազմակերպիչ Ա. Ա. Եռյանի անժխտելի վաստակն է:

Պատերազմի տարիներին թողարկված թնդանոթների թվով (52 հազար հակատանկային, տանկային, դիվիզիոնային և ինքնագնաց թնդանոթներ) երկրորդն էր հմ. 235 ուրացյան հրետանային գործարանը, որի գլխավոր ճարտարագետը, ապա՝ տնօրինը առաջինյան մրցանակի դափնելիքը գեներալ-մայոր Ե. Ա. Ղույանը էր (այդ գործարանում աշխատել է շուրջ 14 տարի): Նրա մասին գործարանի աշխատողները մինչ այսօր ել ջերմությամբ են հիշում՝ բարձր գնահատելով այն ներդրումը, որ այդ համեստ մարդը և ականավոր ճարտարագետն ունեցել է գործարանի աշխատանքների կազմակերպման գործում:

Այդ շքանի կոնստրուկտորներից պետք է հիշել նաև Ն. Ն. Մագդասինին, որը 1920—1930-ական թվականներին գլխավորել է «Բոլշևիկ» գործարանի հրետանային կոնստրուկտորական բյուրոն, իսկ 1939 թ. փոխադրվել է Ստոլինգրադի «Բարիկադներ» գործարանը, որտեղ կարճ ժամկետներում ստեղծվեցին 122-մմ Ա-19, 210-մմ ԲՌ-17 թնդանոթները և 305-մմ հառլերից, կազմակերպվեց 203-մմ Բ-4 հառլերից, 250-մմ ԲՌ-2 հրասանդի և 152-մմ ԲՌ-5 թնդանոթի արտադրությունը:

Աշուարակային հրետանային կայանքների ստեղծման ուղղությամբ հմ. 172 ԿԲ-ում ակտիվ և հաջող աշխատանք է կատարել Լ. Ա. Ալավերդյանը: Մեծ թրվով դաշտային և տանկային թնդանոթների վրա տեղադրված էին առաջին խորհրդային նշանոցները, որոնք ստեղծել էին Բ. Գ. Պողոսյանը և նրա օգնականները: Ի դեպ, նրա կողմից կես դար

առաջ ստեղծված հրանորդային մեխանիկական U-71 Նշանոցների ընտանիքը միշարք մասնագիտացված փոփոխակների ձևով պահպանվել է մինչև այսօր և այժմ էլ համապրում է ոռուսաստանյան հրետանային համակարգերի մեծ մասը։ Ռազմական պատվերների կատարման հատուկ բյուրոյի գիլավոր ճարտարագիտի պաշտոնում այդ ժամանակ աշխատում էր ստալինյան մրցանակի դափնեկիր, տեխնիկական գիտությունների դոկտոր այլոֆենոր Գ. Ա. Շահումյանը։

Հաղթանակի մեջ մեծ ներդրում ունեցած նաև միջին մեքենաշինության ժողովագումատը, որը պատերազմի տարիներին դեկավարում էր Ա. Ա. Ալոպովը։ Մեքենաշինության այս տարրանդավոր կազմակերպիչը մինչ այդ աշխատել է որպես «Ուրալմաշ» գործարանի տնօրին։ Այս ժողովագումատի ձեռնարկությունները ոչ միայն շարունակում էին բողոքներ իրենց հիմնական արտադրանքը, այլև կատարում էին տարբեր տեխնիկայի բողոքման՝ ըստ արտադրության անվանացանվել և մասշտաբների ծավալուն մի ծրագիր։

110,3 հազ. տանկերի և հՀԿ-ների ստեղծման և արտադրության գործում մեծ ներդրում ունեցան նաև տանկային արդյունաբերության ժողովմի տեղակալ և միաժամանակ տանկերի արտադրության նկատմամբ վերահսկողության գրծով ՊՊԿ անդամի տեղակալ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, սուսպինյան մրցանակի դափնեկիր Ա. Ա. Պետրոսյանը, ԱնժԿ-ի բաժնի պետ Մ. Օ. Դավթյանը, տանկային ձեռնարկությունների դեկավար աշխատողներ Ա. Ա. Դադայանը, Ռ. Ա. Թումասյանը և շատ ուրիշներ։ Նշենք նաև, որ 1937 թ. Վիրովի գործարանում (Լենինգրադ) ԿՎ և ԽՄ մակնիշի տանկերի մշակման գրծով ԿԲ-ի ստեղծման գործում մեծ ավանդ ունեցավ նրա տնօրին Մ. Լ. Տեր-Ասասուրովը։

Ինչպես հայտնի է, պատերազմի ընթացքի վրա մեծ ապրենություն է գոր-

ծում վինամթերքով բանակի ապահովածության մակարդակը, այդ վինամթերքի մարտական արդյունավենությունը։ Պատերազմի տարիներին վինամթերքի ժողովմի տեղակալն էր նախակինում հմ. 110 գործարանի տնօրին, արդյունաբերության կարկառուն կազմակերպիչ Ն. Ա. Սարկիսյանը։ Զինամթերք արտադրող մի այլ ձեռնարկության՝ Պավշինի գործարանի տնօրինն էր նույնական մեր հայրենակիցը՝ Ա. Ա. Հարությունովը։

Հրետակրակոցի գծով գլխամասային ԳՀԲ-ի (ԳՀԲ-24) գլխավոր կոնստրուկտոր, ստալինյան մրցանակի դափնեկիր, ՃՏ գեներալ-մայոր Ա. Ն. Ախնազարովի դեկավարությամբ մշակվեց և սպառավիճության մեջ ընդունվեց յամաքային ուժերի, ՈԾՈՒ-ի և ՈՕՈՒ-ի համար նախատեսված 19 տեսակի տարրեր վինամթերք։ 1942 թ. սկսվում նախագոծվեց, թողարկվեց և սպառավիճության մեջ ընդունվեց ԽԱՀՄ-ում առաջին 76-մմ կուտակային արկը։ Կովկասի համար մրված մարտերի ժամանակ այդ արկերն արտադրվում էին Երևանում։

Ախնազարովի արտատրամաշախափային արկերն առաջին անգամ կիրառվեցին Կուրսկի աղեղում։ Պրիխորովիայի մոտ մղված կրիվներում, որտեղ հանդիպակաց մարտին մասնակցեց շուրջ 4,5 հազ. տան։ Գերմանական տանկերի դեմ պարարի համար հիմնականում կիրառվում էին 122-մմ հառորդիցները և հակառակային հրանոթները։ Դրա պատճառն այն է, որ խորհրդային S-34 տանկերն այդ ժամանակ կարող էին հակառակորդին խոցել միայն մինչև 500 մ հեռավորությունների վրա, մինչդեռ գերմանական տանկերի համար այդ թիվը հասնում էր 1500-ի։

Ականանետային կրակոցների ըստեղծման գործում մեծ ներդրում ունեցած ստալինյան մրցանակի դափնեկիր Ա. Օ. Գևորգյանը։ Նրա կողմից մշակված կրակոցների արդյունավետության մասին վկայում է այն փաստը, որ խորհրդագերմանական ռազմականակատում ֆաշիստական Գերմանիան մեծ կորուստ-

ներ կրեց հենայ ականանետային հրաձգությունից: Այդ կորուստները կազմեցին վիրավորների և սպանվածների ընդհանուր թվի մեկ երրորդ մասը, որը հավասար է մոտ 3 մլն. մարդու:

Զգայի շափով շնորհիվ և մետաղուրգիայի ժողովածարտի փայրուն աշխատանքի չնան խափանումներ պինսամթերքով գործող բանակի մատակարարման գործում: «Պատերազմի ծանր պայմաններում բոլոր տեսակի սպառավիճության, տանկերի, ավիայինի և վիճամթերքի համար որակավոր և բարձրորակ մետաղի արտադրության կազմակերպման բընագագառում ունեցած մեծ վաստակի համար» Սովորական աշխատանքի հերոսի կոչման արժանացավ աև մետաղության գործիայի ժողովում Հ. Թ. Թեովանը:

Այս բնագավառում պատերազմի տարիներին կատարված մեծ առաջընթացի ապահովման գործում հական դեռ ունեցած նաև Սովորական մրցանակի դափնեկիրներ աև մետաղուրգիայի ԿԳՀՀ-ի տևորննի տեղակալ Գ. Ի. Գարբինյանը, դրույնու Ս. Ս. Սաֆարյանը, ավագ գիտաշխատող Ա. Է. Ռոտիխյանը, գործարանի տնօրեն Գ. Ա. Աբովյանը, գործարանի տնօրեն Ա. Պ. Ամարյանը, Նորիլսկի կոմբինատի տնօրինն-գլխավոր ճարտարագետ Վ. Վ. Տեր-Պողոսյանը, «Հարանի օկտյաբր» մետաղագործական գործարանի գլխավոր ճարտարագետ Պ. Ա. Մաթևոսյանը և շատ ուրիշներ:

Հայտնի է, որ խորհրդային ՌԾՈՒ-ի ուսպմանավերի մեծ մասը, այդ թվում և սուվանամերը վիճած են եղել տորպեններով: Խորհրդային սուվանավորդների սխրագործություններից հիշատակենք հետևյալները: 1942 թ. հուլիսի 5-ին Կ-21 սուվանավն ստորշրյա դիրքից տորպեդահարել է գերմանական «Տիրպից» գրծանավը, 1945 թ. հունվարի 30-ին U-13 սուվանավը փրաջրյա դիրքից տորպեդահարել է «Վիլհելմ Գուտլուփ» ուսպմատըրանապորտային նավը, իսկ փետրվարի 10-ին U-13-ը խորտակել է մի այլ տրանսպորտ՝ «Գեներալ Շտոյբեն» նավը: «Վիլհելմ Գուտլուփ» հետ պոհվեցին 5196 վիճառայող, իսկ «Գեներալ Շտոյբեն»

հետ՝ 2700 մարդ (փրկվեցին 300 հոգի): Սուաշին կորուստը Գերմանիայի համար այնքան մեծ եղավ, որ երկրում տուգ հայտարարվեց: Այս բոլոր նամերը տորպեդահարել էին U-8-80 անհետք էլեկտրական տորպեններով, որոնք արտադրում էր հմ. 231 գործարանը: Այս գործարանի տնօրին 42 տարի շարունակ եղել է Պ. Ա. Աթոյանը, որը պաշտպանական արդյունաբերության մեջ ընդհանուր առմամբ աշխատել է 62 տարի:

Խորհրդային ուսպմական հիդրոձայնագիտության «հայր» արդարացիորեն համարվում է Ստալինյան մրցանակի կրկնակի դափնեկիր Զ. Ն. Ումիկովը, իսկ ծովային գործիքաշինության «հայր»՝ Ստալինյան մրցանակի դափնեկիր Ա. Է. Ասովյանը:

Սուաշին խորհրդային «Գեներալիստ» սուվանակի նախագծի վերջնամշակման ուղղությամբ ԳՀՓԿԱ-ի ղեկավարն էր փորձառու սուվանավորդ Ա. Ն. Գարսուլը:

ՈԾՈՒ-ի համար առաջին ՌԾԿ-ների մշակման գործում մեծ ներդրում ունեցավ Գիշավոր կոնսուլտատոր, Սովորական մրցանակի կրկնակի դափնեկիր Ա. Վ. Բալայանը, իսկ նավակարական ապարատուրայի ատեղծման գործում՝ նույն մըրցանակի դափնեկիր Վ. Բ. Կուտյանը:

Պատերազմի տարիներին ծնունդ առավ գիտության և տեխնիկայի գործնականություն նոր մի ճյուղ՝ ուսդիտեղորոշումը: ՌԾԿ-ների հիմնական մշակողներն աշխատում էին էլեկտրապարույտնաբերության ժողովածարտի համակարգում: ՌԾԿ-ների մշակման և դրա համար ինստիտուտների ստեղծման հետ կապված բոլոր հարցերը Սովորական հանձնարարությունը կարգավորում և վերահսկում էր այդ բնագավառի ժողովում տեղակալ Վ. Ա. Ուկանյանը: Նրա անմիջական մասնակցությամբ ստեղծվեց ԳՀԻ-20 հիմնարկը, որից հետագայում անշատվեցին 6 հիմնարկներ, որոնք մեծ ներդրում ունեցան Մոսկվայի ՀՕՊ-ի զենիթահրթիռային համակարգի ստեղծման գործում, մի համակարգ, որն իր մեջ ներառում էր U-25 համակարգեր, օրյեկտային ԶՀ համալիրներ, հակահրթիռային

պաշտպանության U-35 և U-135 համակարգեր և այլն: 1942 թ. ստեղծված ԳՀԻ-20 հիմնարկը 8 ամսվա ընթացքում, Ա. Մ. Ղազարյանի և Վ. Ի. Եղիազարովի ակտիվ մասնակցությամբ, մշակեց հրանոթային ուղղորդման ՍՕՆ-2ա կայանների առաջին նմուշները, իսկ 1943 թ. ձեռնամում եղավ դրանց սերիական թողարկմանը:

Եթե շրջափակման օդակը փակվեց Լենինգրադի շուրջը, Ն. Ի. Օհանովն իր մի խումբ ընկերների հետ, գործելով շատ ծանր պայմաններում, ստեղծեցին մի նոր գաղտնի զենք, որն արդյունավետ կերպով օգնեց Լենինգրադի պաշտպաններին կազմակերպելու քաղաքի ՀՕՊ-ը գերմանական պվիացիայի հարձակումներից, ընդսմին ՀՕՊ-ի համակարգում կիրառվեց հեռուստատեսությունը: Ոչ գերմանացիները, ոչ խորհրդային երկրի դաշնակիցները այդ ժամանակ մտածել անգամ չէին կարող այդ մասին, իսկ պաշարված Լենինգրադում ստեղծված ռադիոտեղորոշումային-հեռուստատեսային կայանքը եղավ աշխարհում առաջին արագագործ պատումատ համակարգը, որը ռադիոտեղորոշիչներից ստացված տեղեկություն արտապատկերում էր հրամանատարական կետերում տեղադրված էլերաններին: Լենինյան մրցանակի դափնեկիր Օհանովը ռադիոտեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի և ռադիոտեղորոշման բնագավառում իր առաջին քայլերն արեց այն ժամանակ, եթե դրանք դեռ նոր էին անում իրենց առաջին մանկական քայլերը:

Ռադիոտեխնիկայի համամիտութենական ԳՀԻ-ում Է. Մ. Մանուկյանի ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին ինքնաթօնների առաջին ռադիոտեղորոշիչները՝ «Գնեյս-2Մ», «Գնեյս-5Մ» և այլն:

Էլեկտրամեխանիկայի նահապետ, Սովորված աշխատանքի հերոս և ԽՍՀՄ պետական մրցանակների կրկնակի դափնեկիր ակադեմիկոս Ա. Գ. Խոսիֆյանը, գլխավորելով իր իսկ ստեղծած ԷՄՀԳՀ-ն, ապահովեց այնպիսի արտադրանքի մշակումն ու թողարկումն

ամենանկարձ ժամկետներում, որն արդյունաբերությունը երբեք չէր արտադրել՝ կրակային ուղղորդմամբ ռադարներ, ուղղողինամու և այնպիսի հաճախականային մոդուլացմամբ ռադիոկայաններ, որի դնաքում հակառակորդը չի կարող դրանք ռադիոդիքորոշել, ինչպես նաև եռաֆազ էլեկտրաշարժիչներ, սակայն համակարգած աղբյուրներ, բարդ էլեկտրաէներգիկական ագրեգատներ, այդ թվում՝ շարժական էլեկտրակայաններ: Լենինգրադի պաշտպանության թանգարանում պահպում են երկպատուն շարժիչներով օժտված հատուկ ծովային տորպեդների նմուշներ՝ թողարկված այդ գործարաններում: Խոսիֆյանի դեկադարած խնայիտուտ-գործարանը դարձավ պարտիզանների համար ռազմական տեխնիկայի հուսալի արտադրող ու մատակարար: Դրանք տարբեր պայմանավոր մեքենաներ էին, հատուկ մագնիսական ականներ, ականափառ տորիչներ ու պայթույիչներ, ակնթարթային և դանդաղ գործողության հնարակերտ բոցավառիչներ, քուղային բռնկիչներ, այրվող խեժներ, թերմիտային կազմություններ և այլ սարքեր ու նյութեր:

Եթեն նայենք պատերազմի տարիներին այդ գործարաններում թողարկված արտադրանքի ամեննեին էլ ոչ լինիվ այս ցանկին, ապա կարելի է ապշել, թե ինչ հրաշք են գործել խնայիտուտ-գործարանի աշխատակիցները, որոնց չեն անվանի այլ կերպ, քան առասպելական մարդիկ, որոնց դեկադարած էր գլխավոր առասպել-մարդը՝ Ա. Գ. Խոսիֆյանը:

Պատերազմի տարիներին ավիացիոն արդյունաբերության ծովով մասնակի պաշտոններ էին վարում Վիկորյանը, Վ. Պ. Ֆարմանյանը, իսկ ՀԿ(Բ)Կ Կենտկոմում շարժիչների (ավիաշնության ամենանեղ տեղի) բաժնի վարիչն էր Գ. Ս. Գրիգորյանը:

Խորհրդային ավիացիայի և հրթիռային տեխնիկայի ստեղծման գործում մեծ ներդրում ունեցան այնպիսի հայազգի գիտականներ ու կոնսուլտուուրներ, ձեռնարկությունների ու կազմակերպությունների դեկադարաներ, ինչ-

պես Գ. Մ. Մուսինյանը, Ա. Ն. Ռաֆայէլյանը, Ն. Գ. Նորդովը, Ի. Ի. և Ե. Ի. Պողոսակիները, Վ. Կ. Թափրովը, Ս. Ա. Էլիքիլյանը, Ա. Ա. Թափրիկովը, Գ. Ն. Նազարովը, Ա. Ա. Ուկանովը, Ե. Ա. Շախաբուկին, Ա. Ի. Միկոյանը, Կ. Ն. Մկրտչյանը, Ռ. Գ. Զաշիկյանը, Ս. Ա. Ենգիբարյանը, Մ. Կահիաշյանը, Ս. Ի. Արագածովյանը, Ա. Տ. Տերզյանը և այլ ականավոր գործիչներ: Ավելացնեն ու հրթիռային շարժիչների ըստեղծման բնագավառում հաջորդարյանք աշխատել են Տ. Մ. Մելքոնովը, Վ. Ռ. Խաչատրյանը, Ա. Ի. Հակոբյանը, Լ. Բ. Եվանդուլովը, Ա. Ա. Սարգսյանը, Ի. Ա. Դանիելյանը, Ռ. Ա. Կինոպայանը և ուրիշներ:

Երկրաբաշխության, աերոդրուսանը-
կարչության և քարտեզագրության բնա-
գավառում հետապոտությունների խոցո-
րագոյն կենտրոնը՝ ԵԱԲԳԳՀ-ն, 1940—
1971 թթ. ղեկավարել է Ա. Շ. Տարեկյանը:

Պատերազմի կեսերին երկրութ ալքս-
վեսին աշխատանքներ ատոմային գենքի
ստեղծման ուղղությամբ: Լ. Պ. Քերիային
ուղղված իր գրության մեջ խորհրդային
ատոմային ծրագրի գիտական դեկավար
ի. Վ. Կուրչատովը նշում է. «Մի դեկավա-
րության տակ այժմ աշխատում են ուս-
ներ, վրայիններ (սա անկասկած տուրք է
քաղաքավարությանը՝ նկատի ունենա-
լով այդ ծրագրի դեկավարի՝ Քերիայի
ազգությունը, ինչպես նաև որոշ չափով
Ստուդիոնին հաճոյանալու ձգտում, քանի
որ ամբողջ ատոմային արդյունաբերու-
թյունում աշխատում էին ընդամենը մի
քանի վրայի — Ա. Ա), իրեաներ, հայեր,
ուկրաինացիներ, թաթարներ, շատ ու-
րիշներ, որոնցից ոմանք նույիսիկ հա-
վատում են Աստծուն, բայց նրանք բո-
լորն եւ աշխատում են անձնուրաց, նը-
պատակամոված կերպով։ Ինչպես երե-
վում է այս թվարկումից, հայազգի գիտ-
ականներն ու կոնստրուկտորները
բացարձակ թոփ այլ ազգերի մեջ եր-
րորդ տեղում էին, ինչը հաստատվում է
և մեր արած մոտավոր հաշվարկներով¹:

Հեմատոլոգիայի (արյունաբանության) և արյան փոխներարկման կենտրոնական ինստիտուտի տնօրին ստավինյան մրցանակի կրկնակի դափնենկիր Ա. Ա. Բաղդասարովը մշակեց արյան չոր պլազմայի և չոր շիճուկի ստացման եղանակը, որը լայն կիրառություն ստացավ բժշկական պրակտիկայում, հատկապես ուսպանակատային բուժիչիմնարկներում: Ստավինյան մրցանակի դափնենկիր Ռ. Բ. Դավիթովը մշակեց արյան պլազմայի երկարատև պահման եղանակ:

1943 թ.մի հունվր գիտնականներ, որոնց ղեկավարում էր ստավինյան մըրցանակի դափնեկիր Ռ. Լ. Կնույնանցը, ստեղծեց մի նոր թժկական դեղամիջոց: Այժմ կարելի է հրապարակավ ասել, որ դա կապտաթթվի հակաթույնն էր, որի սումանները գումարում էին տուպարանչուու

¹Հոդվածում նշված անձանց մի զգայի մասի և նաև առողջութեան մասին մամեռառական

ակնարկներ կարելի է գտնել *A. E. Саркисян*, Армияне—военные ученые, конструкторы, производственники и испытатели XX века. Е., 1998, т. 1 գրքում, հաջորդ համարը պատրաստ է հրատապության:

Խորհրդային վիճակորի ուսապարկում:

Ավարտելով այս շատ համառու թըր-վարկումը և անզամ չշոշափելով գիտության ու արդյունաբերության այնպիսի ծյուղեր, ինչպիսիք են քիմիական, ռեսի-նատեխնիկական, օպտիկական, նավ-

թահանման, նավթամշակման և այլ բնագավառներ, նշենք, որ այստեղից պարզ երևում է այն ծանրակշիռ և տպավորիչ ներդրումը, որ մեծ հաղթանակի նվաճման գործում ունեցան ԽՍՀՄ ՌԱՀ-ի հայագիտագիտական մասնագետները:

ВКЛАД АРМЯН-СПЕЦИАЛИСТОВ ВПК СССР В ВЕЛИКУЮ ПОБЕДУ

А. Е. САРКИСЯН, подполковник, академик Российской академии военных наук

РЕЗЮМЕ

Свой весомый вклад в повышение обороноспособности СССР и победу Советского народа над фашизмом внесли и те армяне, чья научная, конструкторская, производственная деятельность была связана с ВПК. И если имена таких выдающихся организаторов производства, ученых и конструкторов, нарком черной металлургии И. Ф. Тевосян, нарком среднего машиностроения С. А. Акопов, заместители наркомов: вооружения по артиллерии И. А. Мирзаханов, электропромышленности В. А. Восканян, танковой промышленности А. М. Петросянц, боеприпасов Н. А. Саркисов, начальник-инженер Норильского комбината В. В. Тер-Погосов, руководители крупнейших артиллерийских заводов А. С. Елян, Е. А. Гульянц, начальник Военно-медицинской академии Л. А. Орбели, академик А. Г. Иосифян, профессоры А. А. Багдасарян, Г. А. Шаумян, Д. И. Габриелян, М. М. Сафьян, А. Л. Ротинян, конструкторы А. И. Микоян, С. А. Элибекян, В. К. Таиров, Н. Г. Нуров, широко известны всей стране, то имена многих других в силу специфики их деятельности были строго засекречены. А среди них были родоначальники советской военной гидроакустики З. Н. Умиков и морского приборостроения А. Э. Атовмян, главный конструктор первых судовых РЛС А. К. Балаян, создатели: аппаратуры судовождения В. В. Кнуниянц, бесследных электрических торпед САЭТ-80 П. А. Атоян (руководитель предприятия), первой в мире радиолокационно-телевизионной установки Оганов, ученые, конструкторы, двигателисты, прочнисты в области авиастроительства и ракетной техники Г. М. Мусинянц, А. Н. Рафаэлянц, И. И. и Е. И. Погосские, Г. Н. Назаров, Р. Г. Чачикян, А. А. Енгибарян, Т. М. Мелькумов, С. И. Акопян, К. Р. Хачатуров, Е. А. Шахатуни, М. М. Качкачян, П. К. Казанджян, В. Х. Абианц, Л. Б. Еванголов, А. А. Саркисян, И. С. Даниелянц, Р. С. Киносян, и многие другие. Почти все они удостоились Сталинской премии (а многие стали дважды, трижды и даже четырежды лауреатами), среди них не мало и Героев Социалистического труда.

В этот далеко не полный перечень армян – специалистов ВПК не включены те ученые, конструкторы и производственники, деятельность которых относилась к таким сферам науки и производства, как химическая, нефтяная, резинотехническая, оптическая и другие, а также получившей развитие уже в первые послевоенные годы ядерной промышленности.

THE CONTRIBUTION OF THE ARMENIAN EXPERTS
OF MILITARY-INDUSTRIAL COMPLEX OF THE USSR
IN GREAT VICTORY

A. E. SARKISYAN, Lieutenant-Colonel, Academician of the Russian Academy of Military Sciences

SUMMARY

Powerful contribution to increase of defensive capacity of the USSR and victory of the Soviet people over fascism was also brought by those Armenians, whose scientific, design, industrial activities were connected with Military Industrial Complex (MIC). And if names of such outstanding organizers of manufacture, scientists and designers, national commissar (minister) of black metallurgy I. F. Tevosyan, national commissar of average mechanical engineering S. A. Akopov, deputies of national commissar: arms of artillery I. A. Mirzakhanov, of electroindustry V. A. Voskanyan, of tank industry A. M. Petrosyants, of ammunition N. A. Sarkisov, chief engineer of Norilsk group of enterprises V. V. Ter-Petrossov, chiefs of the largest artillery factories A. S. Elyan, E. A. Gulyants, chief of military-medical academy L. A. Orbely, academician A. G. Iosifyan, professors A. A. Bagdasaryan, G. A. Shaumyan, D. I. Gabrielyan, M. M. Saffyan, A. L. Rotinyan, designers A. I. Mickoyan, S. A. Elibekyan, V. K. Tairov, N. G. Nurov, are widely known all over the country, those names of many others by virtue of specificity of their activity were strictly secret. Among them there were ancestors of Soviet military hydroacoustics Z. N. Umikov and sea instrument making industry A. E. Atovmyan, main designer of the first ship radar installations A. K. Balayan, founders of the navigation apparatus V. V. Knunyants, traceless electrical torpedoes SAET-80 P. A. Atoyan (chief of the enterprise), first in the world of radar-television installation Oganov, scientists, designers, engineers, specialist in the field of durability of equipment used in air-craft building and rocket engineering G. M. Musinyants, A. N. Rafaelyants, brothers I. I. and E. I. Pogisski, G. N. Nazarov, R. G. Chichikyan, A. A. Engibaryan, T. M. Melkumov, S. I. Akopyan, K. R. Khachaturov, E. A. Shahatuni, M. M. Kachkachyan, P. K. Kazandjyan, V. Kh. Abiants, L. B. Evangulov, A. A. Sarkisyan, I. S. Danielyants, R. S. Kinosyan, and many others. Almost all of them were awarded with Stalin bonus (and most of them became winners twice, three times and even four times), and there were many Heroes of Socialist labour among them.

In this not complete list of Armenian experts of MIC those scientists, designers, industrialists are not included whose activity concerns to such spheres of science and manufacture as chemical, oil, rubber-technical optical and other industries as well as nuclear industry having been developed already in the first post-war years.

ՍՊԱՅԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՄ. ԿԱՌԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ՄՊԱՅԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ. ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Փիլիստիայական
գիտությունների թեկնածու, դոցենտ

12. ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԲԱՐՈՅԱՔԱՂԱԶԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ. ՄՊԱՅԱԿԱԶՄԻ ՍԵՐՄԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի պատմության մեջ երկրորդ աշխարհամարտը բացառիկ տեղ է գրավում ոչ միայն իր մասշտաբներով և մարդկությանը պատճառած վնասներով, այլև այն հարուստ փորձով, որի վերլուծությանը բազմահատոր գրականություն է նվիրվել: Խոսքը ոչ միայն տարբեր հայեցակետերից ներկայացվող իրադարձությունների օբյեկտիվ տարեգրության, այլև այդ առթիվ արված սուրյեկտիվ դատողությունների ու եղակացությունների մասին է:

Մարդկությունը մինչ այդ գործ չէր ունեցել նման մի պատմական փորձի հետ, որի դաշտում բախվեին այնպիսի բազմազան ֆիզիկական և հոգևոր վիճակարի ուժեր, ինչպիսին դրսերվեցին այդ աշխարհամարտում: Կարևոր է նաև այն փաստը, որ առաջին անգամ որպես պատերազմի դրդիչ ուժ, առնվազն ձևականորեն, հանդես էր գալիս աշխարհը վերափոխելու և նոր կարգ հաստատելու գաղափարը: Ընդամեն, այստեղ էական չէ այն հանգամանքը, թե այդ գաղափարը ճշմարիտ է, թե կեղծ: Կարևորն այն է, որ այդպիսի խնդիր չկար առաջին աշխարհամարտում:

Նոր կարգ կոչվածն ընդգրկում էր ինչպես աշխատանքը և տնտեսական հարաբերությունները, ժողովուրդ - պետություն համագործակցությունը, այնպես էլ այդ համատեքստում անձի իրավունքների և պարտականությունների խնդիրը և, իհարկե, տարբեր ազգերի

փոխհարաբերությունները: Պատերազմի մեջ ներքաշված հակամարտ կողմերից յուրաքանչյուրը (Գերմանիան և ԽՍՀՄ-ը) սեփական մարդկային ուսոււրաների գորահավաքումը իրականացնում էր՝ նոր կարգի իր ըմբռնումը դրոշ դարձրած, այլ կերպ ասած՝ պատերազմը կրում էր գաղափարաքաղաքանացած բնույթը: Առաջին անգամ իրապարակ հանվեց «Ժողովուրդը դարձել է բանակ» արտահայտությունը, և, բնականաբար, նոր ձևով մեկնաբանվեցին արժանապատվություն, պարտքի զգացում, հեղինակություն, անձի պաշտամունք հասկացությունները: Մարդն օտարվեց իր էությունից և ինչ-որ չափով դարձավ գործիք քաղաքական ուժերի ձեռքին: Քաղաքական այս իրողությունը չէր կարող իր հետքը չփողմել բանակի վրա:

Նախապատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ում իշխող բարոյահոգեբանական անկայուն վիճակում, որն առաջացել էր դասակարգային պայքարի անխուսափելի սրման մասին ստալինյան դրույթի հոչակման հետևանքով, համատարած կասկածանքի մթնոլորտ էր ստեղծվել ժողովրդի բոլոր խավերի մեջ: Այդ հանգամանքը ճակատագրական նշանակություն ունեցավ հատկապես բանակի հրամանատարական կազմի համար: Քաղաքական բռնադատումներն ահ ու սարսափի պատճառ էին դարձել բոլորի համար: Մարդիկ կորցրել էին իրերն ու երկույթներն սթափ գնահատելու կարողությունը և իրենց դատողություններում դեկավարվում էին աղավաղված արժեքներով ու չափանիշներով: Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու մար-

շալ ժուկովը 1937 թ. պանզամածային ձերբակալություններն առաջին հերթին համարում է հակաքնական և ապա՝ անհիմն: Ահա թե ինչպիսի պիտակներ էին փակցում հայտնի գորավարներին. Գ. Շատրովը, կուսակցության 18-րդ համագումարի ամբիոնից խոսելով, տեղին էր համարում «Տուխաչևսկիների, Գամառնիկների, Ռիբորնիչների և նրանց նման մի խումբ սրիկաների ոչնչացումը»: Մինչդեռ տարիների հեռավորությունից մարզալ ժուկովն այլ կերպ է գնահատում այդ քաղաքականությունը. «Զերբակալվել էին աշխի ընկնող վիճականներ, ինչը, բնականաբար, չէր կարող շանդրադառնալ մեր վիճած ուժերի զարգացման ու նրանց մարտունակության վրա»¹:

Հիրավի գնդակահարվել էին բարձրագույն վիճական դիմավարությունից շատերը՝ հինգ մարշալներից երեքը, առաջին կարգի բոլոր 5 կոմանդարմները և 2-րդ կարգի բոլոր 12 կոմանդարմները: Գեներալ-լեյտենանտ Պավելներն հավատում է, որ բռնադատումներն ըսկրավել են դեռևս 1937 թվականից շատ առաջ. փաստորն դրանց հիմքը դրվել է 1930 թ. կուլակաթափության հետ միաժամանակ: 1937 – 1938 թթ. գնդակահարվեց մոտավորապես քառասուն հազար սպա: Ստալինյան բռնադատումներն առավել ծանր ավերածությունների պատճառ դարձան հատկապես հրամանատարական կազմի բարձրագույն և ավագ օրդիներում (կադրերի ավելի քան վաքսուն տոկոսը): Չորս գնաց գնդերի հրամանատարների կեսից ավելին²:

Նույն հեղինակի հավաստմամբ բռնադատումների պատճառով համապատասխան կատրերի բացակայության պայմաններում շատ դիվիզիաների հրամանատարներ էին նշանակվել մայորի կամ նույնիսկ կապիտանի կոչում ունեցող վիճականներ, իսկ երբեմն էլ գնդերի հրամանատարներ էին դարձել լեյտենանտները:

¹ Գ. Վ. Ժուկով. Հիշողություններ և խորհրդածություններ: Ե., 1978, էջ 200:

² Տես «Московские новости», 7 мая 1998 г.

1938 թ. հունվարից զգալիորեն ուժնդացավ բանակում «ժողովրդի թշնամիների» դեմ պայքարը: Այդ գործընթացում հատկապես աշքի էր ընկում բանակի քաղաքարչության այն դեկավարությունը, որը գլխավորում էր Լ. Զ. Մայիսի: Դեռևս 1937 թ. մայիսի 10-ին նորից կյանքի էր կոչվել բանակում վիճակության կոմիսարների հաստատությունը, որի վրա էր դրված վիճառայողի ինչպես քաղաքական, այնպես էլ բարոյահոգեանական դաստիարակությունը: Սակայն «Ստալինը և նրա մերձավոր ջրապատը, ստեղծելով վիճական կոմիսարների հաստատությունը, ձգտում էին հանձին նրանց ուննարող Կարմիր բանակի ու նավատորմի հրամանատարական կազմի «գլխավոր մաքրավրտման» իրենց մտահղացած պլանի հուսալի կատարողներ»: Այսպես է գնահատում այդ ծառայության դերը ռազմական պատմաբան Օ. Ֆ. Սուվենիրովը³:

1938 թ. ապրիլին հրավիրված քաղաքատողների համապորային խորհրդակցությունում բանակի քաղաքարչության պետ Մելիքիար պահանջում էր վերջ տալ այն վիճակին, երբ շատ քաղաքիատողներ իրենց գգում են պարզապես հրամանատարի քաղաքական գծով օգնականի դերում: Նա գտնում էր, որ կոմիսարը, լինելով, Ստալինի խոսրով, «կուսակցության ու պետության աշխը ու ականջը», ավելի պատասխանատու դեր ունի: Մելիքիար կոմիսարներին առաջադրանք էր տալիս բոլոր քաղաքական և հրամանատարական աշխատողներին, այդ թվում նաև իրենց անմիջական հրամանատարներին ստուգելու ու նրանց մասին դատել իրենց գործերով: Իսկ նույն ամսի 17-ին հատուկ հրահանգով, որի վրա դրված էր «Միանգամայն գաղտնի» գրիքը, պարտավորեցնում էր օկրուգների քաղաքարչության պետերին, միավորումների, զորամասերի և ուսումնական հաստատությունների կոմիսարներին տարին երկու անգամ տարբեր կարգի

³ Տես Ю. Р. Рубцов. Вдохновитель «генеральной чистки» в армии. «Военно-исторический журнал», 1999, № 5.

հրամանատարների մանրամասն բնութագրեր ներկայացնել Մոսկվա, ըստ որում, խիստ գաղտնիությունը պահպանելու նպատակով՝ բնութագրերը գրել ձեռքով, այդ մասին նույնիսկ անմիջական պիտի տեղյակ չպահելով. «Բարդարական բնութագրերը դիվիզիաների, բրիգադների ու կորպուսների կոմիսարների կողմից ներկայացվում են անմիջականորեն Քաղաքարչություն՝ հասցեագրքի ված անձամբ ինձ՝ առանց օկրուց ներկայացնելու»⁴, մատնանշված էր այդ հրամանգում:

Երկրում իշխող համատարած կասկածամության մթնոլորտում Մելիքիսիայս իրահանգը կիսագրագետ քաղլումիսարների ձեռքին հրամանատարներին վարկարենկերու յուրահատուկ զենք դարձավ: Օրինակ՝ 11-րդ հեծելազորային դիվիզիայի կոմիսար Կուլակովը Սոտալինին ուղղված իր նամակում վեկուցում էր, որ միայն 1937 թ. հունիս—օգոստոս ամիսներին ինքը օկրուզի ոսպմական խորհուրդ էր հանձնել «դիվիզիայի զորամասերի քաղաքանական անքարենույա հրամանատարական կազմի մասին» 40 ներկայացում: Այսուհետև նա հպարտությամբ նշում էր, որ իր մատնանշած անձանց մի զգայի մասն արդեն կալանավորված է ՆԳԺԿ մարմինների կողմից⁵:

Ամենապավեշտականն այն էր, որ նույնիսկ այդպիսի մոլեռանդ անձինք հետագայում իրենց զոհերի ճակատագրին էին արժանանում՝ մեղադրվելով տառապյորեն նույն հանցանքում. Կուլակովը հետագայում պաշտոնապրկվեց գնդի կոմիսարությունից (որին հասել էր մեծ ջանքերի գնուվ), «ժողովրդի թշնամիներին մերկացնելու միջոցառումներին դեմ գնալու մեղադրանքով»⁶:

Այդպիսին էր նախապատերազմյան բարոյահոգեբանական այն մթնոլորտը, որը մեծ վնասներ հասցրեց հատկապես փորձառու հրամանատարական կազմին: Արդյունքում կադրերի սով ստեղծ-

վեց: Միայն 1938 թ. քաղաջնատողներից 3176 հոգի հեռացվել էին աշխատանքից՝ կամ բանտարկվելով, կամ էլ պարզապես կորացրվելով: Հատկապես անքարենույս տարրեր էին համարվում ոչ ոռու՝ լին, գերմանացի, չին և այլ ազգի մասնագետները: Բանակում նույն պատկերն էր, ինչ ամբողջ երկրում, սակայն բռնադատումները բանակում վիճակույողների գիտակցության մեջ ավելի սուր արձագանք էին գտնում, քանի որ առաջին հարվածը հասցվում էր հրամանատարական կազմին, ուստի և խարիսրվում էր վիճակական կարգապահությունը: Վայսի մթնոլորտն ունեցավ նաև մեկ այլ շատ յավալի հետևանքը. հրամանատարը որպես կանոն գգուշանում էր սեփական նախաձեռնությամբ որևէ քայլ անելուց: Այս ամենի ծանր հետևանքներն ի հայտ եկան հատկապես Ֆինլանդիայի դեմ մղված պատերազմում, որը դառը, քայլ կարենոր փորձություն էր Խորհրդային Միության համար: Այդ պատերազմից հետո բռնադատումների ալիքը փոքր-ինչ մարեց: Այնուամենայնիվ բռնադատումները շարունակվում էին նաև հետագայում. 1938 թ. սեպտեմբերից մինչև 1941 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում զոհերի թիվն ավելի քան կրկնապատկվել էր:

Սուայնյան բռնադատումների գոհ դարձան նաև հայազգի բազմաթիվ սպաներ, այդ թվում և զորավարներ: 1937 թ. զոհվեցին 12-րդ բանակի հրամանատար Գասպար Ռոկանյանը, երկաթյա դիվիզիայի հրամանատար լեգինդար Գայը (Հայկ Բժշկյանց), 1-ին կարգի բանակային կոմիսար Հայկ Հովսեփյանը, 2-րդ կարգի բանակային կոմիսար Օնիկ Սահակյանը, քաղաքացիական կոիվների հերոս կոմկոր Գրիգոր Խախանյանը, որը, ի դեպ, ԽՍՀՄ Կենտոգործկոմի անդամ էր, իսկ կուսակցության 17-րդ համագումարում ընտրվել էր վերահսկի հանձնաժողովի անդամ և դիկայարում էր նրա ուսպմական բաժինը: Բռնությունների դարձան Հայաստանի Կարմիր բանակի քաղաքացիներ պետ Հովսեփ Լազյանը, Անդրեկովյան վիճական օկ-

⁴ Տես նույն տեղում:

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես նույն տեղում:

բուգի Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարը Հ. Աթոյանը և շատ ուրիշ երեսնի սպաներ: Թուրքմենական հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մելքոնովը, որի նախաձեռնած հարձակման ժամանակ նրա վիճակուներըն սպանել էին հայ ժողովրդի դափիճ Էնվիր Փաշային, 1937 թ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան ավարտելուց հետո Միջին Ասիայի վիճական օկրուգի հրամանատարի տեղակալ ծառայելու ժամանակ անհիմն մեղադրանքով ձերբակալվել էր՝ այնուհետև շուրջ 15 տարի կյանքը մաշելով անպատության մեջ:

Մեր օրերում հայտնվել են գրողներ, որոնք փորձում են արդարացնել ստալինյան բռնադատումները: Վիլսոր Սուվորովի «Մաքրավոտում» գրքի մի հատվածը, որ հրապարակվել է «Նեզավիսի: Ե վիճնոյից օրովրենին» լրագրում, ունի այսպիսի բնութագրական ենթավերնագիր. «Խնչո՞ւ Սուալինը գլխատեն իր բանակը»⁷: Հեղինակը անթաքույց հիացմունք է խոտում Սուալինի «հեռատեսության» մասին՝ նրա կադրային քաղաքանությունը (այս դեպքում խոսքը սպայակապիմ գլխատման մասին է) համարելով Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության հաղթանակի կարևոր նախապայմաններից մեկը: Նա որպես հիմք ընդունում է Գերմանիայի քաղաքական իշխանության 2-րդ դեմքի՝ Գերենի օրագրային գրառումները, որ լույս են տեսել վերջերս: Սովորվով նշում է, որ այդ օրագրում կա 1945 թ. մարտի 16-ի թվագրությամբ մի այսպիսի գրառում. «Գլխավոր շտաբը ինձ է տրամադրել խորհրդային գեներալների ու մարշալների կենսագրական տվյալներով ու դիմանկարներով մի գիրք: Այդ գրքից դժվար չէ տարբեր տեղեկություններ քաղել այն մասին, թե ինչ սխալներ ենք մենք թույլ տվել անյաջ տարիներին: Այդ մարշալներն ու գեներալները, միջին հաշվով, տակավին երիտասարդ են, նրանցից գրեթե ոչ ոք 50 տարեկանից մեծ չէ: Նրանք արտակարգ եռան-

դուն մարդիկ են, իսկ նրանց դեմքերից կարելի է կրահել, որ նրանք բուն ժողովրդական խմորից են... Կարծ ասած, ես ստիպված եմ ինձ համար տիհած եպրակացության հանգել, որ խորհրդային բանակի դեկավարությունը ավելի լավ՝ ժողովրդական խավերից է, քան մեր սեփականը: Օրագրի հեղինակը, Հիտլերին ներկայացնելով իշշալ գրքի բովանդակությունը, նաև հայտնելով իր տպագրությունը, որ իրենք ի վիճակի չեն մրցակցելու այդպիսի վիճակական դեկավարների հետ, գրել է. «Ֆյուրերը լրիվ համամիտ էր ինձ հետ: Մեր գեներալիտետը շափականց ծերացած է, բապառել է իրեն»: Գերենը գտնում էր, որ բարձրաստիճան վիճականների նըկատմամբ Հիտլերը ավելի խիստ պետք է վարվեր:

Վ. Սուվորովը, եներլով Գերենի այս դիտողությունից, անում է հետևյալ անտրամարանական և, որ ավելի էական է, անմարդկային եպրակացությունը. «Եթե Կարմիր բանակում իրականում կար քառասուն հազար գեներալ, ապա նրանց պետք էր անխնա կերպով ոչնչացնել, քանի որ շափականց շատ են»⁸:

ՈՒշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ այստեղ խոսքը ոչնչացման և ոչ թե պահեստ ուղարկելու կամ պարզապես պաշտոնաթող անելու մասին է, այլ կերպ ասած, այստեղ գործ ունենք քաղաքական ահաբեկչության արդարացման հետ. փաստորեն Սուալինի վիճական կադրային քաղաքականության շուրջ ծավալված նորօրյա վիճաբանությունները այն ցրաժանն են, որի տարբեր ափերում են հայտնվում ժողովրդավարության և բռնակալության պաշտոնական ուժերը: Ի վերջո շոշափվում է այն հարցը, թե Ռուսաստանը և մյուս նախկին խորհրդային հանրապետությունները ինչ ուղղով են առաջ ընթանալու և քարոյական ինչ արժեքները են որդեգրելու:

⁷ Տույն տեսդրում: Վ. Սուվորովի այս հայպրենի մանրամասն բռնադատությունը տևել է. Լ. Յօջովիչ. Բыл ли Сталин гениальным стратегом? «Независимое военное обозрение», 1998, № 33.

13. ՍՊԱՅԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ՊԱՏՐԱՍՏԱՎԱՆ ԴՐՎԱՑՔԸ

1932 – 1940 թվականները հանդիսանում են սպայական անձնակազմի ռազմական կրթության խորհրդային համակարգի ձեւավորման մեջ կարևոր փուլ:

Երկրի տաջն ծառապատճեն նոր խորհրդների լուծման համար այդ շրջանում հիմնադրվում են վիճակական ակադեմիաներ և ուսումնական այլ հաստատություններ:

Հարկ է նշել, որ այդ տարիներին հայրենական ռազմական գիտությունը բնկում ապրեց: Հանդես եկան այնախի խոշոր տեսարաններ, ինչպիսին էին Ֆրունզեն, Տուխաչևսկին, Բյուխերը, Շապոշնիկովը, Եգորովը, Տրիանդաֆիլովը և ուրիշներ: Ֆրունզեն առաջ քաշեց միասնական ռազմական դոկտրին ստեղծելու անհրաժեշտությունը, որը հետագայում իր զարգացումը գտավ Ավեշչինի աշխատություններում, Շապոշնիկովի «Բանակի ուղեղը» աշխատության մեջ համակողմանիրեն ներկայացված էին գլխավոր շտաբի դերը, ինչպես նաև ռազմավարության կարևոր դրույթներ:

Վերոհիշյալ զորավարներից շատերը դասավանդում էին Մոսկվաի բարձրագույն հրամանատարական կազմի կատարելազորման դասընթացներում և այլ վիճական ուսումնական հաստատություններում:

Վերակազմվում և ընդլայնվում էին նախմինում ստեղծված ակադեմիաները: Նրանց առջև խնդիր էր դրվում ավելացնելու իրենց ավանդը զենքի ու ռազմական տեխնիկայի ստեղծման գործում և, իհարկե, կադրերի գիտամանկավարժական պատրաստման մեջ: Հարկ է նշել, որ արդեն 1937 – 1938 թթ. բանակը դարձել էր համատարած գրագետ: Մշակութային-լուսավորական աշխատանքի համար նրան հատկացվում էր տարեկան ավելի քան 200 միլիոն ռուբլի: 75 վիճական ուսումնարաններում և դպրոցներում ընդգրկված էին առնընդապն 7-ամյա կրթություն ունեցող երիտասարդներ: Անընդհատ կատարելազորձվում էր ուսումնական գործներաց: Տեսական առարկաներին զուգըն-

թաց մեծ ուշադրություն էր նվիրվում գործնական պարապմունքներին և հատկապես տեխնիկային տիրապետություն և այն կիրառելու հմտության զարգացմանը: Մեծ ուշադրություն էր նվիրվում նոր զորատեսակների և վիճական ուժների նոր տեսակների համար կադրերի պատրաստմանը: Այդ առումով հատուկ դեր ուներ բանակի Գլխավոր շտաբի ակադեմիան: Առանցքային առարկաները բարձր զորամիավորումների մարտավարությունը և օպերատիվ արվեստն էին: Կարևոր տեղ էր տրվում զորամիավորումների կազմակերպման ու մորիլիզացման հարցերի, ինչպես նաև ռազմական էլեկտրոմիկայի ուսումնասիրությանը:

1938 թ. ռազմական օլորուզներում կազմակերպվում են կադրերի պատրաստման 6-ամյա դասընթացներ: Հաջորդ տարվա ընթացքում այդ դասընթացները տվեսին շուրջ 9000 շրջանավարտներ կրտսեր քաղաքացիոնների տեղակայի կոչումով: Սակայն 1940 թ. բանակի քաղաքացիությունը ստիպված էր արձանագրել, որ այդ դասընթացները չեն ապահովում համապատասխան մակարդակ, ուստի ուսման ժամկետը կը դրկնապակվեց՝ հասցենով մեկ տարվա:

Բանակում քաղաքացիության անձնակազմը, որ կոչված էր ապահովելու անհրաժեշտ բարոյակերպանական մըթնորորտ և անձնակազմի համապատասխան դաստիարակություն, երկրում իշխող անբարենպաստ պայմաններում ի վիճակի չէր այդ գործը առողջ հիմքերի վրա դներու: Անառողջ մթնոլորտի արդյունքները զիր երես դուրս եկան հատկապես ֆինանսական ռազմական կամպանիայի ժամանակ: Եվ 1940 թ. օգոստոսի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով վիճական կոմիսարների հաստատությունը վերացվեց: Պաշտպանության նոր ժողովում մարշալ Ս. Կ. Շիմոշենկոն 1940 թ. գաղափարական աշխատանքին նվիրված ծառայողական խորհրդակցությունում խիստ քննադատության ենթարկեց ստեղծված իրավիճակը՝ մասնավորապես ցույց տալով հրամանատարա-

կան կազմի պատրաստման գործում տեղ գտած պարզունակ մոտեցումը: Եա առաջադրեց հրամանատարական միջավայրում պատվի ու արժանապատվության դաստիարակության խնդիրը նոր հիմքերի վրա դնել՝ լծակ դարձնելով ինքնուրույնությունը, կազմակերպվածությունը և պահանջկությունը:

1937 թ. վինվորական դպրոցները վերակառուցվեցին և վերածվեցին վինվորական միջնակարգ ուսումնարաններ՝ ուսման 2–3 տարի տևողությամբ: 1939–1940 թթ. ձևավորվեցին տասնյակ նոր ուսումնարաններ, այդ թվում՝ բանակը և նավատորմը տեխնիկական նոր մասնագիտությունների կադրերով համարելու նպատակով: Թաղաքայինական բուհերում դասավանդող վինվորական մասնագիտների վերապատրաստման գործը ևս նոր հիմքերի վրա դրվեց:

1940 թ. ավարտին բանակի և նավատորմի համար սպայական կադրեր էին պատրաստում 19 ուսումնական ակադեմիաներ, ինչպես նաև քաղաքայինական բուհերի 10 վինվորական ֆակուլտետներ:

ՈՒշագրավ է այն փաստը, որ բարձր պաշտոններ էին վրահենում այնպիսի անձինք, որոնք շատ ժամանակ չանցած մեղադրվելու էին և ույնիսկ անքարոյական արարքների մեջ: 1942 թ. փետրվարի 19-ին կուսակցության քաղբյուրոյի որոշմամբ Գ. Ի. Կուլիկը վարդում է կուսակցության Կենտկոմի կազմից և ապատում պաշտպանության ժողովում տեղակալի վրահենուած պաշտոնից, իսկ այսուհետև վրկում Խորհրդային Սիության մարշակի և հերոսի կոչումներից: 1942 թ. վարդուրությունը կողմանից պահպանության ժողովում առաջարկում է կուսակցության պատճենահանությունը՝ իշխանության մինչև շարքային վինվորի աստիճանը: Թաղյուրոյի որոշման մեջ նշշվում էր, որ Կուլիկը ուսումնականում գտնվելու ժամանակաշրջանում «ախտեմատիկաբար հարբեցողությամբ» է տարվել, վարել է անբարյական ապրելակերպ, չարաշահելով Խորհրդային Սիության մարշակի և պաշտպանության ժողովում տեղակալի կոչումն ու պաշտոնը՝ վրադիմել է ինքնամատակարարմամբ ու պետական ունեցածքի կողոպուտով,

պետական միջոցներից վատնելով 100 հազարավոր ոռությիներ»⁹: Եվ այս ամենը ասված է պատերազմական ժամանակի գործիք մասին:

Վերոհիշյալն անմիջականորեն առնչվում է հայ ժողովրդի ճակատագրի հետ, քանի որ 1941 թ. նոյեմբերի 15-ին Կերշ քաղաքը և նրա շրջակայրը գերմանացիներին հանձնելու պահին բազմաթիվ հայ վինվորներ են տոհնացել անկազմակերպ նահանջի ժամանակ՝ նաև խնդրվելով ծովածոցում: Ահա թե ինչպիսի զորահրամանատարի է հանձնված եղանակը մեր ժողովրդի կավակների ճակատագրիը: Արժեն նշել, որ ժողովուրդը հենց այդ օրերին ողբի երգ էր իրաւության պատճենը իր կավակների անտեղի կորուսը: Դա պատերազմի մեջ եկամի այն դրվագներից է, երբ ոչ թե մարտակոչի երգեր էին երգում, ինչպես սովորաբար լինում էր նույնիսկ ծանր օրերին, այլ՝ ողբի երգեր:

Խորհրդային Սիության իսկական ծանր օրերը վրա հասան Կերշի անկումով, Խարկովի մոտ կրած պարտությամբ ու Անաստոպոլի կորուսատով, երբ գերմանական բանակը գրոհի անցավ Ստալինգրադի վրա և ներխուժեց Կովկաս: Այդ դժվարին պահին փորձ էր արվում պատերազմի երկրորդ տարվա անհաջորդությունները պատճառաբանել դաշնակիցների կողմից արևմուտքում երկրորդ ճակատի բայցման ձգձգումով: Ասիթ էր ստեղծվել Խորհրդային Սիությունը ներկայացնելու որպես միակ երկիրը, որն իր վրա է վերցրել քաղաքակրթությունը կործանումից փրկողի գերը, մի ծանր բնու, որից խուսափում էին և վրապական երկրները և ԱՄՆ-ը: Այդ թեմայի տարիքումը շափական կարևոր էր համարվում մարտնչող ժողովրդի ոգին բարձրացնելու առումով՝ նրան վերագրելով ընդհանրապես մարդասիրական արժեքների փրկարարի առաքելություն: Խոսվում էր ոչ միայն ուսական, այլև համաշխարհային մշակույթի փրկության մասին: Այդ միտքը հիմնավորելու

⁹Տես «Военно-исторический журнал», 1999, № 4, с. 92.

համար որոշակի հիմք կար. թշնամին ոմքակոծում էր Լենինգրադի մեծարժեք թանգարանները:

Ժողովրդի բարոյահոգեբանական պահվածքը բարձրացնելու մեջ մեծ տեղ էր հատկացվում թատերական ներկայացումներին և դասական երաժշտության համերգներին: Ձենամու արկերի տարափի տակ Լենինգրադում Շռատակովիչի 7-րդ սիմֆոնիայի կատարումն ընկալվեց որպես ժողովրդի անդրդիմի կամքի դրսնորում: Օտարերկրացիների վկայությամբ նույն օրներին Զայկովսկու «Ռոմեն և Չուլին» ֆանտազիայի կատարման ժամանակ ունկնդիրներից շատերն արտապահում էին: Այս ձևով արվեստը ծառայեցվում էր ժողովրդի ոգու ամրացմանը: Նույնիսկ հրապարակախոսության ասպարեզում արվեստագետները հանդիս էին զայս իրեն առաջամարտիկներ, քանզի կարևորվում էին խոսքի պատկերավոր ու զգացմունքային տեսքը ու լիցը: Իրադրությունը պահանջում էր խոսքը անմիջականորեն հասցնել շարքային քաղաքացու և վիճակի ոչ այնքան մտքին, որքան արտին: Ընդհանրապես տրամարանական ֆաստարկումը երկրորդ պլան էր մղված:

Բարովզության, ինչպես նաև գրականության մեջ ավանդական հայրենասիրությանը զուգընյաց ի հայտ էր ներկա թշնամու նկատմամբ ատելության թեման՝ քրիստոնյա ժողովրդի էությանը և մանավանդ Տուստոյ ու Դոստուսկի ունեցող հասարակությանը անհարիր մի երնույթ: Ժամանակակիցների վկայությամբ այդ ատելությունն ահազնանալով վերածվում էր իսկական կատաղության: «Ապանին գերմանացուն» կոչը Ռուսաստանում դարձել էր բոլոր տաք պատվիրանների միհածույլ արտահայտությունը, այդ օրերին գրում էր անգլիական լրագրող ու պատմաբան Ա. Վերտը: Եվ իսկապես, հայրենիքի փրկության համար ամենուրեք կատաղի պայքար էր ընթանում: Ամբողջ Եվրոպան նվաճած Գերմանիան առաջին անգամ էր հանդիպում այսպիսի անձնագործ դիմադրության:

Ձշնամու հավաքական բացասական կերպարի ստեղծման հույժ կարևոր գործին իրենց մասնակցությունն էին բերում հանրահայտ արվեստագետներ՝ Մ. Շոլյանովից սկսած մինչեւ ի. Էրենբուրգը: Այսպիսով իրական պատերազմական գործողությունները լիբրավորվում էին զուգահեռ տարվող բարոյահոգեբանական պայքարով: 1942 թ. ամռանը հրապարակվեց Շոլյանովի «Ատելության դասը» պատմվածքը, որը ուղենչեց հետագայում ծավալված ատելության բարովզությունը: Սակայն այդ թեմայի զարգացման մեջ առաջնության դափնինսամել պատկանում է Էրենբուրգին, որն «այն օրինասական շարաթներին, անշուշտ, հանճարի ընդունակություն դրանորեն՝ գերմանացիների նկատմամբ ողջ Ռուսաստանի տածած ատելությունը կծու և ոգեշունչ արձակի լիպվով արտահայտելու գործում»¹⁰: Նրա հոդվածները կարդում էին բոլորը՝ զինվորից մինչեւ հրամանատարը: Իսկ թըշնամու թիկունքում գործող պարտիզանները Էրենբուրգի մի քանի հոդվածի համար տայս էին յանկացած զին, նույնիսկ ատրճանակ կամ գնդացիր: Ընդհանրապես հրապարակախոսի գրիշը այդ օրերին պակաս հատու չէր, քան սվինը, և մարդկանց բարոյահոգեբանական հոգեվիճակը բարձրացնելու մեջ անգնահատեկի էր նրա դերը: «Կարենի է ամենն ինչ տանել՝ ժանտախտ, սով, մահ: Զի կարենի տանել գերմանացիներին: Զի կարենի տանել այդ ձկան աչքեր ունեցող ապուշներին, որոնք արհամարհանքով փոքրում են ոռուսական ամեն ինչի վրա...Մենք կյանք չենք ունենա, քանի դեռ կենդանի են այդ մոխրականաշ սոլունները»¹¹: Այսպիսի կոպիտ արտահայտություններով է բնութագրված մի ամբողջ ժողովուրդ, և այն համահունչ էր խորհրդային հասարակ մարդկանց ըգացմունքներին:

Այդպիսի ատելության ստեղծման մեջ իր շափարաժինն ուներ գերմանա-

¹⁰ Ա. Վերտ, Ռուսները 1941—1945 թվականների պատերազմում: Ե., 1969, էջ 377:

¹¹ Նույն տեղում, էջ 379:

կան քաղաքականությունը: Ռայխի քարոզչական մեքնան արմատավորում էր «քերմարդկանց» և հատկապես ոռւսների նկատմամբ ընդգծված արհամարհական ուսայական վերաբերությունը: «Երկրորդ կարգի» ազգերին վերապահվում էր սովոր ֆիվիկական, ատրկական աշխատանք, ուստի օլորապայգած շրջաններից ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց պանդվածաբար տեղափոխում էին Գերմանիայի խորքը: Բոնի տեղահանումը և հարկադիր աշխատանքը բնականաբար ծնունդ էին թշնամու նկատմամբ անսահման ատելություն:

1942 թ. ամռանը Ղրիմի գրավումից հետո Ռուսական բարեգործությունը կատարվում էր ներկայացրել Ղրիմը վերանվանելու, «Գոթեանդ»՝ ինմը ընդունելով այն վարկածը, թե իբր դեռևս 16-րդ դարում այն բնակեցված է եղել գոթերով: Նա միաժամանակ փորձում էր հիմնավորել այն միտքը, թե Կիևը ժամանակին եղել է «վարյացների» պետության կենտրոնը: Ըստ Ռուսական բարեգործությունը կատարվում էր բացատրվում ուկրաինացիների ընդգծված «նորդական դիմագիծը»: Այս երերուն հիմքի վրա փորձ էր արկում սեպական բարեկանությունը և ուկրաինացիների միջև: Գերմանական քարոզչության մեքնան կոչ էր անում հաղթահարելու բոլշևիկյան-հրեական հեղափոխության հետևանքները Ռուսականացում՝ այդ երկրի բնակիչներին խոստանալով պազային պետություն Լվովից մինչև Սարատով ընկած ընդարձակ տարածքով:

Այս պայմաններում նպաստավոր հողատենդվեց, որպեսզի Արևմտյան Ռուսականացում խորհրդային համակարգից դժգոհ տարբերից ձևավորվի վլաստվան «ազատագրական բանակը»: Խորհրդային բանակի գններալ Վլասովը գերի էր ընկել գերմանացիներին 1942 թվականին, Վոլխովից արևմտաք ընկած տարածքում ոռուսական մի զորամիավորման շրջափակման ժամանակ: Գերմանիան սկզբնական շրջանում այդ կազմավորված ուժերը օգտագործում էր միայն թիկունքում: Խակ 1943 թվականից «ազատագրական բանակը» գործի դրվեց:

պարտիզանական երկրամասներում՝ յուրայինների դեմ պայքարում: Գերմանական գեներալ, ուսպմական պատմաբան Վ. Տիանեկիրխի վկայությամբ, վլաստվան «ազատագրական բանակի» բարոյական ոգին, նրա հուապիտթյան աստիճանը մեծապես կախված էր ուսպմաճակատային իրավիճակից: քանի դեռ Գերմանիան հաղթանակներ էր տանում, ազատագրական պայքարը հուսալի էր: Խակ երբ սկսվեցին նրա անհաջողությունները, և դա տեղի ունեցավ հատկապես 1943 թ. ամռանը, վլաստվականների օգտագործումն արևելքում անհուսալի գործ համարվեց: Ուստի փորձ արվեց այդ ուժերը տեղափոխելու Արևմտյան ուսպմաճակատ: Բայց շատ շուտով պարզվեց, որ նրանք հոգեբանորնեն այնտեղ այլևս անելիք չունեն: Գեներալ Տիանեկիրխը գտնում է, որ միայն այդ ժամանակ, այսինքն՝ շատ ուշացումով, գերմանական քարոզչությունն սկսեց խոսել այն «ոռուսական մարդու» մասին, որին հարկ էր գրավել իրենց կողմը: Սակայն այլևս հնարավոր չէր արևելքի մարդուն ոգնորել և նրան օգտագործել ի նպաստ Գերմանիայի:

Օր գերմանական քարոզչությունը փորձում էր խորհրդային բազմազգ ախտության ժողովուրդներին տարանջատելու միջոցով նրանց միջև թշնամություն սերմանելու ավելի նույր քաղաքականության անցնել, այդ մասին վկայում է Ռուսական բանակը «Բեռլին - Թրիխիսի առանցքի» տեսությունը, ըստ որի հարկ էր Կովկասում ատենդեն մուտուլմանական զորամասեր: Դրանք Շուրիքիայի համար որպես խայծ էին ծառայելու՝ նորան պատերազմի մեջ ներքաշնելու նպատակով: Այդ ուժերը դիտվում էին Սիցին Արևելքը Գերմանիայի տիրապետության ուրաք դարձնելու հեռանկարում: Հայտնի է, որ Հիսլերը որոշակի թերահավատությամբ է վերաբերվել այդ ծրագրին: Նա 1942 թ. դեկտեմբերին հետևյալ կերպ է արտահայտվել այդ մասին: «Զիտեմ, թե ինչպես իրենց կազակները: Նրանք թուրքական ժողովուրդների բվին չեն պատկանում: Ես

միայն մուսուլմաններին եմ վստահենի համարում: Իսկ այդ գույտ կովկասյան գումարտակների կազմակերպումը համարում եմ շափականց վտանգավոր գործ, միայն մուսուլմանական գորամասեր ստեղծելու մեջ ոչ մի վտանգ չեմ տեսնում... Շայած Ռուբենքերգի և վիճակականների հավաստիացումներին, հայերին նույնպիս չեմ հավատում¹²:

Գ. Նժդեհի նամակը, որը ժամանակին ուղղված է ենթական կառավագանության, նույնպիս հաստատում է, որ Հյուլերն իրոք հիմքեր չուներ հայերին հավատալու: Նժդեհի համար ինքնին համեստացի է, որ «գերմանական հրամանաւարությունը թուրքիային հաճոյանալու համար այս անգամ էլ կարող է նրան մղել նոր կոտորածների»: Նրան ծանօթ էր նաև Հյուլերի «Կանաչ գրքի» բովանդակությունը, որտեղ խոսվում էր գերմանացիների հանդեպ հայերի ատելության մասին¹³:

Այս դիտարկումները մեզ՝ հայերիս համար կարենոր են հասկանալու համար այն հանգամանքը, թե ինչոր հայերը ավելի մեծ եռանդով էին կովում պատերազմի դաշտում: Հայրենական մեծ պատերազմում հայերի գործուն մասնակցությունը, հարևան ազգերի համեմատ նրանց սուցաբերած անօրինակ հերոսությունը պայմանավորված էին վերահաս նոր կոտորածի առաջն առնելու բնադրական մղումով: Ահա թե ինչոր հեռավոր ափերում Գերմանիայի դեմ մղդվող պատերազմը հայ ժողովուրդը նաև իրենն էր համարում: Իսկ հայ մտավորականության որոշ ներկայացուցիչներ արտասահմանում, իհմք ընդունելով նաև որոշակի տեղեկույթ, բնականաբար պետք է սեփական ժողովուրդի փրկության միջոցներ որոնենի:

Նժդեհը նշում է, որ այդ օրերին Գերմանիայում ծայր էր առել հայերի իր ոչ արիական ծագման մասին քառորդություն, և սկսվել էին հալածանք-

ներ: Այսպիսով՝ սիյուռքահայ որոշ մտավորականների դիվանագիտական ջանքերով ոչ միայն փրկվեցին շատ ռազմագերիներ, այլև Հայաստանը շրջանցեց այն վտանգը, որ կախված էր նրա գրինին, և շարժանացավ կովկասյան շորս ժողովուրդների ճակատագրին, որոնք 1944 թ. բռնի տեղահանվեցին արևելք:

Զախորովեցին նաև հայ ռազմագերիներին պարտիվանների դեմ ուղիղերու գերմանացիների ջանքերը: Ամենափոքր հնարավորության դեպքում հայ ռազմագերիներն անցնում էին պարտիվանների կողմը, ինչպիս դա պատահեց Ժիտոմիրի մարզում, երբ 248 հայորդիներ վենքը ձեռքին անցան Ս. Նաումովի հրամանատարությամբ գործող պարտիվանների շարքերը:

Ստալինգրադան ճակատամարտը ոչ միայն կանխնց հայերի նոր ցեղասպանության վտանգը, այլև վճռական նշանակություն ունեցած ամբողջ պատերազմի համար. մինչ այդ էլ օտարեներին պարմանում էր ոռուների դիմադրության ոգին:

ՄՄ-ի նախագահի անձնական ներկայուցիչ Ռ. Ռիխեին 1942 թ. սեպտեմբերին Խորհրդային Միություն այցելու նախօրյակին Ռուբենցի կողմից նախագուշացակել էր, որ նա «կարող է Ռուսաստան հասնել նրա փրուզման պահին»: Սակայն, տեղ հասնելով, նա ակտատես է ենթակառակ պատկերին՝ ամենուրեք տեսնելով անձնապոհության գնով հայրենիքը պաշտպանելու մարդկանց ոգու դրսուրումը: Անգինայի վարչապետ Զերչիլը, որն իր արտահայտությունների մեջ շատ շափակող էր, նույնպիս, այդ սույն օրերին Սովորվայում լինելով, չեր կարողացել թարցնել իր պարմանքը ու հիացմունքը «ուսւ սքանչելի վիճակուրդի» սիրանքի առթիվ: Հատկապես իրենց դիմադրության ոգով աշքի էին ընկնում գվարդիական վորամիավորումները: Սովորվածի ճակատամարտում գեներալ Ժելուկի գվարդիական դիվիզիայի մասին այդ օրերին մամուլը գրում էր. «Դա իսկապես որ գվարդիա էր: Բոլորը երիտասարդներ՝ բարձրահասակ, ամրակազմ, շատերի հագին դեսանտա-

¹² Ա. Վերստ, նշ. աշխ., էջ 536:

¹³ 1941—1944 թթ. Նժդեհի գործունեության մասին հանգամանորեն տես Վ. Ա. Մուրադյան, Գարեգին Նժդեհը և հայկական հարց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: «ՀՅ», 1998, հիմ. 4:

յինի համապգեստ էր... Ավինով հարվածելիս հիւլերականներին շպրտում էին իրենց ուսի վրայով, ասևս հարդի պարկ... Շրջապատման մեջ ընկնելով՝ կովում էին մինչև վերջին ուժերը և մեռնում բայսկանչելով՝ «Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի»¹⁴: Ի՞չ էր սա՝ պարզաբն մողեռանդություն, թե՝ «իմացյալ մահի» ընտրություն: Գրող սպա, հետագայում հայտնի այլախոհ Վիկտոր Նելրասովը, որը, բանակի մաքրաստումների ժամանակ կորցնելով իր բարեկամներից շատերին, չէր սիրում Ստալինին, խոստովանել է, որ ինքը ևս զինվորներին մարտի էր տանում այդ կոչով. Ժողովուրդը բնապղով զգում էր, որ Ստալինը, պողպատյա ներվերի տեր մարդ լինելով, հարկավոր է երկրին այդ ամենաածանը պահին: Ժողովուրդը վստահում էր նըրան, որ չէր լրել մայրաքաղաքը և մնացել էր Ժողովրդի հետ:

Վերադասի հանդեպ պատկառանքը և հատկապն մարտի դաշտում նրան կյանքի գնով ծառայելու պատրաստակամությունը պատերազմական իրադրության մեջ հոգեբանական փրկարար գործոն հանդիսացան: Հրամանատարի կյանքի համար վինվորի անձնապոհության շատ օրինակներ են արձանագրվել: Այդպիսի արարք դրսերեց նաև Արամայիս Սարգսյանը 1944 թ. հունիսին Արևմտյան Դվինայի գետանցման ժամանակ գետափին ամրանալով՝ նա կարողացել էր հետ մղել թշնամու ձեռնարկած երկու հակագրունները՝ իր գնդապրային հաշվարկով: Սակայն վերջին գրոհի ժամանակ, անհավասար մարտում ճիշտ կողմնորոշվելով, Արամայիսն իր կյանքի գնով փրկել էր հրամանատարին՝ պահովելով մարտի հետագա հաջող ընթացքը: Նրա սիրանքը մեկ ամիս էլ չանցած բարձր գնահատվեց. Արամայիս Սարգսյանը 1944 թ. հուլիսի 22-ին արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման:

Հայրենական պատերազմի սկզբից և ներ սպայական կադրերի պատրաստման համակարգն սկսեց վերակառուցվել՝ պատերազմական ժամանակի պա-

հանջների հաշվառմամբ. 1941 – 1942 թթ. կրծատվում են կադրերի ուսուցման ժամկետները, ստեղծվում են արագայգած ուսուցման պլաններ, բացվում են լրացուցիչ 200 կարճաժամկետ դասընթացներ: 1942 թ. վերջում սպայական համալրումներով բանակի պահանջմունքները կարելի էր լրիվ բավարարված համարել: 1943 թ. հիմնադրվում են սուվորովյան և նախիմովյան ուսումնարաններ, որոնք իրենց բնույթով համապատասխանում էին երբեմնի կադետական կորպուսներին:

Այսպիսով՝ պատերազմական ժամանակաշրջանում խորհրդային բանակը նոր որակ էր ձեռք բերել: Նորաստեղծ վինվորական ուսումնական բարձրագույն և միջնակարգ հաստատություններում բացվել էին նոր մասնագիտական դասընթացներ, որոնք պահովում էին նոր տեխնիկայի բնույթին համահունչ վինվորական մասնագետների պատրաստումը: Պատերազմի ավարտին երկրում առկա էր թարմացված հրամանատարական անձնակազմ, որը պատերազմը ավարտին էր հասցընել՝ տեսական ու փորձնական նոր մակարդակ դրսերենով: Եվ չնայած այն բանին, որ ստալինյան բռնադատումների հետևանքով հրամանատարական կազմը մեծ կորուստներ էր տվել, այդուհանդերձ երկիրը կարծ ժամանակահատվածում հասցընել էր ուժերը համախմբելով ստեղծել բարձրորակ սպայական անձնակազմ և մարտունակ բանակ:

Դեռևս 1940 թ. խորհրդային բանակում մտցվել էր գեներալի կոչում, բայց ուսադիրների հարց դեռևս չկար: Ստալինգրադի հաղթանակից հետո լուծվեցին ոչ միայն համապատասխան ուսադիրների, այլև շրեղ արտահագուստի հարցերը. դրանք նոր տեսք ու շուրջ էին հաղորդում հաղթանակած բանակի հրամանատարական կազմին: Դա ևս մի կարևոր քայլ էր հասարակության մեջ սպայակազմի արժանապատիկ կարգավիճակը և ապահովելու ուղղությամբ: Հաղթանակած բանակը հասարակությանը ներկայանում էր իրեն արժանի տեսքով:

¹⁴ Ա. Վերսա, նշ. աշխ., էջ 416:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՄԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ ՊՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏՈՒՄ**

**Գ. Ն. ԿՈՇՎԱՐՅԱՆ, փոխգնդապետ, տեխնիկական
գիտությունների թեկնածու, դոցենտ**

Ժամանակակից պահանջներին համապատասխանող ապայական կադրերի պատրաստման գործում, հատկապես բազմադրություն ու ապահանություն ու առավել քան կարևոր է ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կողմերն ինտիմների ճիշտ և արդյունավետ լուծումը: Այս բանը խորապես գիտակցում են ՀՀ ՊՆ ուսումնական ինստիտուտի ղեկավարությունն ու դասախոսական անձնակազմը: Ստեղծման օրվանից ինստիտուտի առջև դրվել են ուսումնադաստիարակչական և գիտամեթոդական նշանակություն ունեցող բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում է հաշվի առնել ինչպես հանրապետության առջև կանգնած սույնապահանական ու ուսումնակարգման պրոբլեմները, այնպես էլ կրթական համակարգում ներկայումս գործող միջազգային չափանիշները:

Նորաստեղծ ինստիտուտի կայացման խնդիրների լուծման ժամանակ հավելյալ բարդություն էր այն, որ, լինելով հանրապետության առաջին բարձրագույն ուսումնական հաստատություններ, նա իր տեսակի մեջ միակը էր նաև հետխորհրդային տարածությունում, քանի որ գործող ուսումնական ուսումնական հաստատություններն ունեին մեկ կամ երկու հարակից ուսումնագիտական ուղղություն:

Եթե նախկին ԽՍՀՄ-ում առկա բարձրագույն կրթության կենտրոնացված համակարգի պայմաններում ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, դասագրքերը և այլն կազմվում և հաստատվում էին կենտրոնում համապատասխան գերատեսչությունների կողմից, ապա կենտրոնը վերանարույ հետո ոչ միայն վերացավ նշված համակարգը,

այլև պլանայինից շուկայական համակարգի անցման շրջանին հատուկ խընդիրների լուծման նպատակով գործի դրվեցին ուսուցման այնպիսի մեթոդներ ու տեխնոլոգիաներ, որոնք, չունենալով որևէ հիմնավորում, արտերկրում կիրառվող և մեր իրավանության հետ ոչ մի կապ չունեցող, իսկ հաճախ հավուր պատշաճի լուծումներ էին:

Նման անորոշություննը, հատկապես բարձրագույն կրթության համակարգում, երկարատև պահպանվել չէր կարող:

1999 թ. ապրիլին Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ կրթության մասին» օրենքը, փաստորեն ընդգրկելով նախադպրոցականից մինչև հետքուհական կրթական ողջ համակարգը, հատակեցրեց կրթության բնագավառում պիտական քաղաքականություննը, նրա ըսկրպունքները, ներկայացրեց միջազգային կրթական բազմատիճան համակարգին ինտեգրման պահանջները, ինչպես նաև որոշեց ուսումնական պլանների, ծրագրերի ու կրթության բովանդակության խնդիրները:


Ենելով հիշյալ օրենքից, հաշվի առնելով հանրապետության ունեցած աշխարհադարձական դիրքից բխող և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ինստիտուտի առջև դրված մարտական առաջադրանքների արդյունավետ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև ժամանակակից որակյալ սպայական կադրեր պատրաստելու խնդրում կրթության անընդհանության ու ժառանգորդության ապահովումը, ՀՀ ՊՆ ուսումնական ինստիտուտում ներդրվել և կիրառվում է ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման միասնական բազմատիճան այնպիսի մի համակարգ (տես նկ. 1), որը

թույլ է տախս ապագա երիտասարդ սպաներին հաղորդել գիտենիքների և ունակությունների այն ծավալը, որն անհրաժեշտ է ուսումնառության ընթացքում նրանց առջև դրված վերոհիշյալ խնդիրների կատարման համար:

ԱՊՀ-ում և արտասահմանյան առաջավոր երկրներում (օրինակ՝ ԱՄՆ-ում, ՌԴ-ում և այլն) ներկայումս գոյություն ունեցող կարգի համաձայն ուսումնական բարձրագույն ուսումնական հաստատությունները հաջորդությամբ ավարտողներին, բայց ուսումնական մասնագի-

իովելու, նրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդատու գեներալ-լեյտենանտ Ս. Ա. Աբրահամյանի նախաձեռնությամբ ու անմիջական դեկանավարությամբ ուսումնական ինստիտուտի դեկանավարության և ուսումնամեթոդական բաժնի կողմից, ելնելով անցած հինգ տարիների փորձից, մշակվել և ներդրվել են բոլոր ուսումնական մասնագիտությունների գծով միասնական ուսումնական պլաններ:

Մշակված ուսումնական պլանները



Նկ. 1. ՀՀ ՊՆ ուսումնական ինստիտուտում ուսումնական գործնքայի պլանավորման միասնական բազմատիճան համակարգը

տական կրթությունից, տրվում է նաև քաղաքացիական մասնագիտական որակվորում:

Այդ որակվորումը տրվում է նաև ՀՀ ՊՆ ուսումնական ինստիտուտի շրջանավարտներին, որոնք ուսման չորս տարիներից հետո կզբանական սպայական լիետենանտի կոչման հետ մեկտեղ ստանում են նաև հանրապետությունում ընդունված բարձրագույն մասնագիտական կրթության միջազգային նուատիճան համակարգի առաջին՝ բակալավրի աստիճան:

Ինստիտուտում ուսումնական գործընթացի ամբողջականությունն ապա-

քննարկվել և համաձայնեցվել են ՀՀ ՊՆ համապատասխան գորատեսակների վարչությունների հետ, հաստատվել են ՀՀ պաշտպանության և կրթության ու գիտության նախարարների կողմից:

Ուսումնական պլաններով սահմանված դասընթացները, որոնց քանակը, ուսումնական մասնագիտությունից կախված, կազմում է 36–40 առարկա, բաժանված են չորս հիմնական խմբերի: Այս խմբերից յուրաքանչյուրը, ընդգրկելով ուսման որոշակի ժամարանակ և առարկաներ, ապահովում է հումանիտար, ընդհանուր գիտական և ընդհանուր ինժեներական, ինչպես նաև ուսումնամասնագիտա-

կան ու համապորային պատրաստության բնագավառներում անհրաժեշտ գիտելիքներին կուրսանութիւ տիրապետումը և նրա աշխարհայացքի ձևակորումը:

Հումանիտար, ընդհանուր գիտական և ինժեներական առարկաների բոլոր ծրագրերը լրացուցիչ ենթարկվել են անհրաժեշտ փորձաքննության հանրապետության առաջատար բուհերի (ԵՊՀ, ՀՊՃՀ, գյուղատնտեսական ակադեմիա) մասնագիտական ամբիոններում, ինչը նպաստել է բակալավրական ուսուցման ծրագրերում միասնական պահանջների ապահովմանը:

Սա հանրապետության մյուս բուհերի շարքում ՀՀ ՊՆ ռազմական ինստիտուտի ինտեգրման կարևոր և հիմնական պայմաններից մեկն է:

Նկ. 2-ում բերված է ՀՀ ՊՆ ռազմա-


կան և ռազմատեխնիկական պատրաստության առարկաներ՝ 58–62 %,

4-րդ խումբ. համապորային պատրաստության առարկաներ՝ 6–8 %,

5-րդ խումբ. գորային ստաժավորում՝ 3 %,

6-րդ խումբ. ինստիտուտի պետի ոնքերի՝ 2 %:

Ռազմական ինստիտուտի ուսումնական գործընթացում առանձնապես կարևորվում է այն հանգամանքը, որ կուրսանուները հումանիտար, ընդհանուր գիտական և ընդհանուր ինժեներական, այսինքն՝ բակալավրական ուսուցման գծով հիմնարար գիտելիքներ ստանան ուսման սկզբում՝ հիմնականում 1–2-րդ կուրսերում: Այսպիսի մոտեցումը ոչ միայն համապատասխանում է ներկայումս հանրապետության ինժեներա-



Նկ. 2. ՀՀ ՊՆ ռազմական ինստիտուտում սպայական կադրերի պատրաստման ու բաղարացիական մասնագիտական որակավորման առարկաների խմբերը և դրանց հատկացվող ժամաքանակները տոկոսներով

կան ինստիտուտում սպայական կադրերի պատրաստման և բաղարացիական մասնագիտական որակավորման բակալավրական ուսուցման առարկաների խմբերի ուսումնական ժամերի միջին քանակները տոկոսներով ուսումնառության ընդհանուր ժամաքանակից:

Ինչպիսի երևում է նկ. 2-ից, դրանք կազմում են.

1-ին խումբ. հումանիտար առարկաներ՝ 7–9 %,

2-րդ խումբ. ընդհանուր գիտական և ընդհանուր ինժեներական առարկաներ՝ 18–22 %,

3-րդ խումբ. ռազմամասնագիտա-


տեխնիկական բուհերում այս դասընթացներին ներկայացվող մեթոդական ընդհանուր պահանջներին, այլև նպատում է ինստիտուտում տրվող բաղարացիական համապատասխան մասնագիտական որակավորման ձևակորմանը, ինչպես նաև ավելի բարձր կուրսերում դասավանդվող ռազմամասնագիտական ու ռազմատեխնիկական բարդ առարկաների արդյունավետ յուրացմանը:

Ռազմական ինստիտուտում ուսումնական գործընթացի պլանավորման մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ ուսման շրջան տարիների ընթացքում ռազմատեխնիկական և ռազ-

մամասնագիտական առարկաների ուսուցումը իրականացվում է այնպես, որ յուրաքանչյուր ուսումնական կուրսի ավարտին ապագա սպան ունենա ոչ միայն հրամանատարական պատրաստության տվյալ փուլում պահանջվող ունակությունները, այլև ՀՀ ՊՆ կողմից արտակարգ իրավիճակների համար սահմանված անհրաժեշտ մարտական պատրաստվածություն:

Ռազմական ինստիտուտում մշակ-

նորույթ է այն, որ ինստիտուտի յուրաքանչյուր ուսումնական մասնագիտության ուսումնական պլանը կազմելիս որպես գլխավոր չափանիշ հաշվի է առնվել տվյալ մասնագիտության սպայական կադրերի պատրաստման կառուցվածքատրամաբանական սխեմայի և փուլային պատրաստման պահանջների հիման վրա որոշված առարկաների ուսուցման օպտիմալ ինտենսիվությունը, որը պատկերված է նկ. 3-ում:



Նկ. 3. Հումանիտար, ընդհանուր գիտական ու ընդհանուր ինժեներական (1-ին, 2-րդ խմբեր) և ռազմամասնագիտական, ռազմատեխնիկական ու համագործակի պատրաստության (3-րդ, 4-րդ խմբեր) առարկաների դասավանդման ինտենսիվությունը

ված ուսումնական ծրագրերի առանձնահատկություններից է նաև այն, որ քաղաքացիական մասնագիտական որակավորման քակալավրական ծրագրերի ծավալը չի սահմանափակվում միայն նկ. 2-ում բերված 1-ին և 2-րդ խմբերի առարկաներին հատկացված ընդհանուր ժամաքանակով (25–31 %). այն լրացվում և ամրողացվում է 3-րդ խմբում ընդգրկված ռազմամասնագիտական և ռազմատեխնիկական առարկաների ուսումնական ծրագրերում նախատեսված միջառարկայական կապերն ապահովող համապատասխան բաժիններով:

Ուսումնական գործընթացի պլանավորման աշխատանքներում կարևոր

Աղյուսակ 1-ում համեմատության համար բերված են Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում (նախկին ԵրՊԻ), ՀՀ ՊՆ ռազմական ինստիտուտում և Ռուսաստանի Դաշնության ՀՕՊ-ի ակադեմիայում (Մուկվա) քաղաքացիական որակավորումն ապահովող որոշ առարկաների ժամաքանակները, ինչպես նաև այլ տվյալներ: Աղյուսակից երևում է, որ քակալավրական ուսուցումը նշված բուհերում իրականացվում է հիմնական իրնդիրների լուծման միասնական սկզբունքների կիրառմամբ:

Ռազմական ինստիտուտում ուսուցման դրվագքի մյուս կարևոր ա-

Աղյուսակ 1


ՀՊՃՀ-ում, ՀՀ ՊՆ ՌԻ-ում և ՌԴ ՀՕՊ-ի ակադեմիայում
բակալավրական ուսուցման որոշ առարկաների ժամաքանակները

Առարկա	ՀՊՃՀ	ՀՀ ՊՆ ՌԻ	ՀՕՊ-ի ակադեմիա (Սուվորա)
Հայ. ժող. պատմություն	80	90	—
Իրավագիտություն	40	90	110
Օտար լեզու	160	90	130
Հայոց լեզու	160	112	—
Ուսաց. լեզու	160	90	—
Փիլիսոփայություն	80	60	100
ԷՀՄՆ ծրագրավորում	100	100	70
Խնմեներական գրաֆիկա	100	50	80
Ֆիզիկա և քիմիա	120	100	120
Կիրառական մեխանիկա	140	174	200
Նյութագիտություն	60	50	70
Ելեկտրոնային տարրեր	60	90	130
Ծորաների տեսություն	200	130	180
Ընդհանուր ուսումնական ժամաքանակը	4900	5244	6450
Առարկաների ընդհանուր քանակը	36—40	36—38	40—42
ՈՒսման ընդհանուր տևողությունը (տարի)	4	4	5

ունաճնահատկությունն էլ այն է, որ ուսումնական ծրագրերով նախատեսված
է յուրաքանչյուր կուրսում ՀՀ ՊՆ հաստուկ ուսումնական կենտրոններում
գարնանային և աշնանային ճամբարա-
յին հավաքների, իսկ ավարտական կուր-

սում՝ բանակային կորպուսներում գորային ստատավորման անցկացում:

Նկ. 4-ում պատկերված է ինստի-
տուտի ուսումնական գործընթացի կա-
ռուցվածքը, որտեղից երեսում է, թե ինչ-
պես է բաշխվում չորս տարբա ուսում-



- | Դաշտ | Պահանջման տոկոս | Հարաբ | Պահանջման տոկոս |
|---|-----------------|-----------|-----------------|
| 1. Տեսական, գործնական և դաշտային պարապմունքներ՝ | 70 % | 145 շաբաթ | 7 —— 3 % |
| 2. Զորային ստաժավորում՝ | 15 % | 7 —— | 32 —— 15 % |
| 3. Ջննաշրջաններ՝ | 12 % | 32 —— | 24 —— 12 % |
| 4. Արձակուրդներ՝ | 3 % | 24 —— | |

Նկ. 4. ՈՒսումնական գործընթացի կառուցվածքը

նական շաբաթների ընդհանուր քանակը (208 շաբաթ) ըստ կուրսերի:

Ինստիտուտում պարբերաբար կազմակերպվում են ճամբարային հավաքներ, որոնք նպաստում են դաշտային պայմաններում կուրսանտների կոփիածության և դիմացկունության բարձրացմանը, թույլ են տալիս հետագա հավանական մարտական գործողություններին առավել մոտ իրավիճակներում, տարվա տարրեր եղանակներին և օրվա տարրեր ժամերին անցկացնել ուսումնական ծրագրով պլանավորված անհրաժեշտ գործնական պարագամունքներ, ավելի հանգամանորեն ուսումնասիրել ուսմական տեխնիկան, գենքը, սպառավիճությունը և գործնականում օգտագործել դրանց մարտական հնարավորությունները և շահագործման ձևերը:

Չորային ստաժավորումը ուսմական ինստիտուտում ուսումնական գործնաթացի կարենու մասերից մեկն է, որի

ժամանակ կուրսանտները, հանդես գալով որպես ստորաբաժանումների իրամանատարներ, խորացնում են ինստիտուտում ստացած իրենց տեսական և գործնական գիտելիքները, ամրապնդում են ձեռք բերած իրամանատարական հմտությունները՝ նախապատրաստվելով ապագա սպայական ծառայության:

Ուսումնական գործնաթացի պանագրման նշված մեթոդների կիրառումը բազմապրոֆիլ մասնագիտական ուղղություն ունեցող ուսմական ինստիտուտում թույլ է տալիս սպայական կադրերի պատրաստումն իրականացնել՝ ենթով ինչպես քաղաքայինական ուրակարուման բակալավրական կրթության միասնական պահանջներից, ինչպես նաև հաշվի առնելով տվյալ ուսմական մասնագիտության առանձնահատկությունները և ապահովելով ապագա իրամանատարների մարտական պատրաստականության պատշաճ մակարդակը:

ОФИЦЕРСКИЙ КОРПУС. ПОДГОТОВКА КАДРОВ

ЕДИНАЯ СИСТЕМА ПЛАНИРОВАНИЯ УЧЕБНЫХ ПРОЦЕССОВ И НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ЕЕ ПРИМЕНЕНИЯ В ВОЕННОМ ИНСТИТУТЕ МО РА

Г. К. КОШКАРЯН, подполковник, кандидат технических наук, доцент

РЕЗЮМЕ

На основании 5-летнего опыта деятельности военного института (ВИ) МО РА были разработаны и внедрены единые учебные планы для всех военных специальностей. С учетом опыта функционирования военно-учебных заведений ведущих стран и стран СНГ (следует особо подчеркнуть, что на постсоветском пространстве нет ни одного военного вуза, который бы подобно ВИ МО РА готовил военных специалистов столь широкого спектра профилей), в ВИ МО РА внедрена современная трехуровневая система подготовки военных кадров, при которой успешно окончившим институт лицам, кроме воинских званий, присваивается также квалификация бакалавра по гражданским специальностям. В связи с этим, с учетом специфических особенностей, присущих военно-учебным заведениям, были разработаны и внедрены оптимальный перечень изучаемых общенаучных, общеинженерных и гуманитарных предметов и оптимальная интенсивность их преподавания по годам обучения, соответствующие учебным планам и программам, действующим в ведущих технических вузах республики.

THE OFFICER CORPS. TRAINING OF PERSONNEL

THE COMMON SYSTEM OF PLANNING OF EDUCATIONAL PROCESS AND SOME PECULIARITIES OF ITS APPLICATION IN THE MILITARY INSTITUTE OF MINISTRY OF DEFENSE OF THE RA

G. N. KOSHKARYAN, Lieutenant-Colonel, Candidate of Technical Sciences, Docent

SUMMARY

On the basis of 5-year's experience of activity of the Military Institute (MI) of Ministry of Defense (MoD) of the RA the common educational plans for all military specialties have been developed and adopted. Having in view of the experience of functioning of military-educational establishments of the leading countries and the countries of CIS (it is necessary especially to emphasize, that in post-Soviet territory there is no military high school like MI of MoD of the RA to train military experts of a so wide spectrum of specialties), the modern three-level system of training military staff in MI of MoD of the RA has been put into practice and in case of successfully graduating from the institute except military ranks, qualification of the bachelor on civil specialties is conferred as well. In this connection, in view of specific features inherent in military-educational establishments the optimum list of studying general scientific, general engineering and humanitarian subjects and optimum intensity of their teaching according years of training was developed and introduced appropriate to the educational plans and programs functioning in leading technical high schools of the republic.

ՈԱԶՍԱԿԱՆ ճԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՂՄՈՒԿԻ ԽԼԱԲԱՐՆԵՐ

Ռ. Հ. ԹՈՒՄԱՆՆՅԱՆ, փոխգնդապետ,

Վ. Մ. ԾԱՀՆԱԶԱՐՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վերջին տարիներին շատ երկրներում մեծ թվով աշխատանքներ են կատարվել պատրաստվածքի ձայնային բնութագրիչների ուսումնասիրության ուղղությամբ, ինչն արվել է հրապենի համար աղմուկի խլարարների մշակման նպատակով։ Նման միջոցների պահանջմունք կա շատ պետությունների պին-ված ուժերի հատուկ նախանշանակման բոլոր գորքերում։

Խլարարներում աղմուկի խլացումը կատարվում է գազի հոսքի էներգիայի նվազեցման միջոցով, որը տեղի է ունենում գազերի հոսքի ուղղության բազմակի փոփոխման հաշվին, հոսքը առանձին շիթերի տրոհվելու և խորդութքորդություններ ունեցող մակերնույթների երկայնքով այդ շիթերի ուղղորդման, դրանց սեղմման և ապա ընդարձակման ու սառեցման հաշվին։

Աղմուկի խլարարներն ըստ իրենց գործողության մկրունքի լինում են ոնակտիվ, ակտիվ և համակացված։

Ուսակտիվ խլարարներում ձայնային էներգիայի նվազումն ստացվում է ի հաշիվ ձայնային ալիքների բազմակի անդրադաման։ Ուսակտիվ խլարարներն ըստ կառույցվածքի լինում են խցիկային և ոնպոնանսային։ Խցիկային խլարարներն աշխատում են ձայնային վտիչների մկրունքով։ Ուսպոնանսային խլարարները Հելմիլոցի ձայնային ոնպոնատորի և նրա տարատեսակների տիպի ոնպոնատորներ են. դրանք արտաքին միջավայրի հետ փոքր անցքերի կամ խորվակների միջոցով առնչվող անոթներ են։

Ուսակտիվ խլարարները հիմնականում կիրառվում են ցածր հաճախականությունների աղմուկների խլացման համար աղմուկների խլարարման գործությամբ աղմուկների խլացման հա-


